

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ
ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԿ



«ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության հիմնահարցերը ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոնվենցիայի և զինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող կամընտիր արձանագրության երաշխիքներին համահունչ»

Ձեկույց



Երևան, 2015



Սույն զեկույցը պատրաստվել է **«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների»** հասարակական կազմակերպության կողմից:

Տեղեկատվության հավաքագրման և մշակմանն աջակցելու համար շնորհակալություն ենք հայտնում Հայկ Թադևոսյանին, Անի Աղազյուլյանին, Լուսինե Լալայանին և Հասմիկ Հարությունյանին:



Մայն զեկույցի պատրաստումը հնարավոր է դարձել իրականացնել Միացյալ Ազգերի Կազմակերպության Մանկական Հիմնադրամի աջակցությամբ՝ **«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների»** հասարակական կազմակերպության միջոցով:

Զեկույցի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են **«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների»** ՀԿ-ին և հնարավոր է, որ չհամընկնեն Միացյալ Ազգերի Կազմակերպության Մանկական Հիմնադրամի գրասենյակի տեսակետների հետ:

Բովանդակություն

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	5
ՆԱԽԱԲԱՆ	6
1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ	9
1.1. Ռազմական բախումների ժամանակ և խաղաղ պայմաններում ուսումնական կրթահամալիրների նպատակային նշանակությունը	9
1.2. Զինվորական կրթահամալիրներում տրամադրվող կրթության բնույթը ՄԱԿ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի ու կամրնտիր Արձանագրության երաշխիքների ներքո	12
Աղբբեջան	16
Ռուսաստան	17
Պորտուգալիա	20
Իտալիա	22
Ալբանիա	23
Սերբիա	25
Եզրակացություններ	26
ԵՐԵՄԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԵՐԵՄԱՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ	28
1.3. Ընդհանուր դրույթներ ՀՀ-ում նախագորակոչային պատրաստության վերաբերյալ	28
Նախագորակոչային պատրաստության դասերի կազմակերպումը: Օրենսդրական կարգավորումներ և դիտարկում	33
ՓՈՔՐ ՄՀԵՐ ՌԱԶՄԱՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ	33
Նուբարաշենի մասնաշենք	52
Մոնթե Մելքոնյանի անվան ռազմաուսումնական վարժարան	65
Հանրակրթական դպրոցներ	69

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցը պատրաստվել է՝ հիմք ընդունելով միայնաց փոխընթացող մի քանի մեթոդներ, որոնք հնարավորություն են տվել արդյունավետությամբ մշակել և ներկայացնել հավաքագրված տեղեկատվությունը:

Տեղեկատվության հավաքագրումն ու վերլուծությունը ընդգրկել է հետևյալ փուլերը՝

- **Նախապատրաստական փուլ**, որի ընթացքում իրականացվել է ոլորտին վերաբերող ներպետական օրենսդրության ու միջազգային փաստաթղթերի և ստանդարտների ուսումնասիրություն: Վերջինիս հիման վրա դուրս են բերվել այն խնդրահարույց հարցերը, որոնց հիման վրա պատրաստվել են հարցազրույցի ու դիտարկման հարցաշարերը
- **Տեղեկատվության հավաքման փուլ**՝ դիտարկման և հարցազրույցի միջոցով ՀՀ-ում գործող երեք զինվորական կրթահամալիրներում. կազմակերպության դիտորդները այս փուլում իրականացրել են երկօրյա դիտարկումներ և հարցազրույցներ «Փոքր Մհեր» կրթահամալիրում: Համեմատաբար կարճ դիտարկում և հարցազրույց է իրականացվել միայն տնօրինության հետ Մոնթե Մելքոնյանի անվան կրթահամալիրում: Տիգրան Մեծ կրթահամալիրում հնարավոր չի եղել իրականացնել ոչ դիտարկում, ոչ էլ հարցազրույց, չնայած այն հանգամանքին, որ կազմակերպությունը նախապես դիմել էր դիտարկում իրականացնելու թույլտվություն ստանալու համար:
- **Հետազոտության արդյունքների մշակման, ամփոփման և հրապարկման փուլ**, որի ընթացքում հետազոտվել և ամփոփվել է հավաքագրված տեղեկատվությունը՝ նախապես դուրս բերված ներպետական օրենսդրության և միջազգային ստանդարտների հետ համեմատության միջոցով: Վերջնական փուլում դուրս են բերվել նաև արձանագրված խնդիրները, որոնց հիման վրա կազմակերպությունը ներկայացրել է համապատասխան փոփոխությունների առաջարկություններ

Ուսումնասիրության և տեղեկատվության հավաքագրման փուլում կազմակերպության կողմից պատրաստվել են հատուկ հարցաշարեր՝ հարցազրույցների իրականացման և դիտարկում անցկացնելու համար:

«Փոքր Մհեր» կրթահամալիրում իրականացվել են հարցազրույցներ հետևյալ անձանց հետ՝

- Հարցազրույց կրթահամալիրի կազմակերպչական հարցերով ուսմասվարի հետ
- Հարցազրույց կրթահամալիրի 2 ուսուցիչների հետ

- Հարցազրույց կրթահամալիրի ռազմական պատրաստություն դասավանդող երկու ուսուցիչների հետ
- Հարցազրույց սովորողների կրթահամալիրի ընդունելության հարցերով պատասխանատուի հետ
- Հարցազրույց խոհանոցի և սննդի հարցերով պատասխանատուի հետ
- Հարցազրույց ֆիզիկական պատրաստության հարցերով պատասխանատուի հետ
- Հարցազրույց տնօրենի հետ

Իրականացված դիտարկումը ընդգրկել է՝

- Կրթահամալիրի տարածքի ընդհանուր դիտարկում
- Երեխաների ապրելու պայմանների դիտարկում
- Սովորելու պայմանների դիտարկում/դասապատրաստման հնարավորություններ
- Կահավորանք
- Ռազմական պատրաստության դասասենյակներ
- Խոհանոցի դիտարկում
- Ֆիզիկական պատրաստության համար նախատեսված մարզասրահներ, մարզահրապարակներ

ՆԱԽԱԲԱՆ

Ներկայումս երկրագնդի տարբեր հատվածներում նկատելի են կայուն և պարբերական բնույթ կրող զինված հակամարտություններ և բախումներ: Նման բախումների ու հակամարտությունների բացասական հետևանքները կրողների մեջ անմասն չեն մնում նաև երեխաները: Վերջիններիս դերակատարությունը զինված հակամարտություններին տարբեր դրսևորում կարող է ունենալ: Որոշ դեպքերում անչափահասները ուղղակի մասնակցություն են ունենում ռազմական գործողություններին՝ հարկադրաբար կամ իրենց կամքով որպես զինվորական ներգրավվելով: Որոշ դեպքերում երեխաները մանիպուլյացիայի զոհ են դառնում և աղքատության ու սոցիալական այլ խնդիրների պատճառով համալրում զինված ուժերը¹: Մեկ այլ կրկին խնդրահարույց իրավիճակ է այն դեպքը, երբ թվացյալ խաղաղ պայմաններում անչափահասները նախապատրաստվում են ռազմական ակտիվ գործողություններին մասնակցելուն՝ հատուկ զինվորական կրթություն ու հմտություններ ստանալու միջոցով:

¹ Lessons in War 2015, Military use of Schools and Universities during Armed Conflict, Global Coalition to Protect Education from Attack

Ինչպես այս, այնպես էլ նշված բոլոր դեպքերն անընդունելի են Միավորված Ազգերի Կազմակերպության Երեխաների իրավունքների կոմիտեի կողմից: Նման պրակտիկայի արգելքը բացատրվում է այն հանգամանքով, որ ինչպես ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների մասին Կոնվենցիան /այսուհետ՝ Կոնվենցիա/, այնպես էլ Կոնվենցիային կից՝ Ջինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող կամընտիր Արձանագրությունը երաշխավորում են երեխայի լավագույն շահերից բխող կրթության իրավունքի կազմակերպումը և արգելում զինված բախումներին մասնակցությունը՝ ինչպիսի դրսևորում էլ, որ այն ունենա: Այսինքն, ըստ միջազգային իրավունքի՝ երեխան պետք է ունենա բոլոր հնարավորությունները իր կարիքին համապատասխան կրթություն ստանալու և զարգանալու համար, որի մեջ մտնում է նաև երեխայի մեջ ազդեցիկ, ատելության և ներքին աշխարհի այլ բացասական հատկանիշների զարգացման բացառումը:

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է ինչպես վերոնշյալ Կոնվենցիան, այնպես էլ Արձանագրությունը՝ 2005թ-ի Մարտի 21-ին, որը ուժի մեջ է մտել նույն թվականի Հոկտեմբերի 30-ին: Արձանագրությամբ արգելվում է 18 տարեկանից ցածր տարիքի երեխաների ներգրավվածությունը զինված բախումներին: Այն անդամ երկրներին պարտավորեցնում է ներպետական օրենսդրությունն ու իրավակիրառ պրակտիկան հարմարեցնել Արձանագրության պահանջներին ու սահմանված սկզբունքներին: Այնուհանդերձ, դեռևս առկա են խնդիրներ այդ երաշխիքներն ու սկզբունքները Հայաստանում լիարժեքորեն կյանքի կոչելու հարցում: Մասնավորապես, մտահոգության տեղիք է տալիս այն հանգամանքը, որ գործող զինվորական կրթական համալիրներում 18 տարին չլրացած երեխաները կրթության ընթացքում զենքի կրման ու օգտագործման վերապատրաստումներ են անցնում և ռազմական հմտություններ ձեռք բերում դեռևս վաղ տարիքից: Նույն մտահոգությունը կապված է նաև հանրակրթական դպրոցներում զինվորական պատրաստման դասընթացների հետ: Այս և նմանատիպ այլ խնդիրներ արձանագրվել են ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների Կոմիտեի կողմից²:

Հետազոտության իրականացման ժամանակ Հայաստանի Հանրապետությունում գործել է թվով երեք հանրակրթական ռազմաուսումնական հաստատություն. «Փոքր Միեր» կրթահամալիրը, Մոնթե Մելքոնյանի անվան ուսումնարանը, ինչպես նաև Տիգրան Մեծի անվան ռազմամարզական հատուկ վարժարանը: Քանի որ կազմակերպությանը հաջողվել է դիտարկումներն ու հարցազրույցները անց կացնել միայն առաջին երկու ուսումնական հաստատություններում, ստորև կներկայացվեն բացառապես այդ երկու հաստատություններին վերաբերող իրավական ակտերի կարգավորումները:

² Reporting on the OPSC and OPAC, A Guide for Non-governmental Organizations, NGO Group for the Convention on the Rights of the Child, 2010

ՀՀ կառավարության 11.11.2004թ. 1602-Ն որոշումը՝ «Փոքր Միեր» ոչ պետական առևտրային կազմակերպություն մասին³ որոշմամբ ստեղծվել է «Փոքր Միեր» ուսումնական հաստատությունը:

Ըստ կանոնադրության 9-րդ կետի՝ «Փոքր Միեր» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության նպատակներն են ապահովել այդ թվում նաև հանրակրթական տարրական, հիմնական և միջնակարգ կրթությունը:

Այս որոշմամբ հաստատվել է նաև կրթահամալիրի կանոնադրությունը, որի համաձայն կրթահամալիրի նպատակների մեջ է մտնում նաև սովորողներին ռազմական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ ընդունվելուն և սահմանված կարգով զինվորական ծառայության անցնելուն նախապատրաստելը:

Նպատակներից մեկն է նաև ֆիզիկապես ամուր, դիմացկուն, կարգապահ, հոգեպես կայուն, զինվորական ծառայության դժվարությունները և զրկանքներն աննկուն հաղթահարող անձանց պատրաստումը:

Կրթահամալիրի գործունեության առարկան է նաև ի թիվս այլոց՝ սովորողների համակողմանի կրթությունն ու դաստիարակությունը, նրանց նախազորակոչային պատրաստությունն ապահովելը; բանակումների, արշավների, մրցումների, իրականացվող կրթական այլ ծրագրերից բխող միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը:

ՀՀ կառավարությունը, 1993թ. նոյեմբերի 15-ի №569 որոշմամբ ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության առաջարկությունը, ՀՀ լուսավորության նախարարության ռազմամարզական գիշերօթիկ վարժարանի հիման վրա ստեղծել է ռազմամարզական վարժարան-ուսումնարան համալիր և ի կատարումն վերոնշված որոշման ՀՀ պաշտպանության նախարարի 1994թ. մարտի 14-ի հրամանով ռազմամարզական վարժարան-ուսումնարան համալիրին տրվել է ուսումնական գորամասի կարգավիճակ: 1997թ. հունվարի 27-ի թիվ №26 որոշմամբ ՀՀ կրթության և գիտության նախարարության ռազմամարզական վարժարան-ուսումնարանի համալիրը հանձնվել է ՀՀ պաշտպանության նախարարության ենթակայությանը՝ այն վերակառուցելով Մոնթե Մելքոնյանի անվան ռազմաուսումնական վարժարան: Ներկայումս ՀՀ ՊՆ Մոնթե Մելքոնյանի անվան ռազմական հաստատությունը գտնվում է ՀՀ ՊՆ կադրերի և ռազմական կրթության վարչության ենթակայության տակ, և իրականացվում է ավագ դպրոցի 10-12-րդ դասարանների կրթական ծրագրեր⁴:

Հայաստանի Հանրապետությունում գործում է նաև ոչ պետական հաստատություն, որն իրականացնում է նախնական զինվորապան պատրաստություն տարբեր տարիկային

³ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=13090>

⁴ տե՛ս ՀՀ պաշտպանության նախարարության կայքը. <http://www.mil.am/hy/institutions/59/p/history>.

խմբերի երեխաների համար: Մասնավորապես, «Երկրապահ» հասարակական կազմակերպությունն ունի «Պատանի երկրապահ» և «Երիտասարդ երկրապահ» ակումբները: Երկու ակումբներն էլ նպատակ են հետապնդում ուսուցանել երեխաներին, և ի թիվս այլոց բարձրացնել նրանց ռազմական և ֆիզիկական պատրաստությունը⁵:

Հաշվի առնելով ՀՀ-ում անչափահասների զինվորական կրթության առկա հնարավորություններն ու վերաբերելի միջազգային ստանդարտները՝ սույն ուսումնասիրության միջոցով փորձ է արվում պարզել ՀՀ-ում մինչև 18 տարեկանների՝ կրթության կազմակերպման պրակտիկ խնդիրները ինչպես մասնագիտացված, այնպես էլ հանրակրթական դպրոցներում, վեր հանել և ուսումնասիրել ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը՝ գոյություն ունեցող միջազգային լավագույն փորձի և ընդունված չափանիշների հետ համեմատությամբ: Նման ուսումնասիրությունը նպատակ ունի առկա օրենսդրական և պրակտիկ խնդիրների լուծման համար ներկայացնել առաջարկություններ՝ երեխաների իրավունքների և հատկապես կրթության իրավունքի լիարժեք ապահովման համար:

1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

1.1. Ռազմական բախումների ժամանակ և խաղաղ պայմաններում ուսումնական կրթահամալիրների նպատակային նշանակությունը

Զինված բախումների և հակամարտությունների ժամանակ ռազմական նպատակներով օգտագործված երեխաների կոնկրետ թիվ չի ներկայացվում: Որոշ ուսումնասիրությունների համաձայն 2001 թվականի տվյալներով մոտավորապես 300.000 անչափահաս զինվորականներ են եղել՝ ներգրավված շուրջ 30 զինված բախումների մեջ⁶:

2013թ-ի տվյալներով երկրների թիվը, որտեղ անչափահաս զինվորների թիվը աճել է, կազմում է մոտ 10՝ Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն, Չադ, Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետություն, Սյանմար, Ռուանդա, Սոմալի, Հարավային Սուդան, Սուդան, Սիրիա, Յեմեն: Ընդհանուր առմամբ անչափահաս երեխաների թիվը աճել է 30%-ով⁷:

Ուսումնասիրությունները փաստում են, որ 2005-2015թթ-ի ընթացքում զինված հակամարտությունների մեջ գտնվող առնվազն 26 երկրներից մեծամասնությունում զինված խմբավորումները օգտագործել են և շարունակում են օգտագործել դպրոցները և կրթական

⁵ տե՛ս <http://ejmiatsin.am/mer-qaxaq/hk-ner-ev-akumbner/713--.html> , <http://ekm.am/about-us/charter> , <http://ekm.am/youth-verkrpah>

⁶ Guide to the Optional Protocol on the Involvement of Children in Armed Conflict, Coalition to Stop the Use of Child Soldiers, UNICEF, 2003.

⁷ Holly Frew and Shawn Templeton, World Vision U.S., June 20, 2013, available at <http://www.worldvision.org/news-stories-videos/more-countries-using-child-soldiers>.

այլ հաստատությունները ռազմական նպատակներով⁸: Նման իրավիճակ է տիրում Աֆրիկայում, Ասիայում, Կենտրոնական Երևելքում և Հարավային Ամերիկայում: Ինչը փաստում է, որ դպրոցներն ու կրթական այլ հաստատությունները ակտիվ ռազմական գործողությունների ժամանակ օգտագործելը գլոբալ խնդիր է: Օրինակ՝ 2015թ-ի հունվարի տվյալներով Իրաքի արևոյան պրովինցիաներում մոտ 1500 դպրոց Իսլամական Պետության կողմից վեր է ածվել ռազմական բարաքների⁹: Սիրիայում 2013թ-ից ի վեր մոտ 1000 դպրոց դարձել է ձեռքակալվածներին պահելու վայր ու խոշտանգումների կենտրոն կամ դպրոցները օգտագործվել են որպես կացարան անվտանգության աշխատողների և զինվորականների համար¹⁰:

Հատկանշական է, որ կրթական համալիրները օգտագործվում են ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական զինվորական խմբավորումների կողմից: Նույնիսկ խաղաղապահ առաքելություն իրականացնող խմբերը հաճախ օգտագործում են դպրոցները ռազմական նպատակներով: Որոշ դեպքերում զինված խմբերի կողմից օգտագործվում է կրթական համալիրի մի մասը միայն, մեկ այլ դեպքում՝ այն ամբողջությամբ: Աշակերտները և ուսանողները յուրաքանչյուր դեպքում հանդես են գալիս զոհի դերում, քանի որ դասասենյակներն ու լսարանները գրավելու և ռազմական նպատակով օգտագործելու դեպքում նրանք զրկվում են կրթության բնականոն ընթացքից: Սա կարող է ուղեկցվել նաև նրանով, որ աշակերտները պարտադրված կամ նույնիսկ իրենց կամքով ներգրավվում են ռազմական բուն գործողությունների մեջ, ենթարկվում չարաշահումների և դառնում պատերազմի զոհ:

Սրան զուգահեռ որոշ երկրներում տիրում է վիճակ, որտեղ թվացյալ խաղաղ պայմաններում երեխաները ուղղակի նախապատրաստվում են ապագայում ակտիվ ռազմական գործողություններին՝ կրթություն և ռազմական հմտություններ ստանալով զինվորական կրթական համալիրներում: Որտեղ սակայն ուսուցման մեթոդները ինքնին կարող են հավասարեցվել և հանգեցնել ակտիվ ռազմական գործողությունների ժամանակ երեխաների իրավունքների խախտումներին: Պատահական չէ, որ ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների Կոմիտեն պարբերաբար տարբեր երկրների կապակցությամբ մտահոգություն է հայտնում գործող զինվորական դպրոցների առկայության և դրանց կողմից տրամադրվող կրթության առանձնահատկությունների վերաբերյալ: Այդ երկրների

⁸ Lessons in War 2015, Military Use of Schools and Universities during Armed Conflict, Global Coalition to Protect Education from Attack.

⁹ Manaf Al-Obaidi, “ISIS turns Anbar schools into military barracks,” Asharq al-Awsat, January 23, 2015.

¹⁰ The Syrian Network for Human Rights, “A Report on the Destruction of Schools and Its Consequences,” 2013.

թվին են դասվում Բուրկինա Ֆասոն¹¹, Կուբան¹², Թուրքմենստանը¹³, Մադագասկարը¹⁴, Հայաստանը¹⁵ և այլն:

Նշված երկու դեպքերում էլ, ի թիվս մի շարք այլ խախտումների, խախտվում և խաթարվում է հատկապես երեխաների կրթության իրավունքը: Ակտիվ ռազմական գործողությունների ժամանակ դպրոցներն ու այլ կրթական հաստատությունները փակվում են կամ օգտագործվում որպես ռազմական հենակետներ: Խաղաղ կամ թվացյալ խաղաղ պայմաններում երեխաների կրթության իրավունքը կարող է խախտվել՝ հաշվի առնելով զինվորական կրթական համալիրներում նրանց դերակատարումն ու կրթության մեթոդիկան:

Կրթական համալիրները ռազմական նպատակներով օգտագործելու հետևանքներից են զանգվածային կերպով երեխաների կողմից կրթությունը թողնելը, բարձրագույն ուսումնական հաստատություններ դիմելու պրակտիկայի կրճատումները, կրթական համակարգի ընդհանուր վատթարացումը և որակի իջեցումը, ինչը բացասաբար է ազդում ընդհանուր առմամբ ողջ հասարակության և դրա զարգացման վրա:

Ապահով կրթական համալիրները աշակերտներին ամբողջ կյանքի համար օգտակար տեղեկություն և հմտություններ են փոխանցում, նվազեցնում են պատերազմի հետևանքները և կանխում զինված տարբեր խմբերի կողմից երեխաների հավաքագրումը: Արդյունավետ կրթությունը ինքնին առողջ հասարակության գրավականն է: Կրթության միջոցով է հնարավոր զարգացնել և ձեռք բերել հմտություններ ու գիտելիքներ, որոնք ողջ կյանքում կծառայեն սեփական անձի և հասարակության համար: Ապահովության զգացողությունն ու հանգստությունը անձի մեջ ձևավորում է նաև հանդուրժողականություն և հարգանք մարդու իրավունքների նկատմամբ, մինչդեռ անապահովությունը, ագրեսիան ու ռազմական մթնոլորտը երեխաների հոգեբանությունն ու զարգացումը ոչ բնականոն հունով են տանում և ապագայում ավելի մեծ խնդիրների հանգեցնում:

¹¹ Committee on the Rights of the Child hears reports of Burkina Faso on Sale of Children and on Children and Armed Conflict, 21 January 201, *available in* <http://www.ohchr.org/EN/NewsEvents/Pages/DisplayNews.aspx?NewsID=12939&LangID=E>

¹² Committee on the Rights of the Child considers reports of Cuba on the sale of children and children in armed conflict, 29 September 2015, *available in* <http://www.ohchr.org/EN/NewsEvents/Pages/DisplayNews.aspx?NewsID=16529&LangID=E>

¹³ Committee on Rights of Child examines reports of Turkmenistan under Convention, and on sale of children and children in armed conflict, 14 January 2015, *available in* <http://www.ohchr.org/EN/NewsEvents/Pages/DisplayNews.aspx?NewsID=15483&LangID=E>

¹⁴ Committee on the Rights of the Child considers reports of Madagascar on sale of children and children in armed conflict, 28 September 2015, *available in* <http://www.ohchr.org/EN/NewsEvents/Pages/DisplayNews.aspx?NewsID=16513&LangID=E>

¹⁵ Committee on the Rights of the Child reviews reports of Armenia, 30 May 2013, *available in* <http://www.ohchr.org/EN/NewsEvents/Pages/DisplayNews.aspx?NewsID=13383&LangID=E>

1.2. Զինվորական կրթահամալիրներում տրամադրվող կրթության բնույթը ՄԱԿ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի ու կամընտիր Արձանագրության երաշխիքների ներքո

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 29-րդ հոդվածով նախատեսված է երեխայի կրթության իրավունքն ու կրթության իրավունքի իրականացման երաշխիքները¹⁶: Կոնվենցիայի պրակտիկ կիրառելիության նկատմամբ վերահսկողություն իրականացնող ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի N.1(2001) Կրթության Նպատակների վերաբերյալ Ընդհանուր Մեկնաբանությամբ մանրամասնվում են այդ հոդվածով նախատեսված երաշխիքների բնույթն ու առանձնահատկությունները¹⁷:

Կոնվենցիայի 29.1 հոդվածով մասնավորապես նախատեսվում է, որ երեխայի կրթությունը պետք է ուղղված լինի՝

- Երեխայի անհատականության, տաղանդի և մտավոր ու ֆիզիկական կարողությունների լրիվ ծավալով զարգացմանը
- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, ինչպես նաև ՄԱԿ-ի կանոնադրության մեջ ամրագրված սկզբունքների նկատմամբ հարգանքի դաստիարակմանը
- Երեխայի ծնողների, նրա մշակութային ինքնատիպության, լեզվի և արժեքների, երեխայի բնակության երկրի ազգային արժեքների, նրա ծագման երկրի և իր սեփական քաղաքակրթությունից տարբեր քաղաքակրթությունների հանդեպ հարգանքի դաստիարակմանը
- Երեխային ազատ հասարակության մեջ, փոխըմբռնման, խաղաղության, հանդուրժողականության, տղամարդու և կնոջ իրավահավասարության և բոլոր ժողովուրդների, էթնիկական, ազգային և կրոնական խմբերի, ինչպես նաև բնիկ ազգաբնակչությանը պատկանող անձանց միջև բարեկամության ոգով պատասխանատու կյանքով ապրելուն նախապատրաստելը
- Շրջապատող բնության նկատմամբ հարգանքի դաստիարակմանը

Կոնվենցիայի 29-րդ հոդվածի 1-ին մասի կարևորությունն ու նպատակային նշանակությունը դրսևորվում է մի քանի հարթությամբ: Կրթության նպատակը, ինչպես սահմանված է փաստաթղթում, մարդու արժանապատվությունն ու նրա անօտարելի իրավունքները խթանելն ու պաշտպանելն է: Այդ նպատակը, որը հստակեցվում է հոդվածի 5 կետերում ուղղակիորեն կապված է երեխայի իրավունքների ու արժանապատվության

¹⁶ ՄԱԿ-ի Կոնվենցիա Երեխայի իրավունքների մասին, հասանելի է http://www.un.am/res/UN%20Treaties/III_12.pdf հասցեում

¹⁷ General Comment Ni.1 (2001), Article 29(1): The aims of Education, UN Committee on the Rights of Child

իրականացման հետ՝ հաշվի առնելով նրա հատուկ կարիքներն ու զարգացման տարբեր հնարավորությունները: Ըստ այդմ, հիմնական նպատակից բխող հիմնախնդիրներն են՝

- Ամբողջական ծավալով երեխայի պոտենցիալի զարգացումը
- Մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը
- Ինքնաճանաչման և փոխըմբռնման ունակությունների զարգացում
- Սոցիալիզացում և այլ անձանց հետ հաղորդակցման խթանում

Ըստ էության՝ Կոնվենցիայի 29.1 հոդվածը ոչ միայն լրացնում է նույն Կոնվենցիայի 28-րդ հոդվածով նախատեսված կրթության իրավունքի որակական կողմը, այլ նաև պահանջ է ներկայացնում երեխայակենտրոն և երեխաներին հարմարեցված կրթություն ապահովելու համար:

Յուրաքանչյուր երեխայի համար կրթությունը պետք է երեխային կյանքի հմտություններ տրամադրի և խթանի այնպիսի մշակույթի ու շրջապատի ձևավորմանը, որտեղ մարդու իրավունքները արժեք են հանդիսանում: Ինչը երեխային նաև սեփական անձի նկատմամբ հարգանք ու վստահություն կտա:

Այս իմաստով կրթությունը ավելի խորն ու բովանդակային է դիտարկվում, քան սուկ դպրոցական ֆորմալ առարկայական ուսուցումը: Քանի որ շեշտը դրվում է երեխայի բազմակողմանի զարգացման, պոտենցիալի վեր հանման ու հասարակության մեջ լիիրավ կյանքով ապրելուն նախապատրաստելու վրա:

Երեխայի կրթության իրավունքի տակ հասկացվում է ոչ միայն կրթության հասանելիությունը, այլ նաև կրթության **բովանդակությունը**:

Կրթության կազմակերպումը, որը իր բովանդակությամբ համապատասխանում է 29.1 հոդվածի երաշխիքներին յուրաքանչյուր երեխայի համար գենք է հանդիսանում կյանքի մարտահրավերներին դիմակայելու համար: Նման մարտահրավերները կարող են լինել տեղական բնույթի և գլոբալ, անհատական ու կոլլեկտիվ, կարճաժամկետ ու երկարաժամկետ: Սակայն յուրաքանչյուր դեպքում կրթությունը պետք է այնպես կազմակերպվի, որ երեխաներին նման մարտահրավերները հաղթահարելու ունակություն ու կարողություն տա:

Կոնվենցիայի 29.1 հոդվածով նախատեսված կրթության իրավունքը չի կաշկանդվում կրոնի, ազգության և մշակույթի սահմանափակումներով, ինչը նշանակում է, որ կրթությունը բազմապրոֆիլ արժեքային համակարգում է դիտարկվում:

Կոնվենցիայի 29-րդ հոդվածը առանձնակի ուշադրություն է դարձնում կրթության իրավունքի իրականացման գործընթացին: Մա ներառում է ոչ միայն ուսումնական ծրագրի բովանդակությունը, այլ նաև կրթության կազմակերպումը, կիրառվող մանկավարժական մեթոդներն ու այն միջավայրը, որտեղ տեղի է ունենում կրթության իրավունքի իրականացումը՝ տանը, դպրոցում կամ այլ միջավայրում:

Դպրոց գնալու ուժով ինքնին երեխաները չեն կորցնում իրենց իրավունքները: Օրինակ, կրթության կազմակերպումը պետք է այնպես լինի, որ հարգի երեխաների արժանապատվությունը և հնարավորություն ընձեռի ազատ արտահայտել իր դիրքորոշումները: Նմանապես, կրթությունը պետք է կազմակերպվի այնպես, որ մի կողմից ապահովի և հարգանք ներշնչի կարգապահության նկատմամբ, մյուս կողմից՝ այդ գործընթացը ֆիզիկական բռնություններից զերծ մնա:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն բազմիցս նշել է, որ ֆիզիկական պատժամիջոցները/ծեծը չեն հարգում երեխայի արժանապատվությունը և կարգապահության ապահովման արդարացված միջոց չեն հանդիսանում:

Ըստ այդմ, դպրոցները պետք է երեխայակենտրոն լինեն և խթանեն երեխաների կամավոր և մոտիվացված մասնակցությունը ուսուցման գործընթացին և ոչ թե ստիպեն պարտադրված ներգրավվել դրանում:

Կոնվենցիայի 29-րդ հոդվածի արդյունավետ կիրառումը պահանջում է կրթական ծրագրերի համալիր փոփոխություն և դասագրքերի ու այլ կրթական նյութերի պարբերական վերանայում և դպրոցների քաղաքականության բարելավում: Դպրոցում կիրառվող կրթական մեթոդները պետք է բխեն Կոնվենցիայի նպատակներից:

Դպրոցում տիրող մթնոլորտն ու միջավայրը ինքնին պետք է արտացոլի հանդուրժողականության ու խաղաղության, հավասարության արժեքները: Այն դպրոցները, որտեղ վախի մթնոլորտ է իշխում, թույլատրվում են բռնի գործողություններն ու ճնշումները, ապա խախտում են Կոնվենցիայի 29.1 հոդվածի պահանջները:

Կոնվենցիային կից՝ **Ձինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող արձանագրությամբ** սահմանվում են ռազմական գործողություններին երեխաների ներգրավվածության ու որևէ կերպ մասնակցության արգելքի երաշխիքները: Մասնավորապես, արգելվում է 18 տարեկան չդարձած զինձառայողների ուղղակի մասնակցությունը ռազմական գործողություններին: Արձանագրության 2-րդ հոդվածով էլ սահմանվում է, որ 18 տարեկանը չլրացած անձինք ենթակա չեն պարտադիր զորակոչի իրենց զինված ուժերում:

Արձանագրությամբ նշվում է նաև, որ իրենց ազգային զինված ուժեր 18 տարեկան չդարձած անձանց կամավոր զորակոչը թույլատրող մասնակից պետությունները տրամադրում են երաշխիքներ, որոնք նվազագույնը կապահովեն, որ՝

- Այդպիսի զորակոչն իրականում կրի կամավոր բնույթ, զորակոչը կատարվի ծնողների կամ այդ անձի օրինական խնամակալների գիտակցված համաձայնությամբ
- Այդպիսի անձինք ամբողջությամբ տեղեկացվեն այդպիսի զինվորական ծառայություն կրելու հետ կապված պարտականությունների մասին

- Այդպիսի անձինք, մինչև ազգային զինվորական ծառայության ընդունվելը, ներկայացնեն իրենց տարիքի վերաբերյալ հավաստի վկայություններ¹⁸:

Համադրելով Կոնվենցիայի և Կոնվենցիային կից Արձանագրության նշված դրույթները, ծանոթանալով Կոմիտեի կողմից ուշադրության արժանացող հիմնական հարցերին ու ըստ այդմ տրվող հանձնարարականներին՝ կարող ենք եզրակացնել, որ երեխայի կրթության իրավունքի երաշխիքները ավելի լայն են և մեկնաբանվում են Արձանագրությամբ սահմանված երաշխիքների ներքո նույնպես:

Սրա մասին է վկայում նաև այն, որ Երեխայի իրավունքների կոմիտեն պետություններին ուղղված հարցադրամներում ու հանձնարարականներում, ի թիվս այլ հարցերի, հաճախ բարձրացնում է նաև երեխաների կրթության ապահովման հիմնահարցերը զինված ուժերում, զենքի հետ նրանց շփման պրակտիկան, ուսուցման մեթոդիկան ու բովանդակությունը:

Արձանագրության տեքստից և ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի հանձնարարականներից հետևում է, որ երեխային զինված հակամարտություններին ներգրավվածության վերաբերյալ մտահոգում են նաև հետևյալ հարցերը.

- մինչև 18 տարեկան երեխաների ուսուցումը հատուկ ռազմական ուղղվածություն ունեցող դպրոցներում,
- երեխաներին զենք տրամադրելը, զենք կիրառելու հմտություններ տալը

Կոմիտեին մասնավորապես մտահոգում են հիմնականում հետևյալ հարցերը, որոնք բխում են Կոնվենցիայի 29.1 հոդվածի և կից Արձանագրությամբ նախատեսված երաշխիքներից՝

- արդյոք կրթության որակն ու դասերի իրականացման ընթացակարգային երաշխիքները համապատասխանում են ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով ու կից Արձանագրություններով սահմանված երաշխիքներին,
- զինվորական վերապատրաստումները ինչ բնույթ են կրում ,
- իրականացվում են արդյոք զենքի կրման և օգտագործման հատուկ պատրաստումներ,
- զինվորական կարգապահության և պատիժների առկայություն,
- վատ վերաբերմունքի դեպքում բողոքելու հնարավորությունը:

¹⁸ Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի Կոնվենցիային կից՝ Զինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող կամընտիր արձանագրություն, հոդված 3

Կոմիտեի կողմից հարցադրումների հիման վրա ընդունված չափանիշներն ու արձանագրված խնդիրները ըստ առանձին երկրների ունի հետևյալ պատկերը:

Ադրբեջան

Երեխայի իրավունքների կոմիտեի կողմից Ադրբեջանին ներկայացված զեկույցներում և հանձնարարականներում քանզիցս բարձրացվել է մինչև 18 տարեկան երեխաների զինված ուժերը համալրելու խնդիրը՝ դրանով ընդգծելով անչափահասների կողմից զինված ուժերում ներգրավվածության արգելքը՝ օրենսդրական մակարդակով: Նմանապես, Կոմիտեն ընդգծել է զինվորական դպրոցներում զենքի օգտագործման ու վերապատրաստումների հիմնախնդիրը, ինչպես նաև զինվորական դպրոցներում մատչելի բողոքարկման մեխանիզմների հիմնադրումն ու կիրառումը և դրա մասին երեխաներին իրազեկելը: Ադրբեջանում գործող զինվորական կրթական հաստատությունների կրթական ծրագրերում մարդու իրավունքների մասին ուսուցումն ու միջազգային հումանիտար իրավունքը առանձին տեղ ունեն, սակայն Կոմիտեն կարևորել է Կոնվենցիայի և կից Արձանագրության պարտադիր ներառումը նման ծրագրերում¹⁹:

Ադրբեջանի կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն Օմբուդսմենի ինստիտուտի ներքո գործում է նաև Երեխայի իրավունքների Կենտրոնը, որը հիմնականում զբաղվում է իրազեկվածության բարձրացմամբ՝ ներառյալ նաև Կոնվենցիայի և դրան կից Արձանագրությունների մասով: Ընդհանուր առմամբ Արձանագրության իմպլեմենտացման և ըստ այդմ Կոմիտեին տեղեկատվություն ներկայացնելու հարցում ներգարված են շուրջ 11 կառույցներ: Կոմիտեի կողմից սա արձանագրվել է որպես արդյունավետ կոորդինացման մեխանիզմի բացակայություն: Ավելին, կոորդինացումը բացակայում է նաև երեխաների իրավունքների հարցում պատասխանատու երկու հիմնական մարմինների միջև. Այն է՝ Անչափահասների Ազգային Կոմիսիան և Երեխաների, Կանանց և Ընտանիքի հարցերով Պետական Կոմիտեն: Վերջիններս սակայն իրենց իրավասությունների և գործառույթների հստակության բացակայության հարցում Կոմիտեի մոտ լրացուցիչ մտահոգություն են ստեղծել: Ինչով պայմանավորված առաջարկվել է ուժեղացնել նշված երկու մարմինների լիազորություններն ու միևնույն ժամանակ ստեղծել առանձին մարմին կամ մեխանիզմ, որը պատասխանատվություն կկրի Արձանագրության իմպլեմենտացման և Կոմիտեին զեկույցելու հարցում²⁰:

Երկրում առկա են թվով 3 ռազմական կրթական հաստատություններ /Շեյդար Ալիևի անվան բարձրագույն ռազմական դպրոցը, Ադրբեջանի բարձրագույն ռազմածովային դպրոցը և Նախճիվանսկու անվան ռազմական լիցեյը/: Վերոնշյալ բոլոր

¹⁹ Committee on the Rights of the Child, Concluding Observations on Azerbaijan, 16 January-3 February 2012

²⁰ Consideration of reports submitted by States parties under article 8, paragraph 1, of the Optional Protocol to the Convention on the Rights of the Child on the Involvement of children in armed conflict, Concluding Observations on Azerbaijan, 8 March 2012

հաստատությունները գործում են Պաշտպանության Նախարարության ներքո: Նշված հաստատություններում ընդհանուր առմամբ կրթություն է ստանում շուրջ 2523 ուսանող: 2008թ-ին, 2009-ին և 2010թ-ին համապատասխանաբար 1242, 1239 և 1271 մինչև 18 տարեկան ուսանողներ են եղել: Լիցեյում սովորող կադեթները վերապատրաստվում են երիտասարդների համար նախատեսված հատուկ կարգապահությամբ: Ընդհանուր առմամբ նման հաստատություններում սովորողները զենքի օգտագործման և կրման վերապատրաստումներ են անցնում համապատասխան դասերի ընթացքում և իրականացնում են նաև զենքի օգտագործման հատուկ վարժություններ:

Նշված հաստատություններում սովորողները ռազմական կարգապահության կամ պատժի չեն ենթարկվում: Հատուկ կրթահամալիրների կադեթները Ռազմական երդում տալուց հետո պատասխանատվության են ենթարկվում Զինված ուժերի Կարգապահական Կանոնագրքի հիման վրա: Սակայն կադեթները զինվորական ծառայողի կարգավիճակ չունեն: Նման հաստատություններում կադեթները կարող են սովորել 17 տարեկանը լրանալուց հետո²¹: Արձանագրության նկատմամբ վերահսկողություն իրականացնող Կոմիտեի կողմից ուշադրության ու մտահոգության են արժանացել նաև այն դեպքերը, երբ զինված ուժեր են գորակոչվել զինվորական ակադեմիաներում սովորող երեխաներ, ում 18 տարեկանը դեռ չի լրացել²²:

Հասանելի զեկույցներից պարզ է դարձել նաև, որ սովորական հանրակրթական դպրոցներում երեխաները անցնում են հատուկ առարկա՝ Համալիր ռազմահայրենասիրական վերապատրաստում և զուգահեռ նաև ստանում են ռազմական առանձին դասեր²³:

Ռուսաստան

Ռուսաստանի Դաշնությունում արական սեռի ներկայացուցիչները զինվորական ծառայության նախապատրաստում անցնում են միջնակարգ ընդհանուր ուսումնական հաստատություններում, մասնագիտացված ուսումնական հաստատությունների նախնական և միջնակարգ ուսումնական հաստատություններում՝ ուսման վերջին երկու տարում: Ռազմական ուղղվածություն ունեցող ուսումնական հաստատություններում զինվորական պատրաստվածության բովանդակությունը կազմում է՝

- 70 ժամ տեսական գիտելիքներ

²¹ Committee on the Rights of the Child, 16 January-3 February 2012, Written replies of Azerbaijan, List of issues concerning additional and updated information related to the consideration of the initial report of Azerbaijan

²² Kirsten Sandburg, Committee Rapporteur for the Optional Protocol on Children involved in armed conflict, 18 January 2012

²³ Reliable Future and Azerbaijan NGO Alliance for Child Rights, cited from Defence Spokesperson

- 35 ժամ պրակտիկ վարժություններ /ռազմական բազաներում հնգօրյա վարժական հավաքներ իրականացնելու շրջանակներում/²⁴

Արական սեռի քաղաքացիների նախապատրաստումը իրականացվում է տվյալ հաստատության մանկավարժական կազմի կողմից՝ կրթական չափանիշներին համապատասխան:

Ռուսաստանի Դաշնությունում քաղաքացիների զինձառայության հավաքագրումը իրականացվում է միայն 18 տարեկանը լրանալուց հետո:

Անչափահասներին զինձառայության պատրաստելու համար նախատեսված կրթական հաստատությունները հետևյալներն են՝ նախագահական կադետային, Սուվորովի անվան ռազմական, Նախիմովսկու անվան ռազմածովային կրթական համալիրների ու ռազմական-երաժշտական ու կադետային համալիրների կորպուսները: Սուվորովի անվան ռազմական դպրոցը գտնվում է ՌԴ ցամաքային ուժերի ենթակայության ներքո:

Ընդհանուր սկզբունքի համաձայն ՌԴ-ում ընդհանուր նախնական կրթության տարիքը 6 տարի 6 ամսեկանն է:

Ռազմական կրթահամալիրներում ուսումը սկսվում է 5-րդ դասարանից սկսած, իսկ թույլատրելի մինիմալ տարիքը 10 տարեկանն է:

Զինվորական կրթական համալիրներ իրականացվում է մրցութային հիմունքներով: Սակայն այն երեխաները, որոնք ծնողագուրկ են կամ այլ կերպ զրկված են ծնողական խնամքից մեխանիկորեն ընդունվում են: Կադետային դպրոցները ավելի բարենպաստ են համարվում, քանի որ սոցիալական առումով ավելի լավ պայմաններ են առաջարկում, բացի այդ ավարտելուց հետո աշխատանք գտնելու հարցում աջակցում են: Սակայն կադետային դպրոցներում կարգապահությունը ավելի խիստ է, ուսուցման առարկայական կազմը ավելի քիչ, սակայն ֆիզիկական պատրաստվածության ակտիվությամբ ու բարդությամբ:

5-8-րդ դասարաններում 1 շաբաթում ռազմական կրթության համար հատկացվում է 1 դասաժամ, իսկ 9-11-րդ դասարանների համար՝ 2 դասաժամ:

Զինվորական դպրոցները պարտավոր են հետևել հատուկ կրթական չափանիշներին ու առարկայական կազմին՝ ինչպես նախնական, այնպես էլ միջնակարգ կրթության համար: Միջնակարգ կրթությունը ընդգրկում է ինչպես զինվորական վերապատրաստումներ, այնպես էլ մշակութային պատրաստվածություն, մարմնամարզություն և հեղարվեստ: Զինվորական պատրաստումների ժամանակ երեխաները օգտագործում են Կալաշնիկով տեսակի զենք²⁵:

²⁴ Федеральный закон Российской Федерации от 28 марта 1998 г. N 53-ФЗ "О воинской обязанности и военной службе".

²⁵ State Party Examination of the Russian Federation's Initial Periodic Report on the Optional Protocol on the Involvement of Children in Armed Conflict, 13-31 January

Մասնագիտացված զինվորական կրթական հաստատություններում սովորելու համար նվազագույն տարիքը 16 –ն է²⁶:

Ընդհանուր կրթական համալիրներում սովորողները չեն ենթարկվում զինվորական կարգապահության²⁷: Սակայն, բարձրագույն ուսումնական հաստատությունների բոլոր կուրսասնտների վրա, նաև նրանց, ում 18 տարեկանը չի լրացել, տարածվում է ՌԴ Զինված ուժերի Կարգապահական Կանոնագրքի դրույթները: Վերջիններս կարգավորում են զինվորական կարգապահության, զինճառայողների պարտականությունների, զինվորական պարգևների, ինչպես նաև դիմում-բողոքների քննության հետ կապված հարցերը:

Կրթահամալիրներում սովորողների համար նախատեսված են բողոքարկման որոշակի մեխանիզմներ: Ինչը ներառում է՝

- Բողոք կրթական հաստատության ղեկավարությանը՝ անձամբ կամ օրինական ներկայացուցիչների օգնությամբ
- Բողոք այն պաշտոնատար անձանց, ում ենթարկվում է տվյալ հաստատությունը՝ նամակի միջոցով, հեռախոսով կամ անձամբ կամ օրինական ներկայացուցիչի օգնությամբ
- Բողոք պաշտպանության նախարարին՝ կրկին անձամբ կամ օրինական ներկայացուցիչի միջոցով միայն գրավոր եղանակով
- Բողոք զինվորական դատախազություն
- Զինվորական դատարան

2014 թվականին Երեխայի իրավունքների կոմիտեի 65-րդ նստաշրջանի ընթացքում քննության առարկա է դարձել նաև Ռուսաստանի կողմից Զինված հակամարտություններին երեխաների ներգրավվածության վերաբերյալ ներկայացված զեկույցը, որում ներկայացվել է նաև վերոնշյալ տեղեկատվությունը: Այնուհանդերձ, չնայած ներկայացված տեղեկատվությանը, Կոմիտեի կողմից արձանագրվել են մտահոգության տեղիք տվող որոշակի հարցեր: Մասնավորապես, Կոմիտեն արձանագրել է, որ չնայած Ռուսաստանում զինվորական ծառայության անցնելու օրենքով նախատեսված տարիքը 18-ն է, սակայն պրակտիկայում 16 տարեկան երեխաները ընդունվում են մասնագիտացված զինվորական հաստատություններ և ձեռք բերում զինված ուժերի անդամի կարգավիճակ:

Առանձնակի մտահոգության տեղիք է տվել Ռուսաստանում գործող զինվորական դպրոցների հարցը:

²⁶ “Федеральный закон О воинской обязанности и военной службе” от 28.03.1998 N 53-ФЗ

²⁷ List of issues in relation to the report submitted by the Russian Federation under article 8, paragraph 1, of the Optional Protocol to the Convention on the Rights of the Child on the involvement of children in armed conflict, paragraph 13, CRC, 22 November 2013,

Ինչպես նշվել է Կոմիտեի կողմից՝ 10 տարեկան երեխաները, ովքեր հաճախում են զինվորական դպրոցներ, հիմնական զինվորական վերապատրաստումներ են անցնում: Իսկ 15 տարեկան տղաները սովորական հանրակրթական դպրոցներում կրկին զինվորական վերապատրաստումներ են անցնում և զենքի կրման ու օգտագործման հատուկ վարժություններ իրականացնում: Ավելին, խնամքի կենտրոններ հաճախող 12-15 տարեկան տղաները կամ խոցելի կարգավիճակում գտնվող ընտանիքների երեխաները երբեմն իրենց կամքին հակառակ հաճախում են կադեթային դպրոցներ, ինչի մասին նույնիսկ որոշում չի կայացվում: Ինչպես զինվորական դպրոցներում, այնպես էլ բարձրագույն զինվորական հաստատություններում երեխաները ենթարկվում են զինվորական կարգապահության ու պատժի, երբեմն նույնիսկ ենթարկվում են ճնշումների ու բռնության:

Կոմիտեն արձանագրված իրավիճակի կապակցությամբ հանձնարարական է ներկայացրել վերացնել ու արգելել երեխաների կողմից զինվորական դպրոցներում զենքի օգտագործման վերաբերյալ հատուկ վարժությունները, նմանապես արգելել մինչև 18 տարեկանների հավաքագրումը զինված ուժեր, զինվորական դպրոցներում տիրող խիստ կարգապահությունն ու պատիժները, ինչպես նաև վերացնել իրենց կամքին հակառակ երեխաներին զինվորական դպրոցներում ուսուցանելը²⁸: Միննույն ժամանակ խորհուրդ է տրվել ընդունել մեխանիզմ, որի միջոցով հնարավոր կլինի հավաքագրել Արձանագրությամբ սահմանված երաշխիքները պրակտիկայում կիրառելու վերաբերյալ տեղեկատվությունը:

Պորտուգալիա

Պորտուգալիայի զինված ուժերում գործում է ծառայության 4 տեսակ՝

- Մշտական ծառայություն
- Պայմանագրային զինվորական ծառայություն
- Կամավորներ /12 ամսով, ինչից հետո հնարավոր է դառնալ պայմանագրային զինծառայող/
- Մորիլիզացված կամ գորակոչված զինվորական անձնակազմ, ովքեր համալրում են զինված ուժերը ըստ անհրաժեշտության

Անչափահասների հավաքագրումը զինված ուժեր արգելված է:

Զինված ուժերի մշտական անձնակազմի շարքերը համալրելու համար անհրաժեշտ պայման է հատուկ մասնագիտացված զինվորական դպրոցներում կրթության առկայությունը:

²⁸ CRC, Concluding observations on the report submitted by the Russian Federation under article 8, paragraph 1 of the Optional Protocol to the Convention on the Rights of the Child on the involvement of children in armed conflict, 31 January 2014

Պորտուգալիայում գործում են մի քանի ռազմական բարձրագույն ուսումնական հաստատություններ: Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու համար դիմողները պետք է ավարտած լինեն միջնակարգ դպրոցը²⁹:

Զինվորական ակադեմիաներում առարկաների կազմն ու ժամաքանակը հաստատվում է Պաշտպանության նախարարության ու Գլխության ու Բարձագույն կրթության նախարարության կողմից: Կրթական հաստատությունները ենթարկվում են ինչպես պաշտպանության, այնպես էլ բարձրագույն կրթության նախարարությանը: Դասերը տևում են 5-7 տարի: Սովորողները ենթարկվում են զինվորական կարգապահության:

Բացի բարձրագույն ռազմական ուսումնական հաստատություններից գործում են նաև 3 զինվորական դպրոցներ, որոնք գտնվում են Պաշտպանության նախարարության ենթակայության ներքո: Դպրոցներում սովորում են 18 տարեկանը չլրացած անչափահասները: Վերջիններս զինված ուժերի անձնակազմի անդամ չեն հանդիսանում և չեն կարող զորակոչվել նույնիսկ անհրաժեշտության դեպքում: Անչափահասները իրավունք ունեն ցանկացած պահի թողնել կրթությունը դպրոցում և զինվորական մասնագիտություն չշարունակել: Դպրոցները գտնվում են Պաշտպանության նախարարության հսկողության և Զինված ուժերի պատասխանատվության ներքո: Հիմնական առարկաները սակայն սահմանվում են Կրթության նախարարության կողմից: Զինվորական դպրոցներում տրամադրվում է նախնական կրթություն՝ 10-14 տարեկան անչափահասների համար և միջնակարգ կրթություն՝ 15-17 տարեկան անչափահասների համար:

Կոմիտեն վերոնշյալի կապակցությամբ արձանագրել է, որ մինչև 18 տարեկան աշակերտները Պաշտպանության նախարարության հսկողության և զինված ուժերի պատասխանատվության ներքո գտնվելը խնդիր է:

Զինվորական դպրոցներում սովորող երեխաները զենքի կրման ու օգտագործման վերապատրաստումներ չեն անցնում, սակայն որոշ հաստատություններում, ինչպիսին Զինվորական Քոլեջն է, ռազմական վերապատրաստումը պարտադիր բնույթ է կրում և նույնիսկ 10 տարեկանների կրթական ծրագրերում նախատեսված է պարտադիր զինվորական կարգապահությունը³⁰: Աշակերտները զինվորական դպրոցներում բազմազան առարկաներ սովորելու հնարավորություն ունեն՝ մշակույթ, աշխարհագրություն, պատմություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ և այլն: Առանձնակի ուշադրություն է հատկացվում ֆիզիկական պատրաստվածությանը, ինչի համար դպրոցներում գործում են նաև լողավազաններ, գիմնաստիկ պարապմունքների և տարբեր սպորտաձևերով զբաղվելու հնարավորություններ³¹:

²⁹ Child soldiers global report 2004, Portugal

³⁰ Concluding observations on the report submitted by Portugal under article 8, paragraph 1, of the Optional Protocol to the Convention on the Rights of the Child on the involvement of children in armed conflict, CRC, 31 January 2014

³¹ Ibid 22

Ինչի կապակցությամբ Կոմիտեն խորհրդատվություն է տվել օրենսդրությունը փոփոխել և քրեականացնել երեխաների ներգրավվածությունն ու մասնավոր զինվորական ընկերությունների կողմից երեխաների օգտագործումը ռազմական նպատակներով:

Ընդհանուր առմամբ Պորտուգալիայում գործող զինվորական դպրոցների կրթության և Կոնվենցիային կից Աձանագրությամբ սահմանված երաշխիքների համապատասխանելիության հարցում Կոմիտեն հետևյալ մտահոգություններն է հայտնել՝

- Ձինվորական դպրոցները պետք է գործեն Պաշտպանության նախարարության հսկողության և ենթակայության ներքո, այլ պետք է անցնեն Կրթության նախարարության ենթակայությանը
- Ձինվորական դպրոցներում և քոլեջներում սովորող անչափահասները չպետք է հանդես գան զինվորականի կարգավիճակով և կրեն այդ կարգավիճակից բխող հետևանքները:

Իտալիա

Իտալիայում զինված ուժեր հավաքագրումը իրականացվում է կամավոր հիմունքներով, ինչով պայմանավորված ինչպես զինձառայությունը, այնպես էլ զինվորական կրթությունը որոշակի առանձնահատկություններով են հանդես գալիս:

Իտալիայի ներպետական օրենսդրությամբ արգելված է մինչև 18 տարեկանների հավաքագրումը զինված ուժեր, նմանապես, այդպիսի արգելք է գործում նաև զինվորական դպրոցներում սովորելու համար: Դպրոցները գտնվում են Իտալական Ձինված ուժերի հսկողության ներքո: Սակայն դպրոցում սովորող անչափահասները զինված ուժերի անձնակազմի ներկայացուցիչներ չեն համարվում: Նույնիսկ ռազմական մոբիլիզացման ժամանակ անչափահասները չեն կարող ահավաքագրվել զինված ուժեր:

Իտալիայում գործում են 3 զինվորական դպրոցներ, որտեղ կարող են սովորել 15-ից 17 տարեկանները: Դպրոցներում կամավոր հավաքագրումը նշանակում է սահմանված չափանիշներին համապատասխան ընդունելություն դպրոց, որի նպատակը ռազմական կրթություն ստանալն է: Առանձնակի ուշադրություն է դարձվում դպրոց ընդունվելու ընթացակարգին, ինչի շրջանակներում պարտադիր պայման է անչափահասի ծնողների կողմից երեխայի տարիքի հավաստումը, ինչպես նաև անչափահասի կողմից ներկայացվող դիմումի ստորագրումը: Եթե ծնողները դիմումը չեն ստորագրում, ապա ընդունվելու հայտը մերժվում է: Ընդունակելության համար անչափահասները հանձնում են նաև 5 քննություն՝ ընդհանուր կրթության ստուգում, ֆիզիկական պատրաստավորության ստուգում,

բժշկական զննություն, ընկալունակության ստուգում, ընդհանուր կրթության բանավոր ստուգում³²:

Աշակերտները զինվորական դպրոցներում ստանում են ավանդական և գիտական ոլորտների առարկայական կրթություն, ինչը ներառում է գրականություն, պատմություն, աշխարհագրություն, մաթեմատիկա և այլն: Այս առարկաներին զուգահեռ սովորում են նաև ռազմական պատմություն, առանձնակի ուշադրություն է դարձվում ֆիզիկական պատրաստավածությանն ու վերապատրաստումներին: Նման կրթությունը մասնագիտացված չի համարվում, սակայն համարվում է ռազմական ակադեմիայում կրթության նախապատրաստում:

Ռազմական դպրոցներում սովորողները համարվում են սովորական աշակերտներ, միայն 16 տարեկանը լրանալուց հետո նրանք պարտավորություն են կրում իրենց կամքով 3 տարվա ռազմական պայմանագիր կնքել ուսումը ավարտելու համար: Հակառակ դեպքում դպրոցը ավարտել չեն կարողանա:

Ընդհանուր կրթական ծրագրերից բացի այս դպրոցներում ստանում են նաև զինվորական վերապատրաստումներ, զենքի կրման և օգտագործման պատրաստումներ և մարտավարություն: Զինվորական դպրոց ընդունվելու համար անհրաժեշտ է անչափահասի ծնողների համաձայնությունը և անհրաժեշտ տարիքի հավաստումը:

Ալբանիա

Ալբանիան դասվում է այն երկրների շարքին, որտեղ զինվորական ծառայության երկու հիմնական տեսակ կա: Մասնավորապես՝ պարտադիր ակտիվ զինվորական ծառայություն և պարտադիր այլընտրանքային զինվորական ծառայություն: Երկու դեպքում էլ ծառայությունը իրականացվում է 19-27 տարեկան արական սեռի քաղաքացու կողմից³³: Ընդհանուր կամ մասնակի մոբիլիզացման դեպքում զինված ուժեր կարող են հավաքագրվել նաև 18 տարեկան արական սեռի ներկայացուցիչները: 2009 թվականից ի վեր սակայն պարտադիր ակտիվ զինծառայությունը կտրուկ նվազել է, քանի որ Ալբանիայում զինված ուժերը վերափոխվել է մասնագիտացված զինված ուժերի:

Երեխայի իրավունքների Կոմիտեին ներկայացված զեկույցում արձանագրվել է, որ Ալբանիայում մինչև 18 տարեկանների հավաքագրում զինված ուժեր տեղի չի ունեցել:

Զինված ուժերը նման կերպ համալրելը հանգեցրել է նաև զինվորական կրթության կազմակերպման առանձնահատկություններին: Մասնավորապես, Ալբանիայում զինվորական դպրոցներում սովորելը և զինվորական կրթություն ստանալը հնարավոր է 19 տարեկանը լրանալուց հետո:

³² CRC, Consideration of the reports submitted by states parties under article 8.1 of the optional protocol to the Convention on the Rights of the Child on the involvement of children in armed conflict, Italy, 2004

³³ Law no. 9047, dated 10.07.2003, “For the Military Service in the Republic of Albania”

Կրթական համալիրները, որտեղ հնարավոր է զինվորական կրթություն և մասնագիացում ստանալ, գտնվում են Զինված ուժերի հսկողության ներքո: Կրթությունը զինվորական հաստատություններում կազմակերպվում է հաշվի առնելով զինված ուժերի կարիքներն ու տվյալ կրթական համալիրի հնարավորությունները: Կրթական պլանները հիմնականում կազմվում են զինված ուժերի կողմից:

Ներկայումս գործում է թվով 6 զինվորական կրթական համալիր՝ ակադեմիաներ, մեկ զինվորական դպրոց և մեկ զինվորական համալսարան:

Կրթական համալիրներում հիմնականում սովորում են՝

- Ռազմական կրթություն
- Միջազգային իրավունք
- Մարդասիրական և սահմանադրական իրավունք և այլն

Կրթությունը հիմնականում շեշտը դնում է մարդու իրավունքների ուսուցման և զինված հակամարտությունների ժամանակ հասարակության պաշտպանության վրա:

Յուրաքանչյուր կրթական համալիր բացի կրթության կազմակերպման ընդհանուր սկզբունքներից, ունի նաև իր ներքին կանոններն ու կանոնակարգերը, որոնց նպատակը կրթական հաստատությունում կարգապահության բարձր մակարդակ ապահովելն է³⁴:

Կոմիտեն գնահատել է կրթական համալիրներում միջազգային մարդասիրական իրավունքի դասվանդումն ու ընդգծել դրա կարևորությունը: Միևնույն ժամանակ, սակայն, որպես բաց է արձանագրվել, պետության կողմից Կոնվենցիայի կամընտիր Արձանագրության վերաբերյալ հատուկ ծրագրերի ու դասընթացների բացակայությունը: Ինչով պայմանավորված պետությանը կոչ է արել քայլեր ձեռնարկել Արձանագրության վերաբերյալ տեղեկատվության տարածման ուղղությամբ՝ հատկապես երեխաների շրջանում: Ինչպես նաև առանձին կրթական դասընթացներ կազմակերպել Արձանագրության վերաբերյալ ուժային կառույցների և զինված ուժերի ներկայացուցիչների համար³⁵: Միևնույն ժամանակ Կոմիտեի կողմից առաջարկվել է ստեղծել արդյունավետ ինստիտուցիոնալ կառույց, որը պատասխանատու կլինի Արձանագրության կիրառման և դրանից բխող պարտավորությունների հարցում այլ մարմինների հետ համագործակցության, կոորդինացման ու Կոմիտեին հաշվետվություններ ներկայացնելու հարցում: Ներկայումս այդ աշխատանքների միայն մի մասը իրականացվում է Արտաքին գործերի նախարարության կողմից:

³⁴ Consideration of reports submitted by States parties under article 8, paragraph 1, of the Optional Protocol to the Convention on the Rights of the Child on the involvement of children in armed conflict, Albania, 2011

³⁵ Concluding observation on the initial report of Albania, adopted by the Committee at its sixty-first session (17 September- 5 October 2012), Committee on the Rights of the Child

Մերբիա

Մերբիայում զինված ուժերում ծառայությունը փաստացի սկսվում է 19 տարեկանը լրանալուց հետո: 18 տարեկանից սակայն սկսվում է զինված ուժեր գորացրելու համար բժշկական և այլ հետազոտությունները: 17-18 տարեկանում տեղի է ունենում զինվորական հաշվառումը: Սակայն վերջնական արդյունքում անձը զինվորական ծառայության ֆիզիկապես անցնում է մաիյն 19 տարեկանը լրանալուց հետո:

Մերբիայում սպաների և ենթասպայական կազմի ներկայացուցիչների ռազմական կրթական հաստատություններում և այլ մասնագիտական հաստատություններում զինվորական կրթությունը համարվում է զինվորական ծառայություն: Ջինվորական վերապատրաստումները և դասընթացները իրականացվում են Բելգրադի ռազմական ակադեմիայում և զինվորական ավագ դպրոցում:

Ռազմական ակադեմիան տրամադրում է բարձրագույն կրթություն, որտեղ հաճախում են միայն չափահաս անձիք:

Ջինվորական ավագ դպրոցը տրամադրում է միջնակարգ կրթություն: Միայն արական սեռի ներկայացուցիչները կարող են հաճախել ավագ դպրոց, պայմանով, որ ավարտած լինեն նախնական կրթությունը: Ավագ դպրոցում սովորում են 14-15 տարեկանից սկսած: Ավագ դպրոցը ավարտելուց հետո սաները պետք է կրթությունը և մասնագիտացումը շարունակեն Մերբիայի Պաշտպանության Նախարարության կողմից սահմանված կարգով: Ավագ դպրոցը աշակերտները ավարտում են 18 տարեկանում: Ավագ դպրոցի աշակերտների կարգավիճակը համապատասխանում է զինված ուժերի անձնակազմի կարգավիճակին, իսկ դպրոց ընդունվելն ու սովորելը հավասարազոր է զինված ուժեր անցնելուն: Տարբերությունը կայանում է նրանում, որ աշակերտները դպրոցում զինվորական համազգեստ և զենք չեն կրում:

Դպրոցում առարկայական կազմը հաստատվում է Կրթության Նախարարության կողմից սահմանված չափանիշներին համապատասխան, ինչպես ընդհանուր հանրակրթական դպրոցներում: Ջինվորական դպրոցում սովորելու նպատակը Ջինվորական ակադեմիայում կրթությունը շարունակելու համար աշակերտներին մոտիվացնելն է: Այդ իսկ պատճառով դպրոցը առանձնակի ուշադրություն է հատկացնում զինվորական ծառայության համար անհրաժեշտ ֆիզիկական և հոգեբանական նախապատրաստվածությանը, հայրենասիրությանը և մտավոր կարողությունների զագացմանը³⁶:

Կոմիտեի կողմից որպես մտահոգություն է արձանագրվել այն հանգամանքը, որ զինվորական դպրոց հաճախող երեխաների համար չի գործում անկախ և անկողմնակալ

³⁶ Written replies by the Government of Serbia concerning the list of issues related to the consideration of the initial report of Serbia under article 8, paragraph 1, of the Optional Protocol to the Convention on the Rights of the Child on the Involvement of children in Armed Conflict, Committee on the Rights of the Child, 2010

մարմին, ում հնարավոր կլինի դիմել կրթության հետ կապված բողոքների և խնդիրների առկայության դեպքում³⁷:

Մերբիայում երեխաների իրավունքների պաշտպանության տարբեր կազմակերպությունների կողմից ներկայացված նկատառումների, ինչպես նաև Կոմիտեի կողմից տրված հանձնարարականների համաձայն ավագ դպրոցում կրթությունը զինվորական ծառայության հավասարեցնելը հակասում է Արձանագրությանը: Քանի որ անչափահասները կրթության ընթացքում անցնում են զենքի օգտագործման և զինվորական հատուկ վերապատրաստումներ³⁸:

Արձանագրության վերաբերյալ հատուկ դասընթացներ չեն կազմակերպվել, սակայն երեխաների հետ աշխատող տարբեր ոլորտների պատասխանատուների համար պարբերաբար կազմակերպվում են երեխաների իրավունքների վերաբերյալ դասընթացներ: Ընդհանուր առմամբ Կոնվենցիայի և Արձանագրության մասին հանրության տեղեկացվության աստիճանը գնահատվել է բավականին ցածր: Երկրում գոյություն չունի առանձին, ինքնուրույն մարմին, որը պատասխանատվություն է կրում Արձանագրության կիրառումն ապահովելու և այդ համապատասխան տեղեկատվություն հավաքագրելու համար: Չնայած 2009թվականին Խորհրդարանական խմբակցություններից ձևավորվել է առանձին խումբ, որը պատասխանատու է այդ հարցերով, այնուհանդերձ գործունեության որևէ արդյունք դեռևս նկատելի չէ: Երկրում կա նաև Երեխայի Իրավունքների Խորհուրդ, որը խորհրդակցական բնույթի մարմին է, սակայն Արձանագրության կիրառելիության առնչությամբ որևէ իրավասություն չունի:

Եզրակացություններ

Առանձին երկրների փորձի ու Կոնվենցիայի ու կից Արձանագրության ուսումնասիրությունը թույլ է տալիս դուրս բերել այն հիմնական չափանիշները, որոնք պետք է պահպանվեն երեխաների կրթության իրավունքը ապահովելիս՝ հատկապես զինվորական դպրոցներում:

Զինված հակամարտություններին երեխաների մասնակցության վերաբերյալ կամընտիր արձանագրությունը թույլատրում է, որ անդամ պետություններում գոյություն ունենան զինված ուժերի հսկողության ներքո գտնվող դպրոցներ³⁹: Սակայն, **Կոմիտեն ուշադրություն է դարձնում և պահանջում, որ կրթություն ստանալու ենթատեքստի ներքո անչափահասները նման դպրոցներ հաճախելով՝ չներգրավվեն զինված ուժեր կամ ակտիվ**

³⁷ Consideration of reports submitted by States parties under article 8 of the Optional Protocol to the Convention on the Rights of the Child on the involvement of children in armed conflict, Concluding observations by the Committee on the Rights of the Child: Serbia, 2010

³⁸ Initial Alternative Report on Implementation of Optional Protocol to the Convention on the Rights of the Child on Involvement of Children in armed conflicts, Prepared and submitted by Coalition of civil society organizations, 2009

³⁹ Զինված հակամարտություններին երեխաների ներգրավվածության վերաբերյալ կամընտիր արձանագրություն, հոդված 3.5

մասնակցություն ցուցաբերեն զինվորական գործողություններին: Ջինվորական դպրոցներում կրթության իրականացման համապատասխանելիությունը Կոնվենցիայի և Արձանագրության չափանիշներին յուրաքանչյուր դեպքում ստուգվում է հետևյալ հարցերին տրվող պատասխանների միջոցով՝

- Սովորողների կարգավիճակը՝ արդյոք երեխաները համարվում են զինվորական և զինված ուժեր երեխաների հավաքագրման հավանականությունը
- Ջինվորական դպրոցների ենթակայության, պատասխանատվության և ֆինանսավորման հարցը. դպրոցները գտնվում են Պաշտպանության նախարարության, թե Կրթության և գիտության նախարարության վերահսկողության ներքո
- Ջինվորական դպրոցում տրամադրվող կրթության որակն ու բնույթը՝ արդյոք այն համապատասխանում է Կոնվենցիայի 28 և 29-րդ հոդվածներով նախատեսված երաշխիքներին
- Արդյոք դպրոցի ծրագիրը այնպիսին է, որ հարգանք է սերմանում մարդու իրավունքների նկատմամբ
- Ջինվորական դպրոցում տրամադրվող վերապատրաստումների բնույթը՝ ներառյալ զենքի կիրառումը
- Ջինվորական դպրոցի կարգապահությունը և դպրոցում կիրառվող պատժատեսակները
- Արդյոք սովորողները բողոքարկման մեխանիզմների հասանելիություն ունեն
- Արդյոք երեխաները իրավունք ունեն ցանկացած պահի թողնել դպրոցը և չջարունակել զինվորական մասնագիտացումը
- Խախտումներ թույլ տվող ուսանողները պատասխանատվություն են կրում ընդհանուր կարգով, թե զինվորական դատարաններում
- Արձանագրությունը վավերացրած անդամ երկրներում գոյություն ունի արդյոք ինքնուրույն, բավարար լիազորություններով և ռեսուրսներով օժտված մարմին կամ մեխանիզմ, որը պատասխանատվություն կկրի Արձանագրության կիրառելիության, տեղեկատվության հավաքման և ոլորտի աշխատանքները կոորդինացնելու համար

Այս հարցերի պատասխանները, Կոնվենցիայով ու Արձանագրությամբ սահմանված սկզբունքների ու երաշխիքների պրակտիկ կիրառելիության վերաբերյալ

տեղեկատվությունը անդամ երկրները Կոմիտեին պետք է ներկայացնեն պարբերական զեկույցներ՝ Արձանագրության 8-րդ հոդվածով նախատեսված կարգով⁴⁰:

ԵՐԵՎԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԵՐԵՎԱՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԶԱՅՆ

1.3. Ընդհանուր դրույթներ ՀՀ-ում նախագորակոչային պատրաստության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետությունում երեխաների կրթության, ինչպես նաև ռազմական կրթության ու զինվորական պատրաստության վերաբերյալ օրենսդրական կարգավորումները տրված են հետևյալ ներպետական իրավական ակտերում՝

- «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք⁴¹
- «Կրթության մասին» ՀՀ օրենք⁴²
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք⁴³
- ՀՀ Կառավարության 11.11.2004թ. 1602-Ն որոշումը՝ «Փոքր Միեր» ոչ պետական առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին⁴⁴
- ՀՀ Կառավարության 08.04.2010թ. թիվ 439-Ն որոշումը «Հանրակրթության պետական չափորոշի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, ՀՀ Կառավարության 2004թ մայիսի 27-ի թիվ 771-Ն և հունիսի 17-ի թիվ 900-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին⁴⁵»
- ՀՀ Կառավարության 25.08.1999թ. թիվ 532 որոշումը ՀՀ հանրակրթական դպրոցներում, նախնական/արհեստագործակցական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում նախագորակոչային պատրաստության կարգը հաստատելու մասին⁴⁶

⁴⁰ Զինված հակամարտություններին երեխաների ներգրավվածության վերաբերյալ կամընտիր արձանագրություն, հոդված 8

⁴¹ <http://www.arlis.am/documentview.aspx?docID=69115>

⁴² <http://www.arlis.am/documentview.aspx?docid=66217>

⁴³ <http://www.arlis.am/documentview.aspx?docid=71908>

⁴⁴ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=13090>

⁴⁵ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77183>

⁴⁶ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=91340>

- Ռազմական կրթական հաստատությունների՝ Փոքր Միեր, Մոնթե Մելքոնյան, Տիգրած Մեծ, կանոնադրություններ⁴⁷

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով սահմանվում է երեխային՝ ռազմական գործողություններին, զինված ընդհարումներին ներգրավելու արգելքը, ինչպես նաև՝ երեխաների շրջանում պատերազմի և բռնության քարոզչության, մանկական ռազմականացված միավորումների ստեղծման արգելքը: Արգելվում է մինչև **15 տարեկան երեխայի մասնակցությունը ռազմական գործողություններին**: Այսինքն, ՀՀ օրենսդրությունը արգելում է երեխաներին ներգրավել ռազմական գործունեության մեջ, եթե չի լրացել երեխայի 15 տարեկանը:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ մասնագիտական հանրակրթության դպրոցը ռազմագիտության [...] բնագավառում հանրակրթական հիմնական մասնագիտացված ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության տեսակ է:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 4.1. կետի համաձայն՝ ռազմաուսումնական հաստատություն է համարվում հանրակրթական կամ միջին մասնագիտական կամ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություն, որն ապահովում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը ռազմական կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան: Նույն օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ռազմական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ կարող է հիմնադրել միայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Օրենքի 27-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ կրթության և գիտության նախարարությունն իր իրացատություններն ռազմական կրթության ոլորտում իրականացնում է «պետական համապատասխան լիազորված մարմնի հետ համատեղ»: Ենթադրվում է, որ այդ լիազոր մարմինը ՀՀ պաշտպանության նախարարությունն է: Սակայն հանրակրթական դպրոցներում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի համար գենքը տրամադրվում է ՀՀ ազգային անվտանգության կողմից⁴⁸:

Վերոնշյալից հետևում է, որ ռազմաուսումնական հաստատությունները մասնագիտական հանրակրթական դպրոցներ են, որոնք գտնվում են ՀՀ կրթության և

⁴⁷ Վերոնշյալ կրթական հաստատություններից միայն Փոքր Միեր կրթահամալիրի կանոնադրությունն է հասանելի՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=13090>

⁴⁸ տե՛ս ՀՀ կառավարության 25.08.1999թ. թիվ 532 որոշմամբ հաստատված ՀՀ հանրակրթական դպրոցներում, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում նախազորակոչային պատրաստության կարգը, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=91340> :

գիտության նախարարության վերահսկողության տակ, սակայն վերջինս իր իրավասություններն իրականացնում է ՀՀ ՊՆ-ի հետ համատեղ:

Ռազմաուսումնական հաստատությունները ստեղծվում են բացառապես կառավարության որոշմամբ: Նման իրավասությունը ամրագրված է Կրթության մասին ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով: Ռազմաուսումնական հաստատությունները ստեղծվում են «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով⁴⁹ սահմանված կարգով: Ռազմաուսումնական հաստատություն հիմնադրելիս հատուկ ստանդարտներով կամ սկզբունքներով առաջնորդվելու վերաբերյալ որևէ դրույթ օրենսդրության մեջ չի հայտնաբերվել:

Ներպետական օրենսդրության համաձայն՝ հիմնադրված յուրաքանչյուր հանրակրթական դպրոց կցվում է գորամասի, որը պետք է⁵⁰.

- մշտական օգնություն ցույց տա ՆԶՊ-ի և ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպման գործում.
- կազմակերպի սովորողների այցելություններ գորամաս, զինվորական ուսումնական հաստատություն, բաց դռների օրեր, հանդիպումներ մարտական գործողությունների մասնակիցների, մարտական պատրաստության գերազանցիկների հետ.
- սովորողներին ծանոթացնի ռազմական տեխնիկային, զինծառայողների կյանքին ու կենցաղին.
- պարապմունքների համար տրամադրի հրաձգարաններ, ինքնաձիգ հրազեն, փամփուշտներ, այլ անհրաժեշտ միջոցներ
- օժանդակի ուսումնական հաստատությունների ՆԶՊ-ի ուսումնական ու նյութատեխնիկական բազայի հարստացմանը:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը՝ կայազորների պետերի, գորամասերի հրամանատարների, ռազմաուսումնական հաստատությունների պետերի, կրթական և այլ շահագրգիռ մարմինների հետ համատեղ

⁴⁹ տե՛ս «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը <http://www.arlis.am/documentview.aspx?docid=84895>:

⁵⁰ տե՛ս ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ կրթության և գիտության նախարարության թիվ 13.02..2012թ. թիվ 1222-Ն համատեղ հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության հիմնական, ավագ, միջնակարգ հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, կրթահամալիրներում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների նախագորակոչային պատրաստություն» կանոնադրությունը», <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=73808> , ՀՀ կառավարության 25.08.1999թ. թիվ 532 որոշմամբ հաստատված ՀՀ հանրակրթական դպրոցներում, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում նախագորակոչային պատրաստության կարգը, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=91340> :

սովորողների համար կազմակերպում է մարտական փամփուշտներով հրաձգություն և այլն⁵¹:

ՀՀ կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը, ի թիվս այլ գործառույթների, իրականացնում է վերահսկողություն ուսումնական հաստատություններում ուսումնական զենք և ռազմամթերք պահելու՝ սահմանված կարգի ապահովման նկատմամբ⁵²: ՀՀ ոստիկանությունը ուսումնական հաստատություններում ուսումնասիրում է նաև զենքի պահման պայմանները և հատկացված զենքի և ռազմամթերքի առկայությունը՝ ուսումնական տարվա ընթացքում մեկ անգամ⁵³:

Ուսումնական հաստատությունների (անկախ կազմակերպական - իրավական ձևից և ենթակայությունից) սովորողների նախագորակոչային պատրաստությունն իրականացվում է «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերի, ինչպես նաև ԿԳՆ և ՊՆ համատեղ ընդունված հրամանների հիման վրա⁵⁴:

«Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի անցկացման ընդհանուր դեկավարումն ու հսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը: Սակայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը նույնպես մասնակցում է դասերի իրականացմանը, և ի թիվս մի շարք այլ գործառույթների իրականացնում է հետևյալը.

- գորամասերի հրամանատարների, կրթության ոլորտի և այլ շահագրգիռ մարմինների հետ համատեղ սովորողների համար կազմակերպում է մարտական փամփուշտներով հրաձգություն, ռազմահայրենասիրական խաղեր, մրցումներ, այլ միջոցառումներ,
- կրթական ոլորտի և այլ շահագրգիռ մարմինների հետ ուսումնական հաստատություններում ստեղծում է «Սահմանապահի պատանի ընկերներ» ռազմահայրենասիրական բնույթի ակումբներ և աջակցում ակումբների աշխատանքներին, և այլն⁵⁵:

Կրթական հաստատություններում օգտագործվող ուսումնական զենքի, ռազմամթերքի, փոքր տրամաչափի հրացանների և նրանց փամփուշտների ստացումը,

⁵¹ տե՛ս նույն տեղը:

⁵² տե՛ս, օրինակ ՀՀ կառավարության 25.08.1999թ. 532 որոշման 8-րդ կետի ա) ենթակետը:

⁵³ տե՛ս 13.02.2012թ. թիվ 1222-Ն համատեղ հրամանը:

⁵⁴ տե՛ս նույն տեղը:

⁵⁵ տե՛ս նույն տեղը:

հաշվառումը և պահպանումը իրականացվում է «Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և նրանից բխող իրավական ակտերով սահմանված կարգով⁵⁶:

«Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի նյութատեխնիկական բազան, ի թիվս այլոց, ընդգրկում է նաև ուսումնական զենքն ու ռազմամթերքը, փոքր տրամաչափի հրացանները պահպանելու համար կահավորված զենքի պահպանման սենյակը: Զենքի պահպանման սենյակը տնօրինելու լիազորություն ունի միայն զինղեկը⁵⁷:

Ուսումնական զենքի, ռազմամթերքի, փոքր տրամաչափի հրացանների, նրանց փամփուշտների հաշվառման, պահպանման ու նպատակային օգտագործման, գործնական պարապմունքների անցկացման ընթացքում անվտանգության կանոնների պահպանման համար պատասխանատու է զինվորական ղեկավարը (զինղեկը)⁵⁸:

Ուսուցիչների մասնագիտացվածություն

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որը ստացել է մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ:

Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում զինվորական ղեկավարների և նախնական զինվորական պատրաստության ուսուցիչների ընտրության, համապատասխան հարցաշարերի մշակման և հաստատման գործընթացը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի ու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի համատեղ հրամանով սահմանված կարգով⁵⁹:

Ուսումնական հաստատությունը հայտարարություն է տալիս ուսումնական հաստատության զինվորական ղեկավարի մրցույթի մասին: ՀՀ պաշտպանության նախարարությունը սահմանված ժամկետում պահեստագործի սպաներից ներկայացնում է բարձրագույն ռազմական կրթությամբ կամ բարձրագույն կրթությամբ թեկնածուների տվյալները ուսումնական հաստատության տնօրենին, որն էլ այդ տվյալները ներկայացնում է իր կողմից զինվորական ղեկավարի ընտրության համար ստեղծված հանձնաժողովին: Հանձնաժողովի կազմում պարտադիր ընդգրկվում է տվյալ տարածքի ավագ զինղեկը:

56 տե՛ս նույն տեղը:

57 տե՛ս նույն տեղը, 38-րդ կետի 2-րդ մաս:

58 տե՛ս նույն տեղը, 18-րդ կետի 1-ին ենթակետը:

59 ՀՀ կառավարության 25.08.1999թ. 532 որոշման 1-ին կետի վերջին պարբերություն:

Մրցույթի անցկացման տեսական և գործնական առաջադրանքների հարցաշարը կազմում է ավագ զինղեկը: Ուսումնական հաստատության տնօրենը մրցույթում հաղթած թեկնածուին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակում է ուսումնական հաստատության զինվորական ղեկավար՝ նրա հետ կնքելով համապատասխան աշխատանքային պայմանագիր:⁶⁰

Ուսուցիչները մասնագիտությամբ բարձրագույն ռազմական կրթություն կամ բարձրագույն կրթություն ունեցող պահեստագործի սպաներ են:

Զինվորական ղեկավարների, «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցիչների վերապատրաստումը և ատեստացիան անց է կացվում «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

«Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցիչների և զինվորական ղեկավարների բժշկական գիտելիքների հիմունքների և արտակարգ իրավիճակների ու քաղաքացիական պաշտպանության մասով որակավորման բարձրացումն իրականացնում է լիազոր պետական մարմինը՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունների հետ:⁶¹

Նախագորակոչային պատրաստության դասերի կազմակերպումը: Օրենսդրական կարգավորումներ և դիտարկում

ՓՈՔՐ ՄՀԵՐ ՌԱԶՄԱՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

Ընդհանուր տեղեկատվություն կրթահամալիրի մասին

«Փոքր Մհեր» Կրթահամալիրը հիմնադրվել է 2001 թվականին՝ այն ժամանակ ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի օժանդակությամբ: Այն սկսել է գործել 2002 թ-ին: Ի սկզբանե դպրոցը նախատեսված է եղել մուրացիկ երեխաների համար, սակայն 2005 թվականից այլևս այդ սկզբունքով չի գործում:

Կրթահամալիրը ՊՈԱԿ-ի կարգավիճակ ունի: Նման հաստատություն հնարավոր է ստեղծել միայն Կառավարության որոշմամբ, ֆիզիկական անձիք ինքնուրույն նման կրթական հաստատություն հիմնադրել չեն կարող:

⁶⁰ ՀՀ կառավարության 25.08.1999թ. 532 որոշման 6-րդ կետը, ինչպես նաև 1222-Ն համատեղ հրամանի 17-րդ կետի 5-րդ ենթակետը:

⁶¹ և 13.02.2012թ. թիվ 1222-Ն համատեղ հրամանի 39-40 կետերը:

Կրթահամալիրն ունի հանրակրթական դպրոցի կարգավիճակ, և նրա հիմնական գործառույթը երեխաներին կրթելն ու նախնական զինվորական պատրաստվածություն տալն է, ինչի ծանրաբեռնվածությունը իրականացվում է պետական չափորոշիչներին համապատասխան: Կրթությունը բաղկացած է երկու մասերից. հանրակրթական և նախնական զինվորական:

Կրթահամալիրը չի տրամադրում համալսարանի մակարդակի ռազմագիտությանը վերաբերող գիտելիքներ, մասնագիտական որակավորում նույնպես չի տալիս, այն գիտելիքների հիմնաքարն է դնում, որից հետո երեխայի համար շատ ավելի հեշտ է լինում զինծառայության անցնել: Կրթահամալիրում սովորելը սակայն բանակում ծառայելիս որևէ արտոնություն չի տալիս, պարզապես դպրոցի շրջանավարտ զինվորը հետագայում ավելի հեշտ է սերժանտի կոչում ստանում: Սակայն պետք է նշել, որ նախնական զինվորական պատրաստությունը կրթահամալիրում տարբերվում է հանրակրթական դպրոցների ծրագրերից: Ռազմագիտության ոլորտում ձեռք բերված գիտելիքները սովորողներին նաև օգնում են հեշտությամբ ընդունվել ռազմական մասնագիտական բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Աշակերտները սովորելիս գիշերում են կրթահամալիրում: Հանրակրթական դասերի ավարտից հետո նույնպես շարունակում են մնալ դպրոցում մինչև հունիս ամսվա վերջ, սակայն յուրաքանչյուր շաբաթվա ավարտին մեկ օրով գնում են տուն՝ շաբաթ օրը կեսօրին գնում են, կիրակի երեկոյան՝ վերադառնում: Կան երեխաներ, որոնք մնում են կրթահամալիրում շաբաթ և կիրակի օրերին, քանի որ մարզերից են և հնարավորություն չկա յուրաքանչյուր անգամ տուն գնալու: Ձմեռային արձակուրդների ժամանակ՝ Նոր տարուց առաջ, երեխաները հնարավորություն ունեն տուն գնալ, իսկ դրանից հետո՝ կառավարության կողմից սահմանված առաջին աշխատանքային օրը, երեխաները վերադառնում են դպրոց: Նախատեսված կանոնի համաձայն՝ երեխաներին չի թույլատրվում լքել կրթահամալիրը, սակայն որոշ դեպքերում, օրինակ միակ խնամակալի ծննդյան օրը, կարող են թույլ տալ լքել կրթահամալիրը: Նման հնարավորություն նախատեսված է նաև երեխայի ծննդյան օրվա կապակցությամբ: Երեխաներին տուն տեղափոխող առանձին փոխադրամիջոց նախատեսված չէ:

Դպրոցում կրթություն ստանում են սոցիալապես անապահով ընտանիքների բազմաթիվ երեխաներ, ինչպես նաև հակառակը՝ կան երեխաներ, որոնց ընտանիքը ամեն ինչով ապահովված է, սակայն ծնողները ցանկանում են, որ իրենց երեխան այդտեղ կրթություն ստանա: Կրթահամալիր ընդունվում են նաև զինծառայողների, ազատամարտիկների երեխաները: Դիտարկման պահին կրթահամալիրում սովորող երկկողմանի ծնողագուրկ երեխաներ չեն եղել: Սակայն, պարզվել է, որ խնամակալի գրավոր համաձայնության դեպքում երկկողմանի ծնողագուրկ երեխաները նույնպես կարող են սովորել կրթահամալիրում: Տնօրինության խոսքերով՝ դպրոցը գործում է այն սկզբունքով,

որ մի երեխայի պայմանները մյուսից լավը չլինեն: Այսինքն, կրթությունը հիմնված է հավասարության սկզբունքի վրա՝ նույն պայմանները, նույն հագուստը, ոչ ոք մյուսից առավել չէ, նույնիսկ սոցիալապես տարբեր կարգավիճակում գտնվող երեխաներն ամբողջությամբ հավասար են:

Դպրոցում սովորելը և մնալը անվճար հիմունքներով է, դրսից բերված որևէ սննդատեսակ կամ իր չի թույլատրվում օգտագործել: Տուն գնալուց և գալուց ծնողների հետ կապը պահպանելու համար թույլատրվում է հեռախոս օգտագործել, սակայն կիրակի օրը վերադառնալուց հետո հեռախոսները հանձնվում են հրամանատարին, իսկ շաբաթ օրը տուն գնալիս՝ կրկին վերցնում: Այսինքն, շաբաթվա ընթացքում երեխաները հեռախոսին հասանելիություն չունեն: Տնօրինության խոսքերով՝ սա օգնում է նաև պահպանել հավասարության սկզբունքը բոլոր երեխաների միջև:

«Փոքր Միեր» կրթահամալիրում երեխաները ուսում են ստանում 6-12-րդ դասարաններում: Հանրակրթական դպրոցում 5-րդ դասարանը ավարտելուց հետո երեխան հնարավորություն է ստանում 6-րդ դասարանից ուսումը շարունակել կրթահամալիրում:

Կրթահամալիրը բաժանված է երկու կրթական մասնաշենքերի. մեկը՝ Նուբարաշենում՝ նախատեսված միջնակարգ հանրակրթական ուսուցման՝ 6-8-րդ դասարանների համար: Ավագ հանրակրթական կրթությունը 9-12-րդ դասարանի աշակերտները ստանում են Քանաքեռավանում գտնվող մասնաշենքում: Աշակերտները դասարաններում բաժանված են վաշտերի, դասակների և ջոկերի:

Աշակերտների թույլատրելի քանակը 2 դպրոցներում միասին 267 է: Սակայն, ինչպես պարզվել է ուսումնասիրության պահին, կրթահամալիրում սովորել է թվով 287 աշակերտ: Յուրաքանչյուր դասարանում առավելագույնը սովորում է 14 աշակերտ: Սովորողների ճնշող մեծամասնությունը ազգությամբ հայեր են, սակայն նախկինում եղել են դեպքեր, որ կրթահամալիր ընդունվել են ազգությամբ մասամբ ասորիներ և ռուսներ ևս:

Կրթահամալիրում սովորող երեխաների ամենախնդրահարույց տարիքը 8-9 դասարաններում սովորելու ժամանակահատվածն է, քանի որ ինքնադրսևորման փուլ է հանդիսանում: Վարչակազմի խոսքերով 6-7-րդ դասարանում երեխաները փոքր են, նրանց հետ աշխատելը խնդրահարույց չէ: Իսկ 11-12-րդ դասարանցիները հաստատված են և կրթահամալիրի վարչակազմի համար ավելի քիչ խնդիրներ են ստեղծում:

Կրթահամալիրի խորհրդի կազմը և կանոնադրությունը աչքի է ընկնում որոշակի առանձնահատկություններով: «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն խորհրդի կազմը պետք է լինի 8, սակայն իրականում «Փոքր Միեր» կրթահամալիրի խորհրդի կազմը բաղկացած է 11 անձից: Խորհրդի նախագահը շուրջ 15 տարի է Գևորգ Մալխասյանն է, ով նաև վարչապետի խորհրդականն է հանդիսանում: Խորհրդի անդամները հիմնականում փոխնախարարներ են՝ պաշտպանության փոխնախարարը, փոխտնտիկանապետը և այլն:

Խորհրդի նման կազմը հնարավորությունն է հիմքեր է ստեղծում բոլոր նախարարությունների հետ սերտ համագործակցության համար:

Ռեժիմը

Հանրակրթական ծրագրերի գծով արձակուրդների, հանրակրթական ծրագրերի գծով հանգստի, ինչպես նաև կրթահամալիրի կանոնակարգերով ու խորհրդի որոշումներով նախատեսված այլ օրերին կրթահամալիրի սովորողներին կարող է թույլատրվել սահմանված կարգով բացակայել կրթահամալիրի տարածքից, ինչպես նաև նրանց կարող է տրվել կարճաժամկետ (մինչև 5 օր) արձակուրդ:

Կրթահամալիրում հանգստի օրվա ռեժիմը կարգավորվում է խորհրդի կողմից հաստատված ներքին կարգապահական կանոններով⁶²:

9:00-14:00 հանրակրթական դասեր
14:00-ին ճաշ, կես ժամ հանգիստ
Մինչև ժամը 17:00 դասապատրաստում
17:00-ից ռազմամարզական ուսումնական
դասեր
19:00-ին ընթրիք, որից հետո հանգիստ
22:00-ին քնի ժամ

Երեխաները կրթահամալիրում սովորելիս արթնանում են ժամը 7-ին, լվացվում, իջնում մարզահամալիր: Ժամը 09:00-ից սկսվում է հանրակրթական ուսումնական գործընթացը, ինչը տևում է մինչև ժամը 14:00: Ժամը 14:00-ին ճաշի ժամն է, ճաշից հետո մոտ կես ժամ հանգստանում են, ինչից հետո սկսվում է իրենց դասապատրաստման գործընթացը:

Դասապատրաստում իրականացվում է յուրաքանչյուր ուսումնական օր, որը սկսվում է ժամը 15:00-ին, երբ երեխաները վերադառնում են ճաշից: Դասապատրաստումն իրականացվում է տվյալ դասարանի դասղեկի մասնակցությամբ: Դասապատրաստմանը երեխաների հետ զբաղվում է դպրոցի նույն ուսուցչական կազմը՝ դասղեկների գլխավորությամբ: Եթե դասապատրաստման ընթացքում դասղեկը, ով կոնկրետ մասնագիտական առարկայի դասապատրաստում է իրականացնում, դժվարանում է պատասխանել երեխաների հարցերին, ապա հրավիրում են համապատասխան մասնագետ ուսուցչի, որպեսզի օգնի: Դասապատրաստումն ավարտվում է մոտ ժամը 17:00-ին: Ինչից անմիջապես հետո սկսվում է կեսօրիկը: Վերջինս իրենից ներկայացնում է քաղցր և թեյ կամ

⁶² /Կանոնադրության 35-րդ կետ/:

հյուր: Կեսօրիկից հետո երեխաներն ունեն ռազմամարզական դասընթացներ՝ առաջին օգնություն, ֆիզպատրաստություն, հայրենագիտություն և այլն: Ընթրիքից հետո՝ երեկոյան 19:00-ից հետո, հանգստի ժամ է:

Կրթահամալիրում դասերի ծանրաբեռնվածությունը համապատասխանեցված է երեխայի տարիքին: Ինչպես նշվել է դպրոցի ղեկավարության կողմից, Առողջապահության նախարարության հետ համատեղ կրթության և գիտության նախարարությունը ունի չափորոշիչներ, որոնց էլ դպրոցը հետևում է: Քննություններ հանձնելիս այդ չափորոշիչները նույնպես հաշվի են առնվում: Չափորոշիչների մասին այլ տեղեկատվություն սակայն չի տրամադրվել:

Ընդունելություն

«Փոքր Մեեր» կրթահամալիրի ընդունելության կարգը, սահմանված է կրթահամալիրի Կանոնադրության 28-31 կետերում⁶³: Ըստ նշված կետերի՝ սովորողների ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով: Մրցույթի պայմանները և կրթահամալիր ընդունելության առանձնահատկությունները սահմանում է խորհուրդը, որոնք պետք է նախապես համաձայնեցվեն ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ: Կրթահամալիրի խորհրդի որոշմամբ, առանց մրցույթի, կրթահամալիր կարող են ընդունվել ծառայողական պարտականությունները կատարելիս գոհված զինծառայողների, ինչպես նաև խորհրդի կողմից նախատեսված այլ երեխաներ:

Կրթահամալիր ընդունվելու համար կարող է դիմել երեխայի ծնողը կամ նրա օրինական ներկայացուցիչը: Կրթահամալիր ընդունվելու համար պարտադիր է միայն երեխայի մեկ ծնողի կամ նրա մեկ օրինական ներկայացուցչի, ինչպես նաև երեխայի գրավոր համաձայնությունը:

Կրթահամալիր ընդունված երեխայի և նրա ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի հետ կնքվում է կրթական պայմանագիր՝ համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված օրինակելի ձևի:

Կանոնադրության 9-րդ կետը, որպես կրթահամալիրի նպատակներից մեկն է նշում հանրակրթական տարրական, հիմնական, միջնակարգ, լրացուցիչ ռազմահայրենասիրական ու կրթահամալիրի կանոնադրությամբ նախատեսված կրթական և այլ ծրագրերի իրականացումը, որը կնպաստի անչափահասների, այդ թվում՝ մուրացիկ, թափառաշրջիկ և անապահով երեխաների ռազմահայրենասիրական պատրաստությանը՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության զինված ուժերի համագորային կանոնադրությունները: Մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների ընդունելության վերաբերյալ առանձին կարգ Կանոնադրությամբ սահմանված չէ:

⁶³ տե՛ս կրթահամալիրի կանոնադրությունը <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=65406>:

Կանոնադրության 28-րդ կետի համաձայն՝ իգական սեռի երեխաների կրթության ու կենցաղի առանձնահատկությունները սահմանում է խորհուրդը: Իգական սեռի սովորողների քանակը սահմանափակ է, և այն սահմանվում է խորհրդի որոշմամբ: Կանոնադրության 21-րդ կետի համաձայն՝ 1-4 դասարանների սովորողների թիվը սահմանափակ է, և այն սահմանվում է խորհրդի որոշմամբ: Ընդհանուր ընդունվողների թիվը Կանոնադրությամբ սահմանված չէ, և չկա որևէ կարգավորում, թե ինչպես է սահմանվում այդ թիվը: Ըստ 2010թ.-նի տվյալների՝ ընդունվողների առավելագույն թիվը կազմել է 43-ը, իսկ դիմողների թիվը եղել է 151-ը⁶⁴:

Մարզերից եկողների ընդունելությունը նույն սկզբունքով է իրականացվում: Մինչ ընդունելությունը սովորաբար կրթահամալիր հայտեր ներկայացնելու վերաբերյալ հեռուստատեսությամբ գովազդ է հեռարձակվում և հոդված է տպագրվում թերթում:

Դիտարկման ընթացքում պարզվել է, որ յուրաքանչյուր տարի կրթահամալիրը ստանում է 100-ից ավելի հայտեր: Հայտերը ներկայացվում են թղթային տարբերակով, Էլեկտրոնային տարբերակով հայտ ստանալու հնարավորություն չկա:

Եթե երեխան երկկողմանի ծնողագուրկ է, ապա կրթահամալիր է ընդունվում խնամակալի գրավոր համաձայնությամբ:

Ընդունելության նվազագույն տարիքը 6-րդ դասարանն է, առավելագույնը՝ 12-րդ:

Ընդհանուր առմամբ դիմողների 80-85%-ը ընդունվում է կրթահամալիր, սակայն ոչ բոլորն են հետագայում ռազմական մասնագիտացվածությամբ շարունակում: Օրինակ, 2014թ-ին 33 աշակերտներից 30-ը ավարտելուց հետո ընդունվել է ռազմական բարձրագույն ուսումնական հաստատություն: Ընդունվողների թիվը յուրաքանչյուր տարի տարբեր է: Սակայն տարեցտարի դիմորդների թիվը ավելանում է: Մեծ թիվ են կազմում զինծառայողների երեխաները: 2015թ-ին 12-րդ դասարանում մեկ աշակերտ է ընդունվել, քանի որ մեկ տեղ է նախատեսված եղել: Դպրոցն ունեցել է ընդունելության համար նախատեսված ընդհանուր 54 տեղ, որով պետության կողմից տրված քանակը կլրանար, եթե ավելի մեծ թվով դիմողների ընդունեին: Այնուհանդերձ, դիտարկման պահին թույլատրելի առավելագույն քանակը գերազանցված է եղել՝ նախատեսված 267-ի փոխարեն սովորելիս են եղել 287 աշակերտներ: Աղջիկների ընդունելությունը, չնայած որ նախատեսված է կանոնադրությամբ, պրակտիկայում չի իրականացվում, քանի որ իգական սեռի համար կրթություն ապահովելու պայմաններ չկան:

Կրթահամալիր ընդունելուց առաջ ստուգում են երեխաների առողջական վիճակը: Առողջական խնդիրներ ունեցող երեխաներին, եթե հնարավոր է վերացնել այդ խնդիրը, ընդունում են կրթահամալիր, եթե հնարավոր չէ, հայտը մերժվում է: Դա բացատրվում է

⁶⁴«Փոքր Միեր» կրթահամալիրը ստացել է 151 դիմում, <http://armenpress.am/arm/print/615871/> :

նրանով, որ առողջական խնդիրները ֆիզիկական ծանրաբեռնվածության հետ համատեղելի չեն:

Ընդունվելուց հետո աշակերտները անցնում են փորձաշրջան, եթե երեխաները չեն համակերպվում դպրոցի պայմաններին, ապա նրանք չեն շարունակում ուսումը: Փորձաշրջանը տևում է 1-2 ամիս: Այդ ընթացքում ուսումնասիրում են նաև երեխայի վարքը: Ընդունվելիս հոգեբանը առանձին զրուցում է ինչպես ծնողների, այնպես էլ երեխաների հետ: Եթե անձնական գործից կամ խոսակցություններից ինչ-որ խնդիր է բացահայտվում, ապա հետագա աշխատանքները ըստ այդմ են պլանավորվում:

Ընդունելությունը կազմակերպվում է մրցութային կարգով՝ հանձնում են **հայոց լեզու և մաթեմատիկա** գրավոր քննություններ, ինչպես նաև ֆիզիկական պատրաստվածություն: Ամենից բարձր միավորներ հավաքած աշակերտներն ընդունվում են: Ֆիզիկական պատրաստվածության քննության ընթացքում հանձնում են վազք և ձգումներ պտտաձողի վրա:

Ընդունելության ընթացքում ուսուցիչներից կազմվում է հանձնաժողով, հանձնաժողովի նախագահը դպրոցի տնօրենն է: Քննությունների արդյունքները ստուգվում են հանձնաժողովի անդամների կողմից, ինչից հետո կազմվում է արձանագրություն: Բոլոր գրավոր աշխատանքները պահպանվում են և երեխաներն ունեն բողոքարկելու հնարավորություն: Ինչպես նշել են ուսուցիչները, վերջին 5 տարվա ընթացքում երբևէ բողոքարկման դեպք չի գրանցվել:

Երեխաների ընդունելության գործերի ընդունումը սկսում են հունիսի կեսերից, ընդունելության քննությունները կատարում են օգոստոսի կեսերին՝ միասնական կարգով: Օգոստոսի վերջին տասնօրյակում կրթահամալիրում իրականացվում է փորձաշրջան, բոլոր քննությունները հաղթահարած դիմորդները ընդունվում են որպես հավակնորդ և փորձաշրջան են անցնում: Փորձաշրջանի ընթացքում ուսումնասիրվում է աշակերտի վարքը, կարողությունները, գիտելիքները, պայմաններին հարմարվելու աստիճանը:

Տնօրինությունը նշել է, որ ինչքան ավելի փոքր է երեխան, այնքան դժվար է համակերպվում պայմաններին, կանոններին ու օրակարգին: Քանի որ մեծամասամբ որևէ բան չգիտեն դպրոցի մասին, իրենք չեն ընտրում, ծնողներն են ուղղորդում և բերում դպրոց: Նման դեպքերում, երբ տեսնում են, որ երեխան չի կարողանում սովորել, ապա դիմում են ծնողներին, որպեսզի վերջիններիս որոշման հիման վրա երեխան դադարեցնի կրթությունը կրթահամալիրում: Այդպիսի հարցերում առաջնորդվում են նաև երեխայի ցանկությամբ: Ղեկավարությունը հավաստիացրել է, որ դպրոցը ստիպողաբար ոչ ոքի չի պահում, դպրոցում սովորելը ազատ ընտրությամբ է իրականացվում:

Եղել են դեպքեր, երբ ծնողները երեխային առողջ են ներկայացրել, սակայն հետագայում պարզվել է, որ երեխան խնդիր ունի: Նման դեպքում ծնողին տնօրինությունը ուղղորդում է, որ առողջական խնդիրները լուծեն: Մինչև բժիշկը եզրակացություն չտա, որ

երեխան կարող է մասնակցել բոլոր դասերին, կրթահամալիրը երեխային չի ներգրավում դասերին: Նման դեպքերի պատճառները հիմնականում սոցիալական խնդիրներն ու պայմաններն են, որոնց պատճառով ծնողները նախընտրում են նույնիսկ առողջական խնդրով երեխային ուղղորդել դպրոց, որպեսզի սնվի և տաք վայրում քնի:

Ուսուցիչների ընդունելությունը նույնպես մրցութային կարգով է, բայց, քանի որ կրթահամալիրը նախկինում գոյություն ունեցած N18 հատուկ դպրոցն էր, այդ դպրոցում դասավանդողները պահել են իրենց աշխատանքը և տեղափոխվել այդ դպրոց: Ընդհանուր առմամբ ուսուցիչների մրցույթը անցկացվում է երեք փուլով՝ հայտարարության հիման վրա իրականավոր մրցույթի միջոցով: Օրինակ, վերջերս աշխատանքի է ընդունվել պատմության ուսուցչուհի: Իսկ հայտարարությունը տարածվում է կայքերի միջոցով, որտեղ նախապես դրվում է ՝ ինչպես երեխաների, այնպես էլ ուսուցիչների ընդունելության մրցույթի վերաբերյալ տեղեկատվություն դեպքում:

Ուսումնական ծրագրեր

Կրթահամալիրը գտնվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության վերահսկողության տակ, սակայն ուսումնական պլաններ կազմելու լիազորությունների շրջանակը բավականին լայն են, քանի որ հաստատությունը, բացի հանրակրթական ծրագրով սահմանված դասերից, երեխաներին տրամադրում է նաև ռազմական պատրաստության վերաբերող կրթություն:

Կրթահամալիրն ըստ կրթական մակարդակների իրականացնում է հանրակրթական տարրական, հիմնական, միջնակարգ, նախազորակոչային, ինչպես նաև ոչ հանրակրթական ծրագրեր⁶⁵:

Կրթահամալիրում միջնակարգ կրթության նորմատիվային ժամկետը 12 տարի է, և բաժանված է եռաստիճան համակարգի՝ 1-ին աստիճան՝ 4 տարի, 1-4-րդ դասարաններ, 2-րդ աստիճան՝ 5 տարի, 5-9-րդ դասարաններ, 3-րդ աստիճան՝ 3 տարի, 10-12-րդ դասարաններ⁶⁶: «Փոքր Միեր»-ում յուրաքանչյուր դասարան բաժանված է դասակի: Յուրաքանչյուր դասակում կա 2 ջոկ: Յուրաքանչյուր ջոկ ունի իր անվանումը օրինակ՝ Ֆիդայական ջոկ, Սարդարապատի ջոկ, Արցախյան ջոկ և այլն:

Կրթահամալիրն իր հանրակրթական ուսումնական պլանները կազմում է, հիմք ընդունելով օրինակելի ուսումնական պլանները, սակայն որպես ռազմագիտության բնագավառում մասնագիտացված հանրակրթական ուսումնական հաստատություն՝ կրթահամալիրի ուսումնական պլաններում ու դասացուցակներում դասաժամերի՝ **մինչև երեսուն տոկոսը հատկացվում է ռազմագիտական ծրագրերի իրականացմանը**, որոնք պետք

⁶⁵ տե՛ս ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից ընդունված 14.11.2014թ. «Ռազմաուսումնական բնագավառի հանրակրթական հիմնական ծրագրերը հաստատելու մասն» թիվ 1102-Ս/Ք հրամանով:

⁶⁶ տե՛ս կրթահամալիրի կանոնադրությունը:

է նախապէս համաձայնեցվեն ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ, ինչպէս նաև սովորողներին ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվելուն ուղղված կրթական ծրագրերի իրականացմանը:

Ինչպէս պարզվել է ուսումնասիրության արդյունքում, «Փոքր Միեր» կրթահամալիրի ուսումնական ծրագրերը պատրաստվել են սեփական միջոցներով և մասնագիտական ռեսուրսներով: Կրթության և գիտության նախարարությունը միայն հաստատել է պատրաստված ծրագրերը: Ռազմական գծով դասերի ծրագրերը կազմել են Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի և Ազգային ինստիտուտի հետ համագործակցությամբ: Ծրագրերը կազմվել են՝ աշխատելով ռազմական ինստիտուտի յուրաքանչյուր առարկայի ամբիոնի ղեկավարների հետ: Այդ ընթացքում Կրթության և գիտության նախարարությունից օգնություն ու աջակցություն չի ստացվել, քանի որ նախարարությունը նման մասնագիտացում ունեցող մասնագետներ չի կարողացել տրամադրել: Հաստատված ծրագրերը առաջին մեկ տարում փորձնական բնույթի են եղել:

Ոչ ռազմական առարկաներից անցնում են այն բոլոր առարկաները, որոնք անցնում են հանրակրթական կրթության ընթացքում: Կրթությունն իրականացվում է կրթության նախարարության համապատասխան հրամաններին համաձայն: Դասավանդումն իրականացվում է բարձրագույն կրթություն և մանկավարժի որակավորում ունեցող մասնագետների կողմից: Անհրաժեշտ են նույն չափորոշիչները, ինչ հանրակրթական դպրոցների համար:

Հայոց պատմություն ուսումնական առարկան, օրինակ, անցնում են շաբաթական 2 անգամ, համաշխարհային պատմություն՝ 1 անգամ, Եկեղեցու պատմություն՝ կրկին 1 անգամ: Ինչպէս տեղեկացանք, եկեղեցու պատմության ժամերին հատուկ ուշադրություն են հատկացնում Հայ Առաքելական եկեղեցուն: Բոլոր աշակերտները հայ առաքելական եկեղեցու հետևորդ են: Եթե այլ մոտեցում է լինում, ապա ուսուցիչը զրուցում է երեխայի հետ: Երեխաների կարծիքը և մոտեցումը չեն փոխում, բայց երեխաների հետ տարվում է բացատրական աշխատանքներ, որից հետո երեխան ինքն է կողմնորոշվում տվյալ հարցի շուրջ:

Սովորողների համար կրթահամալիրում կազմակերպվում են նախագորակոչային կրթական ծրագրեր, որի կարգը սահմանվում է խորհրդի կողմից և հաստատվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից:

Որպէս այդպիսին անցնում են Նախնական զինվորական պատրաստում: ՆԶՊ-ի դասագիրքը կազմված է 7 բաժիններից: Յուրաքանչյուր բաժնի հիման վրա կրթահամալիրի մասնագետների կողմից մի քանի ամիս շարունակ աշխատանքի արդյունքում ստեղծվել է առանձին ծրագիր: Ծրագիր ստեղծելու ընթացքում համագործակցել են Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ուսումնարանի հետ: Պատրաստ լինելուց հետո ծրագիրը ներկայացվել է

Կրթության և գիտության ազգային ակադեմիային, որը հավանություն է տվել, ինչից հետո ծրագիրը հաստատվել է Կրթության և գիտության նախարարության կողմից:

Երեխաների համար կազմակերպվում են նաև սեմինար-պարապունքներ: Օրինակ, Արտակարգ իրավիճակների դասընթացների ընթացքում կազմակերպվում են գործնական դասընթացներ Կարմիր Խաչի աշխատակիցների մասնակցությամբ, որի ժամանակ իրականացվում են կոնկրետ իրավիճակներ օգտագործելով՝ մանեկներ:

Աշակերտների գիտելիքները ստուգում են տարեսկզբին և տարեվերջին:

Հանրակրթական ուսումնական ծրագրերի ավարտից կամ յուրացումից հետո կամ այդ ծրագրերի հետ համատեղ սովորողների համար իրականացվում են ոչ հանրակրթական, նախագորակոչային, ինչպես նաև կանոնադրությամբ նախատեսված այլ կրթական ծրագրեր, որոնք կրթական գործընթացի շարունակությունն են: Ոչ հանրակրթական և այլ կրթական ծրագրերի իրականացման կարգը, պայմանները և պարապունքների տևողությունը սահմանում է խորհուրդը, որոնք պետք է նախապես համաձայնեցվեն ԿԳՆ-ի հետ:

Կրթահամալիրի 3-րդ աստիճանի (10-12-րդ դասարաններ) այն սովորողների համար, որոնք չեն կարող կամ չեն ցանկանում իրենց ուսումը շարունակել այլ ուսումնական հաստատություններում (այսինքն, ստանալ բարձրագույն կրթություն), ինչպես նաև սովորողների ցանկությամբ՝ կազմակերպվում են նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր կամ տրանսպորտային միջոցների վարորդների ուսուցման ծրագրեր, կամ նրանք կարող են օրվա որոշակի ժամերին գործուղվել նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություններ: Սա նշանակում է նաև, որ երեխաները կրթահամալիրը ավարտելուց հետո **պարտավոր չեն** շարունակել նրանց ուսուցումը ռազմական մասնագիտացումը:

Կրթահամալիրում հանրակրթական ծրագրերի գծով ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից: Հանրակրթական ծրագրերի գծով ուսումնական շաբաթը 6-օրյա է: Դասերի, պարապունքների, դասամիջոցների տևողությունը որոշվում է դասացուցակով: Հանրակրթական ծրագրերի գծով ուսումնական տարվա տևողությունը 34 շաբաթ է: Հանրակրթական ծրագրերի գծով ուսումնական տարին ընդգրկում է չորս քառորդ: Ուսումնական քառորդների և նրանց միջև ընկած արձակուրդների տևողությունը որոշվում է ուսումնական պլանով:

Ոչ հանրակրթական ծրագրերի գծով ուսման տարվա տևողությունը **52 շաբաթ է:**

Սովորողները կրթահամալիրում պետք է գտնվեն շուրջօրյա և ամբողջ տարին:

Սովորողների հանրակրթական ծրագրերի գծով պարապունքները տեղի են ունենում հանրակրթության պետական չափորոշիչի և պետական ուսումնական պլանի համաձայն: Ոչ հանրակրթական ու այլ կրթական ծրագրերի գծով պարապունքները տեղի

են ունենում խորհրդի կողմից հաստատված և ԿԳՆ-ի կողմից համաձայնեցված դասացուցակին համապատասխան:

Կրթահամալիրում սովորողների կացությունը, լրացուցիչ կրթական ծրագրերն ու հանգիստը կազմակերպվում են հաստատության խորհրդի կողմից սահմանված ԿԳՆ-ի կողմից համաձայնեցված կարգով: Միննույն ժամանակ, կանոնադրությունը սահմանում է որ **իզական սեռի և մինչև 10 տարեկան սովորողների կրթությունն ու հանգիստը պետք է ունենա առանձնահատկություններ**, և դա սահմանում է խորհուրդը՝ համաձայնեցնելով ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ:

Որոշ դեպքերում՝ առանձին առարկաների դասաժամերին դասարանը կարող է բաժանվել խմբերի, և **խմբային ուսուցումը կարող է կազմակերպվել նաև ուսումնասարտադրական, փորձարարական, ռազմամարզական բազաներում և ճամբարներում:**

Հանրակրթական ծրագրերի գծով արձակուրդների ժամանակ կազմակերպվում են ոչ հանրակրթական, այլ կրթական, ուսումնամարզական, մշակութային ու այլ ծրագրեր, բանակումներ, երթեր, ճամբարներ, գիտահանրամատչելի, զբոսաշրջային կամ այլ միջոցառումներ:

Կրթահամալիրից սովորողին այլ կրթահամալիր տեղափոխելը և (կամ) ազատելը (կրթահամալիրից հեռացնելը) կատարվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված կարգով:

Կանոնադրության վերլուծությունից հետևում է, որ կրթահամալիրում ուսումնական տարին 52 շաբաթ է, և բացի հանրակրթական ծրագրերից վերջիններիս ուսումնական ծրագիրը ծանրաբեռված է նաև այլ առարկաներով, սակայն կանոնադրությունից պարզ չէ, այդ առարկաների բովանդակությունն ու ուսուցման կարգը: Բացի այդ, հանրակրթական դպրոցներում սովորողների ծանրաբեռվածությունը կախված է նրանց տարիքից, և տարրական, հիմնական դասարանները ավելի քիչ են լինում ծանրաբեռված, քանի միջնակարգ /ավագ դպրոցի/ դասարանների աշակերտները: Հետևաբար, ենթադրվում է որ անկախ կրթահամալիրի առանձնահատկություններից, այնտեղ սովորողների ծանրաբեռվածության և ուսումնական ծրագրերի մեջ պետք է նույնպես լինի տարբերություն: Սակայն քանի որ առարկայական ծրագրերը, որոնք վերաբերում են սովորողների ռազմական կրթության հասանելի չեն, հնարավոր չէ գնահատել նրանց համաչափությունը:

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ընդունված 14.11.2014թ. «Ռազմաուսումնական բնագավառի հանրակրթական հիմնական ծրագրերը հասատելու մասին» թիվ 1102-Ա/Ք հրամանով հաստատվել են ռազմաուսումնական բնագավառի հանրակրթական հիմնական մասնագիտացված առարկաները: Այդ առարկաները գրեթե ամբողջությամբ համապատասխանում են «Նախնական զինվորական պատրաստություն»

առարկայի բովանդակությանը, սակայն պետք է նշել, որ առարկաները անցնում են խորացված և ավելի մասնագիտացված կարգով: Ի թիվս այդ առարկաների, որոնք ներառված են «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի մեջ, Հրամանով հաստատվել են նաև «Ռազմարվեստի պատմություն» առարկայի 8-12-րդ դասարանների, «Ռազմական ինժեներական պատրաստություն» առարկայի 11-րդ դասարանի, ինչպես նաև «Մարտավարության հիմունքներ» առարկայի 9-11-րդ դասարանների և «Մարտական պատրաստություն (Ձեռնամարտ)» առարկայի 6-11-րդ դասարանների մասնագիտացված ծրագրերը:

Ֆիզիկական պատրաստվածության դասերը անց են կացվում հանրակրթական դպրոցի ժամերին համապատասխան՝ գումարած նաև լրացուցիչ դասեր:

Եթե երեխան վատառողջ է, տանում են բուժկետ և եթե բժիշկը գտնում է, որ երեխան չի կարող մասնացել ֆիզիկական պատրաստվածության դասերին, ապա նա դասերից ազատվում է որոշակի ժամանակով: Կան նաև անհատական ֆիզիկական պատրաստվածության դասընթացներ, օրինակ՝ եթե աշակերտը թույլ է և չի հասցնում: Ֆիզիկական պատրաստվածությունը իրականացվում է երեխաների տարիքին համապատասխան գիտության, կրթության և առողջապահության նախարարությունների կողմից մշակված նորմերին համապատասխան:

Առարկայական ծրագրեր

Դասավանդվող յուրաքանչյուր առարկա ունի իր առարկայական ծրագիրը, որը սահմանված է դասագրքերով: Եթե առարկան այնպիսին է, որ ուժի կամ զենքի կիրառման վարժություններ կան, ապա առաջին դասաժամին միշտ դասավանդվում են անվտանգության կանոնները, այնուհետև՝ կատարում են պրակտիկ աշխատանքներ: Թեմաները մանրամասն կերպով ներկայացված են դասագրքերում:

Հանրակրթական առարկաները նույնն են, ինչ հանրակրթական դպրոցներում՝ առարկայական կազմով և դասագրքերով հանդերձ: Միակ տարբերությունը նրանում է, որ առարկաների պլանները կազմում են ԲՈՒՀ-երի մեթոդական ծրագրերի նման: Ռազմական առարկաների համար նման պլաններ չեն գործում, որովհետև չկան օրենքով սահմանված պարտադիր չափորոշիչներ:

Զինվորական պատրաստության առարկայական ծրագիր

Նախնական զինվորական պատրաստություն առարկան անցնում են 6-րդ դասարանից, այդ տարիքում սակայն այն տարրական բնույթ է կրում: Պետք է նշել, որ «Փոքր Մհեր» ռազմաուսումնական կրթահամալիրում ՆԶՊ առարկան տարբերվում է հանրակրթական դպրոցներում դասավանդվող առարկային: Այսպես, չնայած սովորողները

կրթահամալիրում հանրակրթական ծրագրով արդեն անցնում են «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան, որպես պարտադիր հանրակրթական առարկա, նրանք նաև ՆԶՊ-ի յոթ բաժինները խորացված կարգով անցնում են նաև ոչ հանրակրթական ծրագրերի շրջանակներում: Այդ յոթ բաժինները դասավանդվում են որպես առանձին մասնագիտական առարկաներ, որոնցից յուրաքանչյուրի համար նախատեսված է առանձին ուսուցիչ:

Այդ բաժիններն են՝

1. Կրակային պատրաստություն
2. Մարտավարություն
3. Առաջին բուժօգնություն՝ դասավանդում են կարմիր խաչի մասնագետները
4. Արտակարգ իրավիճակներ՝ անց է կացնում արտակարգ իրավիճակների նախարարության մասնագետների կողմից
5. Տեղագրություն՝ մասնագետը տարիներ շարունակ փորձ ունեցող մասնագետ է, ինքն է կազմակերպում ուրիշների համար դասընթացներ
6. Ինժեներական գործ
7. Շարային պատրաստություն

Բացի այս առարկաներից սովորողները որպես առանձին առարկա են անցնում նաև «Ռազմական ինժեներական պատրաստություն» և «Ռազմարվեստի պատմություն» առարկանրը: Ինչպես երևում է, սովորողները առանձին չեն անցնում «Միջազգային մարդասիրական իրավունք» բաժինը, որը նույնպես հանդիսանում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի բաժիններից մեկը» Պետք է նշել նաև, որ «Մարտավարությունը» բաղկացած է երկու տարբեր առարկաներից «Մարտավարության հիմունքներ» և «Մարտական պատրաստություն (Ձեռնամարտ)» առարկաներից: Ընդ որում, եթե առաջինն անցնում են 9-11-րդ դասարաններում, ապա երկրորդը նախատեսված 6-11-րդ դասարանի երեխաների համար:

Բաժինները դասավանդվում են փորձառություն ունեցող մասնագետների կողմից, ովքեր աշխատում են մասնագիտացված ռազմական բարձրագույն ուսումնական հաստատություններում: Վերջիններս կրթահամալիրում աշխատում են համատեղությամբ:

Տեղագրությունն իրենից ներկայացնում է տարածքում կողմնորոշվելու հմտությունների ուսուցումն ու քարտեզի հետ աշխատել կարողանալը:

Առաջին բուժօգնությունը դասավանդում են Կարմիր Խաչի մասնագետները, անհրաժեշտ գույքը իրենց հետ բերում են և իրական իրավիճակներ ստեղծում գործնական պարապմունքների համար:

Առարկաների դասավանդման ժամանակ կիրառվող նոնակները ուսումնական են, սակայն հնարավորինս նման են իսկական նոնակի: Նախատեսված է նոնակի նետման

դաշտ, որտեղ նախատեսված չափորոշիչների հիման վրա իրականացնում են նոնակի նետման վարժությունները: Չափորոշիչները նախատեսվում են ծրագրով:

Աշակերտները հիմնականում խմբային են անցնում վերոնշյալ դասերը: Եթե կարիք կա անհատական անցնելու, ապա անհատական են կազմակերպում: Անհատական ծրագիր կազմվում է այն դեպքում, եթե երեխան չի հասցնում և իր ֆիզիկական պատրաստվածությունը թույլ չի տալիս բոլորի հետ հավասար կատարել տվյալ վարժությունը:

Ֆիզկուլտուրա առարկան անցնում են ինչպես հանրակրթական առարկաների շրջանակում, այնպես էլ որպես լրացուցիչ ֆիզպատրաստություն: Ընդհանուր առմամբ անցնում են հանրակրթական չափորոշիչներով, իսկ լրացուցիչը ներառում է արգելագոտիներ հաղթահարելը և այլն:

Ֆիզկուլտուրայի դասերին մասնակցությունը պարտադիր է: Աշակերտները իրենց ցանկությամբ չեն կարող դասերից բացակայել, պետք է հարգելի պատճառ լինի, օրինակ առողջական խնդրի առկայություն: Սակայն առողջական խնդրի դեպքում երեխան ներկա է լինում դասին, ուղղակի չի մասնակցում:

Դպրոցի վարչակազմի խոսքերով դեռևս չի գրանցվել դեպք, որը ծնողը դիմի առանձին առարկայից կամ դասից երեխային ազատելու համար: Ընդհակառակը, եղել են դեպքեր, որ ծնողները խաբել են, բժշկական փաստաթղթեր ներկայացրել, որ երեխան առողջ է, սակայն կրթության ընթացքում պարզվել է, որ երեխան առողջական խնդիրներ ունի: Նման դեպքերում դպրոցի կողմից բացատրվում է երեխայի առողջական վիճակի և իրականացվող վարժությունների անահամատեղելիությունն ու հետևանքները:

Մնացած բոլոր դեպքերում ֆիզիկական պարապմունքները խմբային են, եթե երեխայի ֆիզիկական պատրաստվածությունը թույլ չի տալիս մնացածի հետ հավասար մասնակցել, ապա անհատական ծրագրով է մասնակցում: Օրինակ, 500մ վազքի փոխարեն, կվազի 100 մ:

Կարգապահություն և պատասխանատվություն

Կարգապահական կանոններ

«Փոքր Միեր» ռազմաուսումնական կրթահամալիրի աշակերտները Զինվորական կարգապահական կանոնագրքին չեն ենթարկվում, սակայն Կրթահամալիրում գործում է ներքին կարգապահական կանոնագիրք, որին պետք է ենթարկվեն սովորողները: Կանոնագիրքը հաստատվում է կրթահամալիրի խորհուրդի կողմից (կետ 60, ենթակետ 4): Ծանոթանալ այդ կանոնագրքին հնարավոր չի եղել, քանի որ այն համացանցում հրապարակված չէ:

Կանոնագրքի համաձայն՝ սովորողների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝

- 1) նախազգուշացում.
- 2) նկատողություն.
- 3) խիստ նկատողություն.
- 4) արտահերթ վերակարգում աշխատանքի նշանակում՝ մինչև 1 օր ժամկետով.
- 5) կրթահամալիրի տարածքից դուրս գալու հերթական իրավունքից զրկում.
- 6) կրթահամալիրի կողմից տրված հայկազունական կոչման իջեցում կամ դրանից զրկում.
- 7) կրթահամալիրի սովորողի համազգեստը կամ տաբերանշանը կամ պարզևը կրելու իրավունքից զրկում կամ կասեցում.
- 8) կրթահամալիրի կողմից տրված կրթահամալիրի կրծքանշանից, նշանից, խորհրդանիշից կամ այլ պարզևից զրկում կամ այն կրելու իրավունքի կասեցում.
- 9) կրթահամալիրից հեռացում⁶⁷:

Կարգապահական տույժեր տալու կարգն ու պայմանները սահմանում է խորհուրդը, սակայն պարզ չէ, թե ինչ ընթացակարգով է դա իրականացնում և ով կարող է ենթարկել կարգապահական տույժի: Այնուամենայնիվ, կանոնադրության մեջ ուսուցչի իրավունքների մեջ սովորողին կարգապահական տույժի ենթարկելը ներառված չէ:

Ծնողը իրավունք ունի բողոքարկելու կրթահամալիրի աշխատողների ապօրինի գործողությունները, սակայն սովորողին նման իրավունք ուղղակի տրված չէ կանոնադրությամբ: Միևնույն ժամանակ, կանոնադրության մեջ ի թիվս այլ իրավունքների նշված է, որ սովորողն իրավունք ունի օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից, ինչպես նաև

⁶⁷ տե՛ս կրթահամալիրի կանոնադրության 137-րդ կետը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, խորհրդի որոշումներով և տնօրենի հրամաններով սահմանված այլ իրավունքներ:

Կրթահամալիրի ուսուցչական կազմի և տնօրինության հետ զրույցից պարզ է դարձել, որ երեխաների կողմից լուրջ խախտումներ չեն լինում, հիմնականում լինում են ոչ լուրջ, տղայական բնույթի խախտումներ: Մակայն լինում են նաև բարդ երեխաներ, որոնց հետ աշխատելը երբեմն դժվար է լինում: Նման իրավիճակներում ուսուցչական կազմը փորձում է հնարավորինս մեղմ մոտեցում ցուցաբերել: Ներքին հարաբերություններն ու դրանց կարգավորումները նախատեսված են կարգապահական կանոնագրքով: Վերջինս ընդունվել է 2004 թ.-ին, սակայն , ինչպես նշվեց դպրոցի ղեկավարության կողմից, ներկայումս չի համապատասխանում կանոնադրությանը: Կարգապահական կանոնագրքը ըստ էության բխում է կանոնադրությունից և պարտադիր փաստաթուղթ չէ, այդ իսկ պատճառով առաջնորդվում են միայն Կանոնադրությամբ: Իսկ ընդհանուր առմամբ կոնֆլիկտները կարգավորվում են հիմնականում տվյալ պահին բարիդրացիական մթնոլորտ ստեղծելով: Այդ հարցում օգնում են նաև հոգեբանն ու սոցիալական աշխատողը:

Կրթահամալիրից սովորողների հեռացման դեպքեր չեն գրանցվել, եթե նույնիսկ լուրջ խախտում է լինում, ապա ծնողը գալիս է երեխային տանում: Տնօրինությունը նախընտրում է, որ ծնողները գան և երեխային տանեն դպրոցից, քան երեխային հեռացման ներկայացնի դպրոցից: Նմանապես, չի գրանցվել նաև ծեծի կամ խոշտանգումների դեպք:

Հարցազրույցներից պարզ է դարձել, որ ուսուցչական կազմը իրավունք ունի խախտումների դեպքում սահմանել զգուշացում, որից հետո միջնորդություն է ներկայացնում տնօրենին՝ աշակերտին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար: Պատասխանատվության վերաբերյալ տեղեկությունը պահվում է աշակերտների անձնական գործերում: Կոնֆլիկտների հետ կապված հարցերը կարող է լուծել նաև մանկավարժական խորհուրդը, բայց նման դեպքեր պրակտիկայում չեն եղել: Խախտումների մասին իրազեկում են նաև ծնողներին՝ ծնողական ժողովների ժամանակ:

Պրակտիկայում պատասխանատվության ենթարկելու որոշումը բողոքարկման դեպք չի եղել, քանի որ կրթահամալիրում բողոքարկման մեխանիզմներ գոյություն չունեն:

Իրականացված հարցազրույցների արդյունքում պարզ է դարձել նաև, որ պատասխանատվության միջոցների կիրառման միասնական մոտեցում չկա: Ուսուցիչներից մեկը, օրինակ, նշել է, որ կատարած խախտումների համար որպես պատիժ ստիպում է լրացուցիչ տնային աշխատանքներ կատարել կամ գիրք կարդալ ու պատմել:

Մեկ այլ աղբյուրից տեղեկացանք, որ երեխան կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության, եթե ժամանակին կրթահամալիր չի վերադառնում: Նման դեպքում, նա զրկվում է հաջորդ շաբաթվա ազատ արձակման հնարավորությունից:

Դասերի ընթացքում ոչ լուրջ խախտումների համար հիմնականում բանավոր նկատողություն է լինում, որից երեխան սաստվում է:

Երեխաների և ուսուցիչների միջև կոնֆլիկտներ չեն արձանագրվել: Եթե երեխաների միջև են կոնֆլիկտներ լինում, ապա հարթվում են սպաների կամ ուսուցիչների կողմից:

Ուսուցիչները⁶⁸ և սպայական կազմ

Կրթահամալիրի ուսուցիչ կարող է լինել այն անձը, ով ունի համապատասխան որակավորում կամ վերջին տասը տարվա ընթացքում մասնագիտական (մանկավարժական) գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ: Կրթահամալիրում այլ մանկավարժական աշխատանքի կարող են ընդունվել մանկավարժի կամ այլ մասնագիտական որակավորում ունեցող կամ համապատասխան տարիֆաորակավորման պահանջները բավարարող՝ բարձրագույն կրթությամբ մասնագետներ, ինչպես նաև բարձրագույն զինվորական կրթություն ունեցող սպաներ և խորհրդի համաձայնությամբ այլ անձինք:

Դիտարկման պահին կրթահամալիրում աշխատել է 41 հանրակրթական ծրագրերով ուսուցիչ: Տնօրինության խոսքերով՝ յուրաքանչյուր տարի աշխատակազմի 20%-ը վերապատրաստում է անցնում: Կան ուսուցիչներ, ովքեր կրթահամալիրում համատեղության կարգով են աշխատում: Օրինակ՝ մարտավարությունը դասավանդում է այլ ԲՈՒՀ-ի ամբիոնի վարիչ, ավագ մասնագետ, ունեն ուսուցիչ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակից, Կարմիր Խաչի աշխատակից, միջազգային մարդասիրական իրավունքի դասախոս և այլն:

Սպայական կազմը հիմնականում ունի բարձրագույն ուսումնական կրթություն: Վերջիններս առաջնահերթ դաստիարակ սպաներ են հանդիսանում: Սակայն նրանց մեծ մասը թոշակի անցած են:

Կրթահամալիրում աշխատում են նաև զինվորական կրթություն չստացած մասնագետներ:

Ուսուցիչները դպրոցում չեն գիշերում, սակայն սպայական կազմից հերթապահներ են լինում: Դասղեկ նշանակվում են միայն հանրակրթական ուսուցիչները: Ուսուցիչների հիմնական գործառույթներն են ուսուցումը, դասապատրաստումը, միջոցառումների պատրաստումը: Վերջիններիս աշխատավարձը հաշվարկվում է այնպես, ինչպես հանրակրթական մնացած բոլոր ուսուցիչներինը՝ ըստ դրույքաչափի:

Հանրակրթական ուսուցիչներից միայն ՆԶՊ ուսուցիչներն են համազգեստ կրում: Ուսուցիչների մեծ մասը ունի մանկավարժական փորձ:

⁶⁸ տե՛ս կանոնադրության 143-րդ կետ

Հոգեբանական աշխատանք

Սոցիալական աշխատողները երեխաների վերաբերյալ լրացնում են անձնական գործ՝ սոցիալական վիճակ, ծնողների մասին, անձնական տվյալներ և այլն: Հոգեբանը ըստ այդմ որոշում է, ինչպես զրուցել: Հոգեբանը զրուցում է ինչպես առանձին, այնպես էլ խմբակային: Եթե երեխան ընտանեկան խնդիրներ ունի, ապա դա նկատվում է, զրուցում են, օգնում: Հիմնական խնդիրները ամուսնալուծություն տարած երեխաների մոտ են պատահում:

Խնդիրը սակայն նրանում է, որ դպրոցն ունի հոգեբանի մեկ հաստիք միայն: Ինչով պայմանավորված՝ հոգեբանի մոտ միշտ հերթեր են լինում: Սա բացատրվում է նրանով, որ փոքրերը ավելի շատ են հոգեբանի կարիք ունենում և դիմում նրան: Հետևաբար, միայն մեկ հոգեբանի առկայությունը դպրոցում բավարար չէ՝ հատկապես հաշվի առնելով, այն, որ երեխաները հոգեբանական աշխատանքի կարիք ունեն:

Կոչումներ և դիմելաձև

Կրթահամալիր ընդունված սաներին տրվում է «հայկագուն» անունը, բայց մինչ այդ կոչումը շնորհելը սաները մասնակցում են երդման արարողությանը, որից հետո նրանց տրվում է համազգեստ: Իսկ մինչև երդման արարողությունը նրանք օժվում են «Թուր Կեծակի» և «Խաչ պատերազմի» վզնոցներով: «Խաչ պատերազմի» վզնոցներն անվանական են, կրթահամալիրի բոլոր սաներն ունեն: Սակայն եթե սանը չի շարունակում ուսումը կրթահամալիրում, վզնոցը պարտավոր է վերադարձնել կրթահամալիրին:

- 6-7 դասարանցիները կոչվում են **կրտսեր հայկագուններ**
- 8-9 դասարանցիները՝ **հայկագուններ**
- 10-11-12 դասարանցիները՝ **ավագ հայկագուններ**

Չնայած այն հանգամանքին, որ ուսուցիչներին զգուշացված է երեխաներին ազգանուններով դիմել, նրանք սակայն երեխաներին դիմում են անուններով:

Դասարանները ուրիշ ձև են կոչվում, ջոկերի ու վաշտերի են բաժանված, թե դրա նման մի բան:

Համագործակցություն

Կրթահամալիրը համագործակցում է պետական և ուսումնական մի շարք հաստատությունների հետ:

9-րդ դասարանի աշակերտների համար սեմինար-դասընթացներ են կազմակերպում Վազգեն Մարգարյանի անվան ռազմական ինստիտուտի մասնագետները՝ օգնելով մասնագիտական կողմնորոշմանը:

Կրթահամալիրը համագործակցում է նաև ուստիկանության և պաշտպանության նախարարության հետ: Վերջինս կրթահամալիրին աջակցում է ծրագրեր իրականացնելիս:

Կրթահամալիրը կցված է և համագործակցում է Նաիրիի տարածաշրջանի ուստիկանությանը: Ուստիկանները տարին մեկ անգամ պրոֆիլակտիկ ստուգումներ են անցկացնում կրթահամալիրում: Համագործակցում են նաև հանրակրթական դպրոցների հետ: Հանրակրթական դպրոցների աշակերտները կրթահամալիրի աշակերտների օգնությամբ մասնակցում են գործնական պարապունքների:

Բուժսպասարկման ապահովման համար համագործակցում են պոլիկլինիկաների հետ /Էրեբունի և Դավիթաշեն/, ինչպես նաև Մուրացան մանկական հիվանդանոցի հետ:

Ժամանց

«Փոքր Մեներ» կրթահամալիրի աշակերտները մշակութային կյանքին հաղորդակից լինելու բազմաթիվ հնարավորություններ են ունենում: Մասնավորապես, ունենում են հանդիպումներ ազատամարտիկների, արվեստագետների հետ: Վերջին անգամ հանդիպել են Տիգրան Մանսուրյանի, Երվանդ Մանարյանի, Արա Գևորգյանի հետ, վերջինս շատ հաճախ է այցելում կրթահամալիր: Ժամանակ առ ժամանակ երեխաներին տանում են բալետ, օպերա, թատրոններ, կինոդիտումների: Կինոդիտումները սակայն թեմատիկ են, օրինակ՝ ֆիլմեր, ինչպիսիք են «Գարեգին Նժդեհ», «Վանա ծովուն արշալույսը» և այլն: Այդ նպատակով համագործակցում են Մոսկվա կինոթատրոնի հետ: Հին հայկական կինոները դիտում են կրթահամալիրում: Ինչից հետո կազմակերպում են քննարկումներ, պատմում են ռեժիսորների, դերասանների մասին, ներկայացնում են պատմությունը:

2008թ-ին դպրոցը ամբողջ անձնակազմով 15-օրյա մեծ շրջագայություն է կատարել դեպի Արցախ, որը կազմակերպվել է Պաշտպանության նախարարության հետ համագործակցությամբ: Շրջագայության համար անհրաժեշտ ավտոբուսները տրամադրվել է ՊՆ-ի կողմից: 2009 թ.-ին այցելել են Լոռի և Տավուշ մարզերը: Կրթահամալիրի գրեթե բոլոր պատերի վրա փակցված են շրջագայության նկարները:

Հուլիս ամսին, դասերի ավարտից հետո, կրթահամալիրում կազմակերպվում են սպորտային տարբեր միջոցառումներ ու մրցումներ՝ համագործակցելով այլ կառույցների ու դպրոցների հետ:

Նուբարաշենի մասնաշենք

Նուբարաշենի մասնաճյուղը «Փոքր Միեր» կրթահամալիրին վերջերս է հանձնվել, նախկինում այն եղել է թիվ 18 հատուկ դպրոցը՝ նախատեսված վարքի շեղում ունեցող երեխաների համար, սակայն այդպիսի երեխաներ ներկայումս կրթահամալիրում չկան, մինչդեռ դա նախատեսված է կանոնադրությամբ⁶⁹:

Այս մասնաշենքում գործում է՝

- 3 հատ 6-րդ դասարան
- 4 հատ 7-րդ դասարան
- 4 հատ 8-րդ դասարան

Յուրաքանչյուր դասարանում առավելագույնը սովորում է 14 աշակերտ: Այցելության պահին կրթահամալիրի այս մասնաշենքի աշակերտների թիվը կազմում էր 114:

Մասնաշենքի շարահրապարակը բավականին մեծ է, դիմացի հատվածում տեղադրված են երկու հանգստի տաղավարներ, որտեղ աշակերտներն անցկացնում են իրենց ազատ ժամանակը: Շարահրապարակի հետևի հատվածում կա երկու մարզադաշտ, մեկը ֆուտբոլի համար, մյուսը՝ վոլեյբոլի: Վոլեյբոլի հրապարակի հետևում ֆիզիկական պատրաստվածության համար նախատեսված փոքր մարզահրապարակ կա:

Դպրոցի տնօրինության խոսքերով այլ՝ ավելի մեծ մարզահրապարակի համար կրթահամալիրը ֆինանսական միջոցներ չունի, բայց ունի մեծ տարածք և ֆինանսավորման դեպքում հնարավոր է կառուցել: Կրթահամալիրի մուտքի ձախ կողմում կա նաև բացօթյա լողավազան, բայց քանի որ լողավազանը չի շահագործվում, ներսում տեղադրել են դարպասներ և այն դարձրել մինիֆուտբոլի և ձեռքի գնդակի մարզադաշտ: Կողքի տաղավարներում ամռանը տեղադրվում են սեղաններ ու աթոռներ և ամառային բացօթյա դասերը այնտեղ են անցկացվում:

Կրթահամալիրն աչքի էր ընկնում իր մաքրությամբ: Յուրաքանչյուր ջոկ և դասակ բակում ունի մաքրության իր տարածքը և հետևում է մաքրությանը:

Կրթահամալիրում ընդունված սովորությունն է կրթական հաստատությունում դասամիջոցների տասնօրյակ հայտարարելը: Դրա իմաստը կայանում է նրանում, որ դասամիջոցների ընթացքում միացվում է այդ տասնօրյակի համար որոշված երգահանի կոմպոզիցիաները: Մեր այցելության ժամանակ Առնո Բաբաջանյանի տասնօրյակն էր: Կրթական համալիրի մյուս մասնաշենքի համապատասխան տեխնիկական նոր պետք է ստանան: Այնտեղ նման պրակտիկա դեռևս չկա:

⁶⁹ տե՛ս կրթահամալիրի կանոնադրությունը:

Մասնաշենքի մուտքը բաց է, սակայն ազատ ելուձուտի համար սահմանափակումներ կան:

Դպրոցը հսկվում է տեսախցիկներով, **հերթապահ երեխաները** հսկողություն իրականացնում են հսկիչ անցագրային կետում, առավոտյան ժամը 8:00-ից մինչև 10:00: Տնօրինությունը նշեց, որ աշակերտների կողմից իրականացվող շուրջօրյա հերթապահություն նախատեսված չէ: **Մակայն**, ավելի ուշ հերթապահող երեխաների հետ զրույցից պարզ դարձավ, որ երեխաները շուրջօրյա են հերթապահում:

ԴԻՏԱՐԿՈՒՄ

Համակարգչային սենյակ

Սենյակը նախատեսված է մինչև 16 անձի համար: Աշակերտները կարող են ազատ օգտվել և դասերը պատրաստել այդ սենյակում: Այստեղ առկա է 16 համակարգիչ, ինչպես այս սենյակում, այնպես էլ ողջ շենքում գործում է wi fi ծրագիր: Աշակերտները սակայն իրավունք ունեն այցելելու միայն որոշակի կայքէջեր: Սոցիալական կայքեր մուտքը արգելված է: Դասաժամերը ավարտելուց հետո տրամադրում են նաև ինտերնետից օգտվելու լրացուցիչ ժամանակ: Համացանցից օգտվելու հնարավորություն նախատեսված է, սակայն այդ հնարավորությունը սահմանափակ է:

Մարզադահլիճ

Մարզադահլիճը բավականին մեծ է, վերանորոգված, ջեռուցված, առկա էին ֆիզիկական մարմնամարզության համար անհրաժեշտ բոլոր հնարավորությունները՝ այծիկ, բոքսի տանձիկ, հորիզոնական ձողեր, բասկետբոլ, վոլեյբոլ խաղալու հնարավորություն: Մակայն Ֆիզիկական պատրաստության պարապմունքներն անցկացնելու սպորտային անհատական պարագաների պակաս է արձանագրվել: Մարզադահլիճի ներսում նախատեսված է նաև 2 առանձին հանդերձարան:

Ազգագրական դասասենյակ

Ազգագրական սենյակում ամփոփված է հայկական մշակութային ժառանգությունը: Այն նախատեսված է հայ ազգային պատմությունը պատմական նկարների, գրքերի և քարտեզների միջոցով ներկայացնելու համար: Սենյակը վերանորոգված էր և ջեռուցված: Ինչպես նշեցին՝ հայ ազգի ոգու մակերը ներկայացված է այդտեղ: Կային հայկական գյուղական կյանքը, հայկական տան մոդելն ու մշակույթը բնութագրող պարագաներ՝ թոնիք, կճուճներ, հայկական կուժեր և այլն:

ՆԶՊ դասասենյակ

Դասասենյակը ամբողջությամբ վերանորոգված էր, սեղանները և աթոռները նոր էին և հարմարավետ:

Թեմատիկ դասարաններ

Որպես թեմատիկ դասարաններ գործում են պատմության, կենսաբանության, ֆիզիկայի, մարտական զինվորական պատրաստվածության և այլ առարկաների անցկացման դասասենյակներ: Յուրաքանչյուր դասարանում կա թեմատիկ նյութերը ցուցադրելու համար հեռուստացույց, նյութեր տվյալ առարկայի վերաբերյալ, պլակատներ, քարտեզներ և այլ պարագաներ:

Հանդիսությունների և միջոցառումների սենյակ

Այս սենյակը ապահոված էր անհրաժեշտ գույքով և տեխնիկայով: Մակայն տարածքը փոքր է: Միաժամանակ չէին կարող ներկա լինել և աշակերտները և ադմինիստրացիան ամբողջությամբ:

Փառքի Սրահ

Դպրոցն ունի փառքի սրահ, որտեղ ամփոփված է հայ ժողովրդի պատմությունը պատերազմների համատեքստում՝ սկսած Հայկ նահապետից մինչև Լեոնային Ղարաբաղի ազգային ազատագրական շարժումը՝ Արցախյան հերոսամարտը: Սրահում ըստ պատմական շրջանի տեղադրված էին նաև զենքերի նմուշներ:

Փառքի սրահում փակցված էին միայն տղամարդ ֆիդայիների նկարները, սակայն հայրենիքի պաշտպանության հարցում կանանց դերի վերաբերյալ ոչինչ չկար: Մինչդեռ դա նույնպես կարևոր հանգամանք է:

Ճաշարան

Կրթահամալիրի ճաշարանը այժմ էր ընկնում իր մաքրությամբ, մեջտեղի ներս ընկած հատվածում տեղադրված էր չորս լվացարան և մեծ քանակությամբ սրբիչներ: Երեխաները երկու հերթով են ճաշում, քանի որ ճաշարանը երեխաների քանակի համեմատ փոքր է և բոլորը միաժամանակ չեն կարող սնվել: Ճաշարանի անմիջապես հարևանությամբ է գտնվում **խոհանոցը** և բաժանարար հատվածում դուռ տեղադրված չէ, քանի որ, տնօրենի խոսքերով, կրթահամալիրում սկզբունք է, որ խոհանոցի ամեն ինչը պետք է տեսանելի և բաց լինի բոլորի համար: Լինում են երեխաներ, ովքեր կրթահամալիրի ճաշատեսակների հետ կապված դժգոհություն են ունենում, սակայն ժամանակի ընթացքում սովորում են: Երեխան

ճաշացանկի հետ կապված կարող է առաջարկություններ ներկայացնել, սակայն նման պրակտիկա դպրոցում չկա: Ճաշացանկը հաստատվում է կառավարման խորհրդի կողմից: Ճաշացանկի նորմերը ավելի շատ հավասարեցված են զինվորականին: Մանուկ կալորիականությունը երեխաների տարիքայինից ավելին է, քանի որ երեխայի ֆիզիկական ծանոթաբեռնվածությունը կրթահամալիրում շատ է: Մնունդը չորսանգամյա է, երեք անգամ սնունդ, մեկ անգամ՝ կեսօրիկ, որն իրենից ենթադրում է քաղցրավենիք, հյութ, միրգ, ամոնանը նաև պաղպաղակ: Յուրաքանչյուր օրվա ճաշացանկը փակցված է ճաշարանի պատին: Առանձին դեպքերում երեխաներին տրվում է երշիկեղենի տեսականի:

Երեխաները սակայն ճաշում են ոչ թե սովորական սպասքով, այլ զինվորական երկաթյա սպասքով:

Մաներին տրամադրվող սնունդ՝ քանակություն, որակ

Կանոնադրության 89-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ կրթահամալիրի տնտեսավարը (թիկունքի պետը) սովորողներին ապահովում է բարձրորակ սննդով, հագուստով, կոշիկներով, հիգիենիկ պարագաներով, գրենական պիտույքներով, սպիտակեղենով և սահմանված այլ գույքով, որոնց համար պատասխանատվություն է կրում:

129-րդ կետի համաձայն՝ սովորողներին սնունդը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի նոյեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության հատուկ սպառողների սննդի օրական միջին նորմաների մասին» N 706 որոշման 1-ին կետով սահմանված կարգով: Սակայն պետք է նշել, որ հետազոտությունն իրականացնելուց հետո, ինչպես նաև հարցազրույցներից հետո վերոնշյալ որոշման 1-ին կետն ուժը կորցրել է, և ընդունվել է ՀՀ կառավարության 03.12.2015թ. թիվ 1456 որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգի ծառայողների, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարարական ծառայությունների պարեկային ապահովության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. նոյեմբերի 11-ի թիվ 706 որոշման մեջ փոփոխությունների կատարելու մասին»: Որոշումն ընդունելուց հետո Կանոնադրության մեջ փոփոխություններ չեն կատարվել, և ներկայումս պարզ չէ, թե ինչ ընթացակարգով, ինչ չափով է երեխաներին սնունս մատակարարվում:

Սովորողը պետք է մասնակցի սննդամթերքի պատրաստման աշխատանքներին (132-րդ կետի 1-ին ենթակետ):

Կրթահամալիրը իրավունք ունի զբաղվելու սովորողների սննդի կազմակերպմանն ուղղված ձեռնարկատիրական գործունեությամբ: (19-րդ կետի 22-րդ ենթակետ)

Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի նոյեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության հատուկ սպառողների սննդի օրական միջին նորմաների մասին» N 706 որոշման 1-ին կետի համաձայն՝ խաղաղ ժամանակ Հայաստանի Հանրապետության այլ գորքերում զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների սննդի օրական միջին նորման սահմանված է այդ որոշման Հավելված 1-ով⁷⁰:

Բուժկետ

Բուժկետը նախատեսված է միայն առաջին օգնություն ցուցաբերելու համար, կան առանձին հիվանդասենյակներ, որտեղ անհրաժեշտության դեպքում տեղափոխվում են հիվանդ երեխաները: Եթե երեխան երկարատև բուժման կարիք է ունենում, ապա կրթահամալիրի աշխատակիցները ծնողին տեղեկացնում են դրա մասին:

Նախատեսված է առանձին **հիվանդասենյակ**՝ հագեցած մահճակալներով, պահարաններով, որը տաք էր և վերանորոգված: Առողջական խնդիրներ ունենալու դեպքում աշակերտները դիմում են հրամանատարին, ըստ այդմ հնարավոր է անհրաժեշտության դեպքում երեխային տեղափոխել հիվանդասենյակ:

Կա նաև բուժքրոջ համար առանձնացված սենյակ: Ինչպես նաև վարակիչ հիվանդություններ ունեցող երեխաներին մեկուսացնելու սենյակ, որը դեռևս այդ նպատակով չի օգտագործվել: Հնարավորություն կար նաև աշակերտների տեսողությունը ստուգելու:

Սակայն ավելի խորը հետազոտություններ իրականացնելու համար հնարավորություններ չկան:

Դեղորայքը պատվիրում են ունեցած բյուջեի սահմաններում: Սահմանված դեղորայքի ցանկ չկա, միայն առաջին բուժօգնության դեղերի հնարավորություն ունեն:

Եղել են դեպքեր, երբ երեխայի հիվանդության հետ կապված նպատակահարմար չի եղել երեխայի ուսուցումը շարունակել տվյալ դպրոցում:

Դպրոցը համագործակցում է պոլիկլինիկաների հետ /Էրեբունի և Դավիթաշեն/, ինչպես նաև Մուրացան մանկական հիվանդանոցի հետ: Լինում են դեպքեր, երբ երեխային կրթահամալիրի միջոցներով տեղափոխում և հետազոտում են հիվանդանոցում:

Բոլոր աշակերտներին բուժզննության ենթարկում են տարին 2 անգամ: Ստուգում են երեխաների քաշը, հասակը, զարկերակային ճնշումը, ուղարկում են մաշկաբանի, ներոպատոլոգի և այլ մասնագետների մոտ:

⁷⁰ տե՛ս ՀՀ կառավարության 11.11.1998թ-նի թիվ 706 որոշումը՝ «ՀՀ հատուկ սպառողների սննդի օրական միջին նորմաների մասին» <http://www.arlis.am/documentview.aspx?docid=6929>

Գրադարան

Գրադարանը հագեցած է տարբեր գրքերով, սակայն դասական գրողների և գրականության պակաս կա: Գրադարանն ունի, մասնավորապես, Նար-Դոսի, Դերենիկ Դեմիրճյանի, Ստեփան Զորյանի գրքերի անհրաժեշտությունը: Լինում է, որ անհրաժեշտ գիրքը դպրոցում առկա չէ և ուսուցիչներն են իրենց գրքերը տրամադրում աշակերտներին:

Ննջասենյակներ

Ննջասենյակները տեղակայված են երկրորդ հարկում՝ միմյանց հարևանությամբ: Դռները մասամբ թափանցիկ էին, ինչի պատճառով դրսից երևում էր ներսի որոշակի հատված: Դիտարկման պահին բոլորը վերանորոգված ու տաք են եղել:

Ննջասենյակներից երկուսում նախատեսված է 8 մահճակալ, մնացած սենյակները 4 տեղանոց են: Բոլոր սենյակներում նկատվել են ջերմաչափ, ջրի տարրա և բաժակներ:

Սենյակները կահավորված են, յուրաքանչյուր աշակերտի համար նախատեսված է՝

- 1 մահճակալ, որը միաժամանակ ուներ դարակներ ներքևի հատվածում՝ հագուստ պահելու համար
- փոքր սեղան և աթոռ
- Պատին հարմարեցված մեկ փոքր պահարան՝ նախատեսված գրքերի համար

Հատկանշական է, որ ինչպես զորամասերում, այստեղ նույնպես ննջասենյակները բաշխված են ըստ դասարանների /ջոկերի/:

Երկրորդ հարկում ևս կա հերթապահ սպայական անձնակազմ, ով գիշերները հսկողություն է իրականացնում ննջասենյակների նկատմամբ:

Լոգարան Սանիտարահիգիենիկ պայմաններ

Սահմանված կարգի համաձայն սովորողները պետք է մասնակցեն կրթահամալիրի սանիտարական մաքրման աշխատանքներին⁷¹: Սակայն արգելվում է սովորողներին սանիտարական նորմերով տվյալ տարիքի անձանց համար արգելված աշխատանքներում ներգրավելը:

Դիտարկումը ցույց է տվել, որ կրթահամալիրի երկրորդ հարկում առկա է երկու լվացարան և սանհանգույց, որտեղ հերթեր չեն լինում, քանի որ ամեն ինչ համակարգված է: Ամռանը երեխաները յուրաքանչյուր օր կարճատև լոգանք են ընդունում, իսկ ցուրտ եղանակին յուրաքանչյուր օր լոգանք ընդունել չի թույլատրվում: Հիմնականում կրթահամալիրում երեխաները «ցայվում» են, իսկ լոգանք ընդունում են տանը՝ շաբաթը մեկ անգամ: Այն երեխաները, ովքեր չեն գնում տուն հանգստյան օրերին լոգանք են ընդունում կրթահամալիրում: Սակայն, հաշվի առնելով ֆիզիկական պատրաստվածության ու

⁷¹տե՛ս կանոնադրության 76-րդ կետի 2-րդ ենթակետ, 89-րդ կետի 1-ին ենթակետ, կետ 132, ենթակետ 1, կետ 134:

վարժությունների հաճախականությունը, լոգանք ընդունելու հաճախականությունը պետք է ավելի մեծ լիներ: Անապահով ընտանիքների երեխաներին հիգիենայի պարագաները տրամադրում է կրթահամալիրը:

Համազգեստ և ընդհանուր զգեստապահարան

«Փոքր Միեր» կրթահամալիրում համազգեստը նախատեսված է կանոնադրությամբ⁷²: Հանդերձանքը սովորողներին տրամադրվում է անվճար:

Սովորողները կրթահամալիրի տարածքում, կրթական ծրագրերի իրականացման բոլոր փուլերում, ինչպես նաև կրթահամալիր գալիս կամ կրթահամալիրից դուրս գալիս պարտավոր են կրել խորհրդի կողմից սահմանված ձևի համազգեստ՝ համապատասխան տարբերանշաններով: Համազգեստը կրելու կարգը սահմանում է խորհուրդը:

Երեխաներին տրամադրվող համազգեստը պահվում է մասնաշենքի երկրորդ հարկի զգեստապահարանում: Սաների համազգեստի ձևը նույնպես որոշում է խորհուրդը: Կրթահամալիրը իր միջոցների հաշվին մրցույթ է հայտարարում և կազմակերպում համազգեստի գնման գործընթացը: Հագուստը միանման և միատեսակ է, սակայն **չափսերի** հետ երբեմն առաջանում են խնդիրներ: Պատահում է, օրինակ, կարի ֆաբրիկան հագուստը կարում է ներկայացված չափսերից փոքր կամ մեծ: Լինում են դեպքեր, երբ երեխաների ոչ ստանդարտ չափսերի պատճառով հագուստ ընտրելու հարցը դժվարանում է: Դիտարկման պահին արձանագրվել է, որ գեր երեխաներից մեկը առանց համազգեստի է հաճախում դասերին՝ համապատասխան չափսի հագուստ չունենալու պատճառով:

Դասասենյակներ

Դասասենյակների ընդհանուր թիվը 22 է: Պատմության ուսուցչուհուց տեղեկացանք, որ յուրաքանչյուր դասարանում մոտ 14 աշակերտ է սովորում: Աշակերտների առավելագույն թիվը ըստ դասարանի 15-16 է, իսկ նվազագույնը՝ 13: Բոլոր դասասենյակները գտնվում են առաջին հարկում: Յուրաքանչյուր դասասենյակ կրում է իր առանձին անունը՝ Հայկյան, Ֆիդայական և այլն: Բոլոր դասասենյակները նոր վերանորոգված են և հազեցած անհրաժեշտ գույքով:

Վերապատրաստման հնարավորություն

Բոլոր ուսուցիչներն ունեն մասնագիտական որակավորում, անցնում են վերապատրաստումներ: Ուսուցիչների վերապատրաստումը նույնպես իրականացվում է ընդհանուր կանոններին համապատասխան: Ուսուցիչները 5 տարին մեկ պարտադիր վերապատրաստվում են: Ուսուցիչները, ում հետ զրուցել ենք, նշել են, որ վերջին

⁷² տե՛ս անոնադրության 129-րդ կետի 1-ին ենթակետ, կանոնադրության 131-րդ կետը:

վերապատրաստումը անցել են 2 տարի առաջ հասարակագիտություն առարկայի շրջանակներում, սակայն ոչ բոլորն են մասնակցել: Երեխաների իրավունքների վերաբերյալ սակայն դասընթացներ չեն եղել: Կրթահամալիրում քննարկում-հանդիպումներ երբեմն կազմակերպում են նաև տարբեր ՀԿ-ները: Սակայն երկարաժամկետ կամ գոնե մի քանի օր տևողությամբ, կոնկրետ թեմայի շուրջ վերապատրաստումներ չեն եղել:

Զենքի կիրառման հնարավորություններ

ՀՀ կրթության և գիտության նախարարի 14.11.2014թ. թիվ 1102-Ա/Ք հրամանով հաստատվել են ռազմագիտության բնագավառի հիմնական մասնագիտացված ծրագրերը: Այդ ծրագրերը օգտագործվում են նաև կրթահամալիրում ռազմական ուղղվածություն ունեցող առարկաների դասավանդման համար: Առարկաներից մեկն է «Կրակային պատրաստություն» առարկան: «Կրակային պատրաստություն» առարկայի ծրագրի ուսումնասիրությունից հետևում է, որ կրթահամալիրում սովորողները զենքի հետ առնչվում են 6-րդ դասարանից:

6-րդ դասարանում հատկացվում է ընդամենը 6 ժամ, որից 3-ը՝ «Կալաշնիկովի» ինքնաձիգից ուսումնական հրաձգության վարժությունների կատարմանը, իսկ 3-ը՝ օդամղիչ հրացանից:

7-րդ դասարանում ունենում են 10-ը ժամ: 7-ը՝ ուսումնական հրաձգություն «Կալաշնիկովի» ինքնաձիգից (նշանակետ վարժասարքի վրա), 3-ը՝ հրաձգություն օդամղիչ հրացանից:

8-րդ դասարանում ունենում են 18 ժամ գործնական աշխատանքներ և բոլորի ընթացքում գործնական աշխատանքներ են կատարվում զենքի հետ:

9-րդ դասարանում՝ 26 գործնական դաս, և բոլորի ընթացքում աշխատանքներ են կատարվում զենքի հետ:

10-րդ դասարանում գործնական դասերի քանակը կազմում է 56-ը, իսկ 11-րդ դասարանում՝ 54-ը⁷³:

Բոլոր դասարաններում երեխաները կիրառում են միայն ուսումնական զենքեր: Կրթահամալիրի կողմից օգտագործվում է հիմնականում ՏՈՋ (ՏՕՅ) զենքի տեսակը, որը տրամադրվել է ոստիկանության կողմից:

Կրթահամալիրը սեփական մարտական զենք չունի, զենքերի հարցով համագործակցում են զորամասերի հետ, օրինակ Նուբարաշենի զորամասի: Այդ նպատակով երբեմն աշակերտներին տանում են զորամասեր և հրահանգիչների

⁷³ ՀՀ կրթության և գիտության նախարարի 14.11.2014թ. թիվ 1102-Ա/Ք հրամանով հաստատված ռազմագիտության բնագավառի հիմնական մասնագիտացված ծրագրերը:

հսկողության ներքո հրաձգությունը կատարում են մարտական զենքերով, ինչից հետո կրկին վերադառնում են կրթահամալիր:

Ուսումնական զենքը պահվում է հատուկ սենյակներում, որոնց պատուհաններին ամրացված են ճաղավանդակներ և բանալին պահվում է միայն հերթապահ սպաների մոտ: Երեխաները ինքնուրույն զենքին հասանելիություն չունեն և չեն կարող զենքի սենյակը բացել: Ձենքի պահպանման համար պատասխանատու է օրվա հերթապահը:

ՆՁՊ առարկայի շրջանակներում անցնում են նաև կրակամարտ բաժինը: Եթե հանրակրթական դպրոցներում կրակամարտ դասավանդվում է ընդամենը 3 ժամ, ապա ռազմաուսումնական կրթահամալիրում՝ 68 ժամ: Դասավանդվում է նաև 1-ին բուժօգնություն, մատրավարություն, արտակարգ իրավիճակներ և այլն: Ինչպես պարզ դարձավ հարցազրույցներից՝ բոլոր ուսումնական զենքերի ասեղները հանված են և ծակված, որի պատճառով հնարավոր չէ այդ զենքերը օգտագործել որպես մարտական: ՆՁՊ առարկայի շրջանակներում կիրառում են նաև ուսումնական նոնակ, որը առանց պայթուցիչի է, սակայն արտաքին տեսքով նման է իսկական նոնակի: Կա նոնակի նետման դաշտ, որտեղ տրված են նետման չափսերը ու ըստ այդմ տրվող գնահատականները:

Ձենքի օգտագործման դասերը սկսվում են ջոկի ավագի զեկուցումով, հերթականությամբ ու վերահսկողությամբ: Ուսումնական զենքով կրակելուց առաջ նախ սովորում են կանոնները, նոր սկսում կիրառել զենքը: Յուրաքանչյուր դեպքում օգտվում են Ձենքի օգտագործման կանոնակարգից:

Կրթահամալիրի երկրորդ մասնաշենք Քանաքեռավանում

«Փոքր Միեր» ռազմաուսումնական կրթահամալիրի երկրորդ մասնաշենքը գտնվում է Քանաքեռավանում: Այստեղ կրթություն ստանում են 8-ից 12-րդ դասարանի երեխաները:

Ի տարբերություն առաջին մասնաշենքի՝ այս շենքը հին է, վերջին անգամ այն վերանորոգվել է 2008 թ-ին: Ֆինանսավորման բացակայության պատճառով շենքի պայմանները չեն բարելավվում, սակայն դրա կարիքը նկատվում էր: Ի սկզբանե այս մասնաշենքը չի եղել, կրթահամալիրը գործունեությունը ծավալել է տնակային պայմաններում, որտեղ տարածքը մշակված չի եղել, միայն վայրի բնություն է եղել: Շենքը ժամանակի ընթացքում փուլ-փուլ է կառուցվել: Այնուհանդերձ, ներկա վիճակով այն տիպային չէ՝ միջանցքները նեղ են, իսկ դասարանները փոքր, չնայած այդ ամենին այն հարմարեցված է կրթական նպատակներին ծառայելու համար: Բացի այդ, չնայած շենքը կառուցվել է ոչ վաղ անցյալում, սակայն արտաքին և ներքին տեսքից բավականին հին հաստատության տպավորություն է թողնում:

Կրթահամալիրի գլխավոր մուտքի պատին գրված են Նժդեհի խոսքերը, ինչպես նաև արված են մեջբերումներ կանոնադրությունից:

Մուտքի մոտ իրականացվում է հերթապահություն՝ կրթահամալիրում սովորող երեխաների կողմից: Ինչպես ավելի ուշ պարզ դարձավ, երեխաների կողմից իրականացվող հերթապահությունը իրականացվում է շուրջօրյա:

Կրթահամալիրի մասնաշենքում լոկալ ջեռուցում չկա: Ջեռուցումն իրականացվում է մի քանի ջրատաքացուցիչների միջոցով: Բացակայում է նաև օդափոխության համակարգը, ինչի պատճառով շենքի տարբեր հատվածներում զգացվում է ծանր և ճնշող օդ:

Շրջակա տարածքում մարզվելու և ՆՁՊ վարժությունների մեծ հնարավորություններ կան՝ սպորտային տունիկներ, արգելագոտի, արգելքների հաղթահարման վարժությունների հարմարություն, խրամատներ, ջրկի քնելու վայր /այդտեղ երեխաները չեն քնում/, ՏՈԶ-ի կրակելու հարմարություն և այլն: 9-12 դասարանցիների համար դասացուցակով նախատեսված ամենօրյա վարժությունները կատարվում են այնտեղ: Տարածքում կան նաև հանգստի համար նախատեսված խրամատներ: Բակի ներսում առանձնացված է մեծ հրապարակ, որտեղ իրականացվում է նաև աշակերտների երդման արարողությունը:

ԴԻՏԱՐԿՈՒՄ

Մարզավանը

Այս մասնաշենքի մարզավանը տարածքով ավելի մեծ է, քան Նուբարաշենինը, սակայն ֆիզիկական պատրաստության համար սարքավորումները գրեթե նույնն են: Հիմնական տարբերությունը տարածքի մեծության մեջ է:

Քանի որ այս մասնաշենքում ավագ դասարաններն են սովորում, ռազմամարզական կրթության հնարավորությունները ավելի մեծ են, իսկ հնարավորությունները փոքր-ինչ շատ: Տնօրինության խոսքերով, այստեղ նույնպես իրականացվում է հերթապահություն առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 10-ը: Սակայն հերթապահություն իրականացնող երեխաներից իմացանք, որ հերթապահությունը շուրջօրյա է:

Այստեղ նախատեսված է մագլցման պատ՝ մոտ 5-7 մետր բարձրությամբ: Պատի վրա վարժությունը կատարելու համար սովորողները օգտվում են հատուկ պարանից: Կրակային պատրաստությունների համար նախատեսված տարածքը բաղկացած է մոտ մեկ մետր խորությամբ խրամատից, որի միջից սովորողները հրազենից կրակում են 25-50 հեռավորության վրա տեղադրվող թիրախների ուղղությամբ, իսկ դաշտի երկարությունը 100 մ-ից ավելին է: Հեռավորության որոշումը կախված է աշակերտների տարիքից:

Կառուցված են նաև մոդելավորված «դիրքեր»՝ խրամատներով և գետնատնով: Գետնատանը, ինչպես տեղեկացրեց կրթահամալիրի վարչակազմը, գիշերները երեխաները չեն մնում, այն ուղղակի կառուցված է սովորողի մոտ դիրքերի մասին ավելի լավ պատկերացում ստեղծելու համար: Ընդ որում, ըստ տարիքի ծանրաբեռվածությունը տարբեր է:

Ճաշարանը

Մասնաշենքի ճաշարանը բավականին մեծ է, մեծության հաշվին միաժամանակ ծառայում է որպես դահլիճ: Գույքը սակայն հնամաշ է: Ճաշարանը ինքնին հին է և վերանորոգման ու գույքի թարմացման կարիք ունի: Օդափոխության համակարգի բացակայության պատճառով ճաշարանում օդը բավականին ծանր էր: Աշակերտներից յուրաքանչյուրը ճաշարանում սեղանի շուրջ իր աթոռն ունի: Այստեղ առկա է նաև հացի կտրտման, մշակման արտադրամաս: Խոհանոցը գտնվում է ճաշարանի ներսի մասում, որտեղ սակայն մուտք գործել թույլ չի տրվել:

Դասասենյակներ և գրադարան

Դասասենյակների ընդհանուր թիվը 11 է: Վերջիններս չափսերով փոքր են, ինչը պայմանավորված է շենքի ընդհանուր կառուցվածքով: Դասասենյակներից մեկում նույնիսկ արձանագրվել է դասասեղանի մոտ նստած երեք աշակերտ:

Գրադարան, որպես այդպիսին, այստեղ գոյություն չունի: Կա առանձնացված փոքրիկ սենյակը, որը ավելի շուտ գրքերի պահոց է: Այստեղ նույնպես նշվեց գրքերի, հատկապես՝ դասական գրականության պակասի մասին: Շենքում տեղադրված էին տեսախցիկներ, որոնց միջոցով կարելի էր հսկել և՛ ննջասենյակները, և՛ դասասենյակները:

Ննջասենյակներ-գորանոց

Ննջասենյակները թվով երկուսն են՝ առաջին և երկրորդ հարկերում: Ննջասենյակներում տեղադրված են երկհարկանի մահճակալներ կողապահարաններով՝ ինչպես գորամասերում: Ընդ որում 2 անձի համար նախատեսված է 1 կողապահարան: Սենյակներում տեղաբաշխումը իրականացվում է ըստ ջոկերի: Ամբողջ տարածքի համար նախատեսված էր մեկ հեռուստացույց, որը դիտելու հնարավորություն ունեն երեկոյան հանգստի ժամին՝ 7-ից հետո՝ սահմանափակ ժամանակով և սահմանափակված հաղորդաշարեր:

Առաջին հարկի գորանոցի լուսավորությունը սովորականից թույլ է, առկա է ընդհամենը մեկ լուսամուտ: Գույքը ընդհանուր առմամբ հին է, ննջասենյակը համալիր վերանորոգման կարիք ունի, քանի որ վերջին վերանորոգումը այնտեղ եղել է 2008 թվականին:

Տարածքի անվտանգության հսկողությունը իրականացվում է սենյակի ներսից՝ գիշերային սպա-հերթապահի և տեսախցիկների միջոցով:

«Փոքր Միերի» անկյուն

Երկրորդ հարկում նախատեսված է «Փոքր Միերի» անկյունը: Այն իրենից ներկայացնում է ապակեպատ պահարան և կահավորված պատեր: Ապակուց պահարանում պահում են աշակերտների պարգևատրումները՝ վզնոցների տեսքով: Պարգևատրումներն անվանական են, որոնք աշակերտներին համարակալված տրամադրվում են երդման արարողության ժամանակ, սակայն մինչև կրթության ավարտը պահվում են այդ անկյունում: Ավարտելուց հետո աշակերտը այն վերցնում է իր հետ: Եթե որևէ մեկը չի ավարտում կրթահամալիրը, ապա մեղալները իրենց չեն տրամադրվում, այլ ոչնչացվում են:

Երդման արարողության ժամանակ երեխաները հացը թաթախում են գինու մեջ ու համտեսում: Տարրան, որի մեջ լցնում են գինին, նույնպես պահվում է այդ ապակե պահարանում: Այն կավից է և ունի հին հայկական ավանդական սպասքի տեսք: Կար նաև հուշամատյան, որտեղ հյուրերը գրառումներ են կատարում:

Պատին փակցված է հայկազունների երդումն ու օրհներգը, ինչպես նաև ՀՀ օրհներգը: Կողքի պատերին փակցված էին հանրապետության նախագահ Ս. Սարգսյանի, պաշտպանության նախարար Ս. Օհանյանի և այլ պաշտոնյաների՝ կրթահամալիր այցելությունների նկարները:

Ջենքի օգտագործում

Ավագ դասարաններում կիրառում են ՏՈԶ տեսակի զենք, որը սև մարտական գլխիկ ունի և նախատեսված է ուսումնական նպատակներով: Պրոցեսը կարգավորված է և իրականացվում է հսկողությամբ ու հերթականությամբ: Վարժությունները կատարելուց առաջ աշակերտները ներկայանում են, վարժությունը ավարտելուց հետո նույնպես զեկուցում են:

Ջենքի օգտագործումը, ինչպես մնացած բոլոր վարժությունների իրականացումը, կանոնակարգված է և գործող կանոններից դուրս ոչինչ չի կատարվում: Դասից առաջ աշակերտները ծանոթանում են այդ կանոններին, ինչից հետո նոր իրականացնում վարժությունը:

Ուսումնական զենքը ստացել են Պաշտպանության նախարարությունից, Իսկ մարտական զենքը՝ Ոստիկանությունից: որ մարտական զենքի մասին է խոսքը?

Մենյակը, որտեղ պահվում են զենքերը, միշտ փակ է և հսկվում է տեսախցիկով, երեխաների համար այն անհասանելի է:

Հերթապահություն

Կողմնակի անձինք կրթահամալիրի տարածք չեն կարող մուտք գործել: Հսկիչ անցակետում աշակերտները հերթապահություն են իրականացնում առավոտը ժամը 8-ից մինչև երեկոյան ժամը 22:00-ն, գիշերը հերթապահություն է իրականացնում

սպայական անձնակազմը: Անվտանգության նկատառումներից ելնելով հերթապահ անցակետում և կրթահամալիրի տարածքում տեղադրված են տեսախցիկներ:

Հերթապահությունը այնպես է սահմանված, որ յուրաքանչյուր աշակերտ ամսեկան հերթապահություն է իրականացնում մեկ անգամ: Հերթապահները զեկուցում են կրթահամալիր եկած անձանց վերաբերյալ տնօրինությանը, որը և թույլատրում է կրթահամալիր մուտք գործել:

Մուտքի մոտ հերթապահող երեխաներից սակայն տեղեկացանք, որ իրենք հերթապահելու են մինչ վաղը առավոտ՝ այսինքն շուրջօրյա: Տնօրենը նշեց, որ հերթապահում են մինչև երեկոյան ժամը 10-ը, 10-ին պետք է քնած լինեն: Հատկանշական է, որ կանոնադրության 133-րդ կետի համաձայն՝ Արգելվում է սովորողներին ժամը 23.00-6.00-ը պահակային կամ այլ ծառայությունում, ինչպես նաև ծանր աշխատանքներում ներգրավելը:

Վերապատրաստումներ

Ուսուցիչների համար վերապատրաստումները հաճախակի բնույթ չեն կրում: Սպայական կազմի համար մեկ անգամ կազմակերպվել է վերապատրաստում Կրթության Ազգային ինստիտուտի հետ միասին: Քանի որ Հանրակրթության մասին օրենքով դաստիարակների վերապատրաստում նախատեսված չէ, ապա օրենքի պահանջից դուրս իրենք վերապատրաստումներ չեն կազմակերպում:

Ավագ դասարաններում դասավանդողների համար վերապատրաստումներ չեն լինում, առկա մասնագետներն իրենք են իրենց համար կազմակերպում վերապատրաստումներ:

Երեխայի իրավունքների վերաբերյալ Կոնվենցիայի կամ կից Արձանագրությունների թեմաներով վերապատրաստումներ նույնպես չեն եղել: Նախորդ տարի երեխաների համար միջազգային մարդասիրական իրավունքի վերաբերյալ մեկօրյա դասընթաց է կազմակերպվել կրթահամալիրի մասնագետների կողմից: Իսկ 2 տարի առաջ կրկին երեխաների համար անց են կացվել սեմինար պարապմունքեր, որի ընթացքում քննարկվել են ծրագրերի լրացուցիչ թեմաները:

Այլ տեղեկատվություն

Հանրակրթական տարբեր դպրոցներին աշակերտները երբեմն գործնական պարապմունքները իրականացնում են Փոքր Միեր կրթահամալիրում, որտեղ կրթահամալիրի երեխաներն են մարզումները անցկացնում դասախոսի հսկողությամբ ու ղեկավարությամբ:

Կրոնի նկատմամբ դիրքորոշումը հստակ է և մեկը՝ Հայ Աստաբեղական եկեղեցին ու քրիստոնեությունը: Դեպք չի եղել, որ աստաբեղական եկեղեցու նկատմամբ վատ քննադատական վերաբերմունք լինի,։ Եթե լինի, ապա նկատողություն կստանան բոլոր նրանք ովքեր քննադատական խոսք կհնչեցնեն: Մյուս կողմից նշվել է նաև, որ երեխաներին ազատ են թողնում, չեն կարող պարտադրել իրենց կամքը կրոնքի հարցերում:

Մոնթե Մելքոնյանի անվան ռազմաուսումնական վարժարան⁷⁴

ՀՀ ՊՆ Մ.Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանը, ռազմամարզական հոսքի հանրակրթական գիշերօթիկ հաստատություն է, որն իրականացնում է ավագ դպրոցի պետական հանրակրթական ծրագրեր (10-րդ, 11-րդ և 12-րդ դասարաններ, համապատասխանաբար 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսեր):

Վարժարանում ընդունելությունն իրականացվում է 15-16 տարեկան արական սեռի ներկայացուցիչների համար: Ընդունելության համար ներկայացվում է ծնողի դիմում-հայտը, այնուհետև երեխան մասնակցում է ընդունելության քննությունների, որը ներառում է նաև հայոց լեզվի թելադրություն:

Ըստ տնօերնի՝ օրինաչափ է ընդունվողների ցածր առաջադիմությունը, որը պայմանավորված է հանրակրթական դպրոցներում կրթության ցածր որակով: Ըստ էության, վարժարան ընդունվողները բարձր առաջադիմություն չեն ունենում, ըստ տնօերնքի, վերջիններիս ավարտական քննությունների պատրաստելու բեռը մնում է վարժարանի ուսերին: Այնուամենայնիվ, տնօերնը վստահեցնում է, որ ավարտական քննությունների ժամանակ շրջանավարտների առաջադիմության ցուցնիշը զգալիոեն բարելավված է լինում: Այս մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ շրջանավարտները կարողանում են ավարտելուց հետո ընդունվել բարձրագույն ուսումնասական հաստատություններ, այդ թվում նաև ռազմաուսումնական հաստատություններ նաև արտերկրում:

Ռազմաուսումնական վարժարանն ավարտելուց հետո ռազմական մասնագիտությամբ մասնագիտությունը շարունակելը պարտադիր պայման չէ: Սաներն

⁷⁴ Չնայած ՀՀ Պաշտպանության Նախարարության կողմից նախապես համաձայնեցված աշխատանքների կատարման պլանին և դիտարկումներ իրականացնելու համար տրված համաձայնությանը՝ Մոնթե Մելքոնյանի անվան ռազմական ուսումնարանի տնօրինությունը հնարավորություն չի տրամադրել ըստ մշակված գործիքների և պլանի խորքային դիտարկումներ և հարցազրույցներ իրականացնել: Կրթահամալիրին վերաբերող տեղեկատվությունը տնօրինության կողմից որակվել է որպես գաղտնի, չնայած օրենսդրական նման որևէ կարգավորումներ և պահանջներ չկան: Կազմակերպությունը այս կրթահամալիրի վերաբերյալ տեղեկություն տրամադրում է միայն տնօրինության հետ անցկացված հարցազրույցի և ՀՀ ՊՆ կայքում առկա սահմանափակ թվով փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա:

Հատկանշական է, որ ռազմական ուսումնարանի կանոնադրությունը հասանելի չէ, և հարցերի մեծամասնությանը հստակ պատասխաններ տրամադրել հնարավոր չէ:

ազատ են իրենց հետագա մասնագիտության ընտրության մեջ, այնուամենայնիվ, վարժարանի միջազգային կապերի շնորհիվ խրախուսվում է նաև հանրապետությունից դուրս ռազմական գործի ուղղությամբ բարձրագույն մասնագիտական կրթության շարունակելը:

Վարժարանում հազվադեպ, սակայն արձրանգրվում են սաների հեռացման դեպքեր: Առավել խիստ և բացառիկ դեպքերում է տնօրինությունն իր նախաձեռնությամբ հեռացնում սովորողներին՝ վստահություն ունենալով, որ վարքագծի խախտման հաճախակի և կոպիտ դրսևորումները կարող են ազդել ընդհանուր վարժարանի և այլ սովորողների վարքագծի վրա: Սովորողների նախաձեռնությամբ վարժարանից դուրս գալու դեպքում, եթե նույնիսկ ծնողները առարկում են, բայց երեխան արտահայտում է վարժարանը լքելու վերաբերյալ իր ցանկությունը, տնօրինությունը երեխային ստիպողաբար չի պահում: Երեխաների նախաձեռնությամբ վարժարանից դուրս գալու դեպքերը հիմնականում պայմանավորված են վարժարանում կրթական գործընթացի կազմակերպման խիստ ռեժիմով:

Երեխաները «քաղաքացիական» կյանքում իրենց հասակակիցների հետ հարաբերվելիս ավելի շուտ նախապատվությունը տալիս են ավելի «ազատ», «ինքնավար» կյանքին, այլ կերպ՝ ծանրաբեռնվածությանը և խիստ ռեժիմին չեն կարողանում համակերպվել: Խիստ ռեժիմի և ծանրաբեռնվածության մասին են վկայում տնօրենի կողմից ներկայացված տեղակն և միջազգային մի շարք մրցաշարերում Մ.Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի սաների հաջողությունները: Ըստ տնօրենի՝ վարժարանի սաները ֆիզիկապես ուժեղ են, ֆիզիկական և երբևէ չեն երկնչել մարտարվեստի կամ ֆիզիկական կարողություններ պահանջող այլ մրցաշարերի ժամանակ հարվածներ ստանալուց: Այնուամենայնիվ, քանի որ տեղական մրցաշարերը հիմնականում տեղի են ունենում հանրակրթական դպրոցների աշակերտների մասնակցությամբ, կազմակերպիչները երբեմն խուսափում է Մ.Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի սաների մասնակցությունից: Հանրակրթական դպրոցների սաների և Մ.Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի սաների կարողությունները դիտարկվում են անհավասար և նման մրցաշարերում նրանց կողմից հաղթանակների ձեռքերում դիտարկվում է «ոչ արդար», անհավասարների մեջ մրցակցություն:

Չնայած իր գործունեության բնույթին՝ որպես կրթական հաստատություն, Մ.Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի գտնվում է ՀՀ ՊՆ վերադասության ներքո և իր բյուջետային աջակցությունը ստանում է ՀՀ ՊՆ բյուջետային պլանով:

Միննույն գործունեություն ունեցող կրթական հաստատությունների՝ «Փոքր Միեր» և Մ.Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի վերադասության համար առկա և գործող տարբեր մեխանիզմները որևէ կերպ բացատրություն-հիմնավորում չունեն: Պարզ չէ, թե ինչ չափանիշներով է կրթական գործունեություն ծավալող կազմակերպությունների համար կառավարման տարբեր պլաններ իրականացվում:

Տարբերությունները նկատվում են նաև կրթական գործի կազմակերպման հարցում:

ՀՀ ՊՆ Մ.Մելքոնյանի անվան վարժարանում կրթությունը նպատակ ունի հանրակրթական ծրագրերի, ռազմական գիտելիքների ու հմտությունների պարտադիր նվազագույնի ուսուցման և անհրաժեշտ ֆիզիկական պատրաստության միջոցով ապահովել սաների անհատականության ձևավորումը, նրանց նախապատրաստել ինքնուրույն կյանքի և ռազմաուսումնական հաստատություններ ընդունվելու, մասնագիտական ընտրության, քաղաքացիության և հայրենասիրության դաստիարակում: Վարժարանում սովորում են միայն արական սեռի պատանիներ: Ուսուցումն անվճար է: Ըստ տնօերնի ներկայացրած տեղեկատվության՝ վարժարանում դասավանդվում են հանրակրթական դպրոցների համար նախատեսված բոլոր առարկաները: Այնուամենայնիվ, դասավանդվող առարկաների ցանկը և դասավանդման պլանները չեն տրամադրվել կազմակերպությանը՝ դրանք դիտարկվելով որպես գաղտնի տեղեկություններ:

ՀՀ ՊՆ Մ.Մելքոնյանի անվան վարժարանում սովորողների օրվա ռեժիմը ընդհանրություններ ունի զինվորական ծառայության ռեժիմի հետ, մասնավորապես՝ առավոտյան վեր կացի, օրվա ընթացքում հերթապահության, սննդակարգի, ֆիզիկական վարժությունների առումով: Հարկ է նշել, նաև որ վարժարանի սաները կրում են զինվորական համազգեստ և կոշիկներ, ուսուցիչներն ողջունում և բարևում են զինվորական կանոններով: Վերջիններիս նջասենյակները, ճաշարանը կահավորված է զորամասերի նմանությամբ: Ընդհանուր առմամբ, վարժարանում ուսուցման կազմակերպման գործընթացն մոդելավորում է զինվորական ծառայությունը: Զինվորական ծառայության ռեժիմից բացառություն կարելի է դիտարկել թերևս սովորողների կանոնակարգված արձակուրդները յուրաքանչյուր շաբաթ՝ շաբաթ և կիրակի օրերին:

Խորացված ուսումնասիրում են «Նախնական զինվորական պատրաստություն», «Ֆիզիկական պատրաստություն» և «Լեռնային պատրաստություն» առարկաները: Ֆիզպատրաստությունը անցկացվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերում գործող ֆիզպատրաստության նորմերին և ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված ծրագրերին համապատասխան, որի մեջ ներառվում է մարմնամարզություն, արգելքների հաղթահարում, ձեռնամարտ, արագընթաց տեղաշարժեր, համալիր պարապմունքներ:

ՀՀ ՊՆ Մ.Մելքոնյանի անվան վարժարանում կազմակերպության ներկայացուցիչներին տնօրինության կողմից հնարավորություն չտրամադրվեց դիտարկել այն բոլոր սենյակները, որտեղ պահպանվում ենք զենքերը կամ մոդելավորված զենքերը, որոնք օգտագործվում են պարապմունքների ժամանակ: Ըստ տնօրինության՝ դրանց ստացման, պահման և օգտագործման տեղեկությունները ևս համարվում են գաղտնիք:

Ըստ Պաշտպանության նախարարության կայքում տեղադրված տեղեկությունների՝ ուսումնական հաստատությունում մեծ ուշադրություն է դարձվում կրակային

պատրաստության պարապմունքներին, որի նախապատրաստման և բարձր արդյունքներ ցուցաբերելու նպատակով ուսումնական գործընթացում կիրառվում է «Նշանակետ» վարժասարքը, որում առկա են ԱԿ-74 ինքնաձիգ և Դրագունովի դիպուկահար հրացան: Դրանց օգնությամբ սաները յուրացնում են հրաձգության վարժաձևերի էլեմենտները, ուսումնական տարվա ընթացքում վարժարանի հրաձգարանում անցկացվում են նաև հրաձգության առաջնություններ փոքր տրամաչափի SO2-8 հրացանից և լավագույն արդյունքներ ցուցաբերող սաները մասնակցում են Երևանում անցկացվող ռազմականացված եռամսյակի առաջնությանը՝ գրավելով բարձր մրցանակային տեղեր: Ջորային հրաձգարանում պարբերաբար անցկացվում են նաև նախնական և ստուգողական վարժություններ մարտական փամփուշտներով, ինչի արդյունքում էլ մասնակցելով Ղրղզստանի Հանրապետությունում կայացած ՀԱՊԿ անդամ պետությունների ռազմամարզական երիտասարդական «Սոյուզ 2008 Իսիկ Կուլ» միջազգային ուսումնամարզական հավաքներին, վարժարանի սանն արժանացել է «Լավագույն դիպուկահար» կոչմանը՝ պարգևատրվելով պատվոգրով և մրցանակներով: Առանձնահատուկ կարևորություն է տրվում նաև շարային պատրաստությանն ու համագործակցության կանոնադրությունների իմացությանը:

1-ին կուրսում տեսական և գործնական պարապմունքների ժամանակ սանը յուրացնում է առարկայի բովանդակությունը, նշանակությունը, ստանում լեռնագնացի ֆիզիկական, տեխնիկական և մարտավարական պատրաստություն: Ծանոթանում՝ ռազմական տուրիզմի ձևերին, ստանում՝ գիտելիքներ գույքի և հանդերձանքի, անվտանգության կանոնների պահպանման, արշավների ժամանակ առաջին բուժօգնության ապահովման մասին, կատարում՝ մարզական վերելք և վայրէջք: 2-րդ կուրսում կատարելագործում են ստացած գիտելիքները դաշտային պայմաններում, 3-րդ կուրսում հմտանում կատարվող բնական արգելքների, լեռնային գետերի հաղթահարում, մարզական վերելք և վայրէջք:

Ուսումնական տարին բաժանվում է կիսամյակների, պայմանականորեն գործում է նաև քառորդային գնահատման կարգը առաջադիմության վերահսկման և ծնողական ժողովների ժամանակ (որոնք հրավիրվում են քառորդն ամփոփվելիս) ծնողների ուշադրությունը գրավելու համար, ապա կիսամյակային գնահատականների միջոցով ամփոփվում է տարեկան գնահատականները: Դասի տևողությունը 45 րոպե է: Վեցերորդ դասաժամի ավարտից հետո ժամը 14.00-ից մինչև 15.00-ն սաներին տրվում է ճաշելու և հանգստի համար ժամանակ, որից հետո ժամը 15.00-ից հետո սկսվում է ինքնապատրաստության դասաժամերը, որի տևողությունը 30 րոպե է:

Ուսումնական տարվա ընթացքում սաներին տրվում են արձակուրդներ աշնանային՝ հոկտեմբերի վերջին մեկ շաբաթ, ձմեռային՝ դեկտեմբերի 25-ին երկու շաբաթ,

գարնանային՝ մարտի վերջին մեկ շաբաթ և ամառային՝ մայիսի վերջին երեք ամիս տևողությամբ:

Համաձայն վարժարանի կանոնադրության՝ 1-ին կուրսի սաները ուսումնական տարին ավարտելուց հետո, երկու շաբաթով մեկնում են ճամբարային հավաքների՝ գործնական պարապմունքներ կատարելու նպատակով: Անցկացվում են պարապմունքներ կրակային, մարտավարական, ինժեներական, լեռնային, ռազմաբժշկական և ֆիզիկական պատրաստություններից, ռազմական տեղագրությունից: Հավաքներից հետո իրակացնելով բազմօրյա արշավներ՝ սաները ոտքով վերադառնում են վարժարան:

Ուսումնական տարվա ավարտին՝ համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված ուսումնական տարվա ավարտական և փոխադրական քննությունների կազմակերպման աշխատակարգի, մայիս-հունիս ամիսներին սաները հանձնում են միասնական և պետական ավարտական քննություններ «Ֆիզպատրաստություն», «Բնագիտություն», «Հայոց լեզու և գրականություն», «Մաթեմատիկա», «Օտար լեզու» և «Հայոց պատմություն» առարկաներից, որոնք կազմակերպվում և անցկացվում են կենտրոնացված կարգով՝ միասնական քննությունների դեպքում՝ քննական կենտրոնում, ավարտականը՝ տեղում, գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից կազմած թեստերով: ⁷⁵

Հանրակրթական դպրոցներ

Ըստ ՀՀ կառավարության N 439-Ն⁷⁶ որոշման՝ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան անցնում են 8-9 դասարաններում, ինչպես նաև միջնակարգ (ավագ) դասարանների 10-11-րդ դասարաններում: Հետևաբար, առարկան անցնում են նշված դասարանների բոլոր աշակերտները: Ուսուցման կարգը պարտադիր է բոլոր աշակերտների համար:

Ուսուցման ծրագիրը

«Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագիրը մշակում և հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության,

⁷⁵ http://www.mil.am/hy/institutions/59/p/teaching_process

⁷⁶ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77183>

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության հետ⁷⁷:

Պարապմունքների համար սահմանված ժամաքանակը կարող է երկարացվել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության, Հայաստանի Հանրապետության պաշտպանության, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունների և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կողմից համատեղ սահմանված կարգով:⁷⁸

ՀՀ կառավարության 08.04.2010թ. որոշման 439-Ն որոշման 19-րդ կետի համաձայն՝ «Հասարակություն, հասարակական գիտություն» ուսումնական բնագավառի տարրական կրթության ծրագիրը պետք է ներառի նախնական, տարրական գիտելիքներ, պատկերացումներ մարդկանց լեզվական, ազգային, ռասայական, կրոնական բազմազանության, հասարակական վարքի կանոնների, իր իրավունքների ու պարտականությունների, մարդկանց միջև հավասարություն, արդարություն, բարեկամություն և խաղաղություն հաստատելու անհրաժեշտության մասին:

Նույն որոշման 27-րդ կետի համաձայն՝ հիմնական կրթության (միջին դպրոցի) նպատակներից մեկն է նաև սովորողի հայրենիքի պաշտպանությանն իր մասնակցությունն ունենալու պատրաստակամության և հետագայում զինծառայության անցնելու կարևորության գիտակցման կարևորումը:

Որոշման 37-րդ կետում ներկայացված է միջին դպրոցի «Հասարակություն, հասարակական գիտություն» ուսումնական բնագավառի նպատակներն ու բովանդակությունը: Ծրագիրն ի թիվս այլոց, նաև նպատակ է հետապնդում աշակերտներին ներկայացնել այլ ժողովուրդների հանդեպ հարգալից վերաբերմունքի դրսևորումը, մարդու իրավունքների վերաբերյալ պատկերացումների ստեղծումն, և այլ նպատակներ, որոնք ուղղված են ժողովրդավարության և հանդուրժողականության դաստիարակմանը երեխաների մեջ (կետեր 38-39):

Միջին դպրոցի «Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն» ուսումնական բնագավառի ծրագիրն ի թիվս այլ թեմաների պետք է նաև ներառի հայոց բանակի պատմական ավանդույթների, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի դերի, առանձնահատկությունների և խնդիրների մասին (կետ 45, ենթակետ 5):

Ավագ դպրոցների ուսումնական ծրագրի «Հասարակություն, հասարակական գիտություն» ուսումնական բնագավառի նպատակներից և ծրագրի բովանդակությունից

⁷⁷ . «ՀՀ կրթության և գիտության նախարարի և ՀՀ պաշտպանության նախարարի համատեղ հրամանը ՀՀ հիմնական, ավագ, միջազգային, հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, կրթահամալիրներում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների նապագրակոչային պատրաստության կանոնադրությունը հաստատելու մասին» 09.11.2011թ. թիվ 1222 որոշում, կետ 26:

⁷⁸ տե՛ս նույն տեղը:

կարելի է եզրակացնել, որ այն ընդհանուր առմամբ ուղղված է երեխաների միջև հայրենասիրության և ազգային արժեքների, պարտաճանաչ քաղաքացի դաստիարակելուն (կետեր 57-58): Մարդու իրավունքների վերաբերյալ սովորողներին տրամադրվում է տեղեկություններ «Հասարակակազմություն» առարկայի շրջանակներում:

Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն առարկայի շրջանակներում ավագ դպրոցի աշակերտները անցնում են նաև հայոց բանակի կազմավորման և կայացման պատմական ժամանակաշրջանների մասին թեմա:

Հանրակրթական հիմնական ծրագրի նորմատիվային ծավալը բաշխվում է ըստ ուսումնական տարիների և շաբաթների: Ուսումնական շաբաթների թիվը սահմանվում է՝ 3-րդ դասարանից մինչև 12-րդ դասարանները՝ առնվազն 34 շաբաթ:

Միջին դպրոցի 8-9 դասարաններից երեխաները ծանոթանում են նաև «Նախնական զինվորական պատրաստություն» առարկային: Առարկան շարունակում են անցնել 8-11-րդ դասարաններում:

«Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ժամերը 8-11-րդ դասարաններում կազմում է շաբաթը մեկ ժամ:⁷⁹

Ըստ 8-րդ և 9-րդ դասարանների հանրակրթության հիմնական դպրոցի «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայական ծրագրի՝ առարկայի ներկայացման համար հատկացվում է 34 ժամ, որից 6 ժամը հատկացվում է զորամասերում և հենակետային դպրոցներում անցկացվող գործնական պարապմունքներին⁸⁰:

Ըստ ուսումնական ծրագրի՝ երեխաներին տրամադրվում է ինքնաձիգն ոչ լրիվ քանդելու և հավաքելու սկզբնական ունակություններ, և երեխաները 8-րդ դասարանում կատարում են պրակտիկ աշխատանքներ: 8-րդ դասարանի առարկայական ծրագրի համաձայն՝ աշակերտները անցնում են «Կրակային պատրաստություն» թեման՝ 4 ժամ տևողությամբ, որից առաջին մասը՝ 1 ժամ տևողությամբ, տեսական է: Թեմայի 2-րդ մասը իրենից ներկայացնում է պրակտիկ աշխատանք՝ ինքնաձիգը ոչ լրիվ քանդելն ու հավաքելը՝ 3 ժամ: Այս դասարանում անցնում են նաև »Շարային պատրաստություն» թեման, որը բաղկացած է մեկ ժամ տեսական մասից և 2 ժամ՝ պրակտիկ մասից, որը ներառում է շարային տարբեր վարժությունների կատարումը:

9-րդ դասարանի առարկայական ծրագրից հետևում է, որ երեխաները անցնում են կրակային պատրաստություն 5 ժամ տևողությամբ, որից մեկական ժամ՝ «ինքնաձիգի մասերի ու մեխանիզմների նշանակում», «Ավտոմատ և մենահատ հրաձգություն»:

⁷⁹ ՀՀ կրթության և գիտության նախարարի 04.05.2015թ. թիվ 369-Ն հրաման՝ Հանրակրթական հիմնական, ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2015-2016 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին // <http://edu.am/DownloadFile/7200arm-HramanUsplan.pdf> :

⁸⁰ տե՛ս ՀՀ կրթության և գիտության նախարարի 26.01.2012թ. 69Ս-Ք հրամանը // <http://www.aniedu.am/school/standartsaprograms.html> :

Ավտոմատի մաքրումը և պահպանումը» թեմաներին է հատկացվում, իսկ 1 ժամ՝ հրաձգային կատարմանը՝ փոքր տրամաչափի (օդամղիչ) հրացանից: Շարային պատրաստություն թեմային 9-րդ դասարանում նույնպես հատկացվում է 3 ժամ⁸¹:

10-րդ դասարանում «Կրակային պատրաստություն» թեմայի շրջանակներում ինքնաձիգից կրակ վարելու ժամերի քանակը 4-ն է, որից 1-ը նվիրված է հրաձգության ժամանակ անվտանգության կանոններին, իսկ 3-ը՝ նշանառության կատարմանը: Շարային պատրաստության թեմային կրկին հատկացված է 3 ժամ: 11-րդ դասարանում «Կրակային պատրաստություն» թեմային հատկացվում է 6 ժամ, որի շրջանակներում 2 ժամ հատկացվում է ավտոմատից ռազմական փամփուշներով հրաձգության կատարմանը:

Վերոգրյալից հետևում է որ «Կրակային պատրաստություն» թեմայի վերաբերյալ աշակերտներին ի սկզբանե տրամադրվում է տեսական գիտելիքներ ինքնաձիգի, ինզնաձիգի օգտագործման կանոնների վերաբերյալ, այնուհետև կատարվում են ինքնաձիգի օգնագործման պրակտիկ աշխատանքներ:

Պետք է նշել, որ 8-ից մինչև 11-րդ դասարաններում ՆԶՊ առարկայի մեջ ներառված են նաև «Միջազգային մարդասիրական իրավունք» (մեկական ժամ յուրաքանչյուր դասարանում), «Առաջին բուժօգնության հիմունքներ» թեմաները (8-րդ դասարան՝ 3 ժամ, 9-րդ դասարան՝ 4 ժամ, 10-րդ դասարանում՝ 6 ժամ, 11-րդ դասարանում՝ 4 ժամ): 8-րդ դասարանում 4 ժամ տրամադրվում է «Անվտանգ կենսագործունեություն» առարկան:

«Նախնական զինվորական պատրաստություն» առարկան գնահատվում է կիսամյակային և տարեկան գնահատականներով՝ ընթացիկ գնահատականների հիման վրա:⁸²

«Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի լրիվ դասընթացն ավարտած պատանիների ցուցակը՝ ամփոփիչ գնահատականներով, ուղարկվում է նրանց գրանցման վայրի զինկոմիսարիատ:

Աշակերտների գնահատումը 10-11-րդ դասարաններում բաղկացած է երեք մասից՝ բանավոր պատասխան, որի ընթացքում ներկայացվում է առարկայի տեսական մասը, Շարքային պատրաստության գնահատում, Մարտավարական և կրակային պատրաստության գնահատում՝ հետևյալ նորմացույցերի համաձայն.⁸³

⁸¹ տե՛ս նույն տեղը:

⁸² «ՀՀ կրթության և գիտության նախարարի և ՀՀ պաշտպանության նախարարի համատեղ հրամանը ՀՀ հիմնական, ավագ, միջազգային, հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, կրթահամալիրներում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների նապագորակչային պատրաստության կանոնադրությունը հաստատելու մասին» 09.11.2011թ. թիվ 1222 որոշում, կետ 30

⁸³ տե՛ս նաև թիվ 1222 որոշման 43-65 կետերը:

2. Մարտավարական և կրակային պատրաստության գնահատույց կատարել հետևյալ նորմատիվների համաձայն.

հ/ն	Նատարվող նորմատիվի անվանումը	«զինա- զանց» 10-9 միա- վել	«լավ» 8-7 միավոր	«քաղա- յար» 6-4 միա- վել
1.	Թշման օբյեկտին գալուստի մոտե- նալ վազմագ և ապառվ 50 ս (20 ս, 10 ս, 20 ս)	40 վրկ	45 վրկ	55 վրկ
2.	Ձևիկ հարձակումը շարժով 200 ս հե- տադրարարմից, ակամապայթուցիկ արգիլակայանների հարթախառնակ և 25-40 ս հետադրարարմից հակա- տակարարի վրա նմանակների նետումով:	1 ք 30 վրկ	2 ք	2 ք 30 վրկ
3.	Տեղանքում 300-3000 ս հետադրար- արմ վրա երեք կազմակազմների (նշանակետերի) հետադրարարմ ուշում	4ք	4 ք 30 վրկ	5 ք
4.	Ինքնակազմի ու լրիվ քանակում	19 վրկ	21 վրկ	23 վրկ
5.	Ինքնակազմի հավաքումը ու լրիվ քան- ակումը հետո	32 վրկ	34 վրկ	36 վրկ
6.	Պահեստատուի վերադարձումը փամփուշումնեղով (15 փամփուշտ)	21 վրկ	24 վրկ	28 վրկ
7.	Օդանվել (ՏՕՏ) կազմակազմի կրակ վարելը (5 կրակաց, միավոր)	45-50	38-44	30-37

Սովորողները, չեն ենթարկվում զինվորական կարգապահական կանոնադրքին: Ծրագրի մեջ ներառված են հետևյալ թեմաները.

8-րդ դասարան՝ Հայ զինվորականի վարքականոնը, ՀՀ ԶՈւ համագործակցության կանոնադրություններ

9-րդ դասարան՝ Համագործակցության կանոնադրություններ

10-րդ և 11-րդ դասարաններ՝ ՀՀ ԶՈւ համագործակցության կանոնադրություն

Վերահսկողություն

ՆԶՊ-ի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ: Ուսումնական ծրագրերի մշակումը, ուսուցիչների վերապատրաստման հարցը, դասերի վարման հարցերը և մնացյալ այլ հարցերի կառավարումը մտնում է ԿԳՆ-ի լիազորությունների մեջ:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ համատեղ հաստատում է Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատությունների նախնական զինվորական պատրաստության կանոնադրությունը՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և այլ շահագրգիռ գերատեսչությունների ու կազմակերպությունների հետ:

ՀՀ ՊՆ-ի դերը ՆԶՊ-ի դասերի պատրաստման և վարման շրջանակներում գրեթե աննշան է, և վերջինիս մասնակցությունը այդ առարկայի դասավանդման մեջ նկատվում է միայն հետևյալ հարցերում.

- պահեստագործի սպաներից ուսումնական հաստատությանը ներկայացնում է բարձրագույն ռազմական կրթությամբ կամ բարձրագույն կրթությամբ թեկնածուների տվյալները, իսկ այդ հաստատության տնօրենն արդեն մրցույթի արդյունքում ընդրում և նշանակում է ուսումնական հաստատության ռազմական ղեկավարին,

- համար կազմակերպում է մարտական փամփուշտներով հրաձգություն, ռազմահայրենասիրական խաղեր, մրցումներ, այլ միջոցառումներ, որոնք նախատեսված են ուսումնական ծրագրով

- ուսումնական հաստատությանը կցում է զորամաս կամ զինվորական ուսումնական հաստատություն⁸⁴:

Զենքի օգտագործման հաճախականությունն ու կանոնները

Զենքի օգտագործման հաճախականությունը հետևյալն են.

8-րդ դասական - ինքնաձիգը ոչ լրիվ քանդելն ու հավազելը՝ 3 ժամ

9-րդ դասարան - Ավտոմատ և մենահատ հրաձգության կատարումը: Ավտոմատի մաքրումը և պահպանումը՝ մեկ ժամ: Հրաձգության կատարումը փոքր տրամաչափի (օդամղիչ) հրացանից /1 ժամ/:

10-րդ դասարան - նշանառության կատարում, հրաձգության կատարումը անշարժ թիրախների վրա՝ 3 ժամ:

11-րդ դասարան – ինքնաձիգից կրակ վարելը՝ 3 ժամ:

Համազգեստ

Հանրակրթական դպրոցներում երեխաները չեն կրում զինվորական համազգեստ, իսկ զինդեկը պարտավոր է աշխատանքի ընթացքում կրել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից հաստատված նմուշի զինվորական համազգեստ, որը հատկացվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության միջոցներով և հայտերով:

⁸⁴ տե՛ս ՀՀ կառավարության 25.08.1999թ. թիվ 532 որոշումը «Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում նապագորակոչային պատրաստության կարգը հաստատելու մասին», <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=91340>

Հանրակրթական դպրոցներում ՆԶՊ առարկայի դասավանդում

ՆԶՊ առարկան դասավանդող մոտ 20 ուսուցչի հետ իրականացվել է հարցազրույց բացառապես ՆԶՊ առարկայի, այդ առարկայի դասավանդման ու դասավանդողների վերաբերյալ հարցերի շուրջ:

Իրականացված հարցազրույցների արդյունքում պարզ է դարձել, որ նախնական զինվորական մասնագիտության ուսուցիչների համար զինվորական մասնագիտությունը պարտադիր է: Վերապատրաստումներ երբեմն ունենում են, օրինակ տարվա ընթացքում հնարավոր է 3 անգամ լինի տարբեր թեմաներով՝ առաջին բուժօգնության, փրկարարության, արտակարգ իրավիճակների և այլ թեմաներով: Վերապատրաստումները անցնում են Կրթության ազգային ինստիտուտում: Նախկինում վերապատրաստումները տարին մեկ անգամ են անցկացվել, ներկայումս սակայն ավելի քիչ են լինում: Վերապատրաստումների հաճախականությունը կախված է նրանից, թե որ բաժնի աշխատող են: Եթե քաղաքաշտպանության բաժինն է, վերապատրաստումները երկու տարին մեկ է, իսկ ՆԶՊ-ի մանկավարժի որակավորման համար հինգ տարին մեկ է լինում:

Հանրակրթական դպրոցները զինվորական ղեկավարներ չունեն: Դպրոցի զինղեկը ինքնին հանդիսանում է ՆԶՊ ուսուցիչ:

Հանրակրթական դպրոցներում ՆԶՊ-ի ուսուցումը ենթադրում է հոգեբանության, մարտական ոգու, կարգապահության և ֆիզիկական պատրաստվածության ուսուցում: Աշակերտները պարզ և մատչելի ձևով նախնական պատկերացում են կազմում ռազմարվեստի, զինճառայության մասին, ծանոթանում զինվորական կյանքին ու հոգեբանորեն պատրաստվում հետագա ճառայությանը:

ՆԶՊ բուն առարկայական ծրագիրը ներառում է ինչպես տեսական, այնպես էլ գործնական մաս: Գործնական մասը սակայն չի ենթադրում ֆիզիկական վարժություններ: ՆԶՊ ծրագիրը պարունակում է հետևյալ թեմաները՝

- Մարտավարություն
- Կրակային պատրաստում
- Շարային
- Առաջին բուժօգնություն
- Ռազմարվեստի պատմություն
- Ռազմական տեղագրություն
- Միջազգային մարդասիրական իրավունք

Ծրագիրը պարտադիր բնույթ է կրում և աղջիկներ, և տղաների համար: Դպրոցում կան թեմաներ, որ անհատական են անցնում, բայց հիմնականում դասերը անց են կացվում խմբակային: Ուսուցիչներից նշել են, որ հանդիպել են դեպքեր, երբ երեխան իր կրոնի պատճառով հրաժարվել է զենք քանդել, հավաքել և մասնակցել երդման տեքստի ընթերցանությանը: Վերջինիս մայրը խնդրել է նրան ազատել առարկայից, սակայն դպրոցի ուսուցչական կազմը համոզել է և երեխան մասնակցել է դասերին, ուղղակի զենքի հետ որևէ առնչություն չի ունեցել:

Ընդհանուր առմամբ ՆԶՊ դասաժամի առաջին 5 րոպեն հատկացվում է դասակը շարելու, զեկուցելու, ողջունելու և զինված ուժերի կամ ՀՀ օրհներգը հնչեցնելու համար, որից հետո իրականացվում է աշակերտների հաշվառում, պատասխանում են նախորդ դասի տրված անհասկանալի հարցերին: Բուն դասապրոցեսի ընթացքում ներկայացվում է նոր նյութը, իրականացվում է նոր նյութի վերաբերյալ հարցուպատասխան: Դասաժամը ավարտվում է կրկին զինված ուժերի օրհներգը հնչեցնելով:

ՆԶՊ առարկայի ժամանակ ֆիզիկական պատրաստվածություն առանձին չեն անցնում: Ֆիզպատրաստություն անցնում են որպես առանձին առարկայական ծրագիր: Գոյություն ունեցող բոլոր ֆիզիկական պարապմունքները պարտադիր են բոլոր երեխաների համար: Երեխաները իրենց կամքով չեն կարող բացակայել դասերից: Ֆիզիկական պարապմունքներից կարող են բացակայել միայն այն դեպքում, երբ կա տնօրենի հրամանը, իսկ հրամանը հիմնվում է բժշկական փաստաթղթի վրա, որը հավաստում է առողջական խնդիրների առկայությունը:

Չեն գրանցվել դեպքեր, որ ծնողները դիմեն իրենց երեխաներին ՆԶՊ առարկայից կամ առանձին թեմաներից ազատվելու խնդրանքով: Բայց եթե կարիք է լինում՝ պայմանավորված առողջական վիճակով, պարապմունքները անհատական են անցնում:

Աշակերտները հրազենից սովորում են կրակել 8-րդ դասարանից սկսած՝ ծրագրով նախատեսված կարգով: 9-րդ դասարանից գործնական պարապմունքներ են անցնում: 8-9-րդ դասարանում կրակում են օդամղիչից: 10-րդ դասարանում գործնականը համատեղում են տեսականի հետ: Կրակում են կրկին օդամղիչից: 11-րդ դասարանում դաշտային եռօրյա պարապմունքներ են անցնում, իսկ ավարտական 12-րդ դասարանում ընդհանրապես ՆԶՊ առարկա չեն անցնում: Դպրոցում պահվող և երեխաների կողմից կիրառվող զենքերը իսկական չեն, փամփուշտները նույնպես իսկական չեն:

Չենքի կիրառման հետ կապված բոլոր աշխատանքները ուսումնական բնույթի են: Ուսումնական զենքով չեն կրակում, միայն քանդում և հավաքում են: Ուսումնական զենքը սովորաբար ստանում են ներքին գործերի նախարարությունից/ոստիկանություն/, իսկ

օդամղիչը դպրոցներն են ձեռք բերում: Կրակելու համար անհրաժեշտ է տոզ, իսկ տոզի համար անհրաժեշտ է հրաձգարան, բայց ոչ բոլոր դպրոցները ունեն հրաձգարան, ինչի պատճառով էլ որոշ դպրոցներ տոզով չեն կրակում:

Դպրոցներին հիմնականում տրամադրվում են այն **զենքերը**, որոնք իրենց պիտանելիության ժամկետը ավարտել են և զցել են իրենց որակական հատկությունները որպես զենք, այսինքն՝ մարտական հատկությունները չի համապատասխանում պահանջարկին, այդ զենքերը պաշտպանության նախարարության կողմից դուրս է գրվում և տրամադրվում է ոստիկանությանը, որը ներառվում է պահեստային մասում և հատկացվում է դպրոցներին: Տրամադրվող մարտական զենքի փողը ծակում են, փակադակի մեջից ասեղն ու զսպանակը հանում, որից հետո հնարավոր է դառնում այն օգտագործել, որպես ուսումնական, որը տրվում է դպրոցներին կրակային պատրաստության օժանդակելու համար:

Բոլոր դպրոցներում զենքը պահպանվում է զինանոցում, ինչը հսկում են պահակները: Զինանոցի դուռը ճաղավանդակներով է: Կա նաև ազդանշանային համակարգ, եթե ինչ-որ մեկը փորձի դուռը բացել կամ կոտրել, ապա ազդանշանային համակարգը կմիանա: Երեխաները ինքնուրույն որևէ կերպ չեն կարող զենքին հասանելիություն ունենալ: Դպրոցներում կա զենքի օգտագործման ներքին կանոնակարգ: Անվտանգության կանոնները սովորելուց հետո է միայն հնարավոր զենքը օգտագործել: Ընդ որում՝ առանց ուսուցչի հսկողության աշակերտը չի կարող ինքնուրույն զենքը վերցնել, քանդել-հավաքել կամ կրակել: Արձակուրդների ժամանակ զենքը ի պահ է տրվում ոստիկանությանը, դասերի ժամանակ պահակներն են հսկում, իսկ ՆԶՊ դասերի ժամին ուսուցիչները:

Զենքի հետ աշխատանքը տարեկան 6 ժամ է: Ավագ դպրոցում այն կազմում է 12 ժամ: Գնահատումը իրականացվում է զենք քանդել-հավաքելու վարժության միջոցով, ինչի ժամանակ ղեկավարվում են նորմատիվներով: Մասնավորապես՝ 17 վայրկյան քանդելու համար է նախատեսված, 27 վայրկյան՝ քանդել-հավաքելու: Սակայն ուսուցիչները ավելի մեղմ մոտեցում են ցուցաբերում և պահանջում, որ առավելագույնը 40 վայրկյանում քանդեն ու հավաքեն:

Դպրոցների ՆԶՊ առարկայի դասասենյակները հարմարեցված են՝ կան համապատասխան նկարներ, պաստառներ, զենքի մակետներ և համապատասխան կահավորանք ՆԶՊ առարկայի 7 բաժինների համար: Կահավորանքը ստանում են պաշտպանության նախարարությունից: Դասասենյակի դիմային պատին սովորաբար փակցվում է ՀՀ նախագահի և ՀՀ ՊՆ նախարարի դիմանկարը, ինչպես նաև երդման տեքստը: Տարբեր ուսուցիչների հետ զրույցից պարզ դարձավ սակայն, որ ոչ բոլոր դպրոցների լսարաններն են հազեցած ու կահավորված անհրաժեշտ պարագաներով: Քանի

որ գույքի տրամադրումը դպրոցներին հավասարապես չի իրականացվում: Բացթողումները դպրոցները իրենց միջոցների հաշվին են իրականացնում:

Ռազմական պատրաստության դասերը երբեմն անց են կացնում Նուբարաշենի կրակադաշտում, հատուկ պլանով ու ծրագրով: Լինում է, որ մի քանի դպրոց միաժամանակ են այնտեղ դասն անց կացնում: Նման դեպքերում ավտոբուսի համար գումարը Պաշտպանության նախարարությունն է հատկացնում: Այնտեղ անց են կացվում 7 բաժինների գործնականները և կրակում վարժությունը: Հնարավոր է, որ գործնական պարապմունքները եռօրյա լինեն: Բացի այդ գործնական դասերը անց են կացնում նաև դպրոցների շարային հրապարակներում: Նման դասերը միշտ սկսվում են շարային քայլով և վերջանում են հիմնը երգելով:

ՆԶՊ ժամերին չի արձանագրվում ու հաշվվում, թե յուրաքանչյուր աշակերտ քանի անգամ է կրակել, հաճախ մեկ դասին 3-4 երեխա է հասցնում կրակել, քանի որ դասը 40 րոպե է և ոչ բոլորն են հասցնում:

Որոշ ուսուցիչների կողմից նշվել է, որ 12-րդ դասարանում ՆԶՊ առարկան չանցնելը լուրջ խնդիր ու բացթողում է: Քանի որ աշակերտ ուսուցիչ կապը այդ ընթացքում խզվում է: Մեկ այլ խնդիր է այն, որ երեխաների հետաքրքրությունը այդ առարկայի նկատմամբ վերացել է: Սա բացատրվում է նրանով, որ երեխաները տեսնում են, թե ինչ վիճակ է տիրում առաջին զծում և վերաբերմունքը փոխվում է: Բացի այդ, ընտանիքներում ճիշտ դաստիարակություն չի տարվում այդ ուղղությամբ, իսկ համազգեստ կրող մարդը գնահատանք չունի հասարակության կողմից:

Հավելված N 1
 ՀՀ կառավարության 1998 թվականի
 նոյեմբերի 11-ի N 706 որոշման

**ԽԱՂԱՂ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԶՈՐՔԵՐՈՒՄ
 ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄՆՆԴԻ ՕՐԱԿԱՆ
 ՄԻՋԻՆ ՆՈՐՄԱՆ
 (ՎԵՐՆԱԳԻՐԸ ԼՐԱՅ. 07.03.07 N 349-Ն)**

ՄՆՆԴԱՍԹԵՐՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄՆՆԴԻ ՆՈՐՄԱՆ ՄԵԿ ՕՐԿԱ ՀԱՄԱՐ (ԳՐԱՄ)
ՀԱՅ՝ ՑՈՐԵՆԻ ԱԼՅՈՒՐԻՑ, 1-ԻՆ ՏԵՍԱԿԻ	750
ՁԱՎԱՐԵՂԵՆ	120
ՄԱԿԱՐՈՆԵՂԵՆ	40
ՄԻՍ, ՄՍԱՍԹԵՐՔ	175
ՁՈՒԿ՝ ԱՌԱՆՑ ԳԼԽԻ	100
ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՅՈՒՂ, ՄԱՐԳԱՐԻՆ	20
ԿԱՐԱԳ	20
ՊԱՆԻՐ	25
ԿԱԹ	100
ՀԱՎԻ ՁՈՒ (ՇԱԲԱԹՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ)	4 ՀԱՏ
ԲՈՒՍԱԿԱՆ ՅՈՒՂ	20
ՇԱՔԱՐ, ՇԱՔԱՐԱՎԱԶ	70
ԱՂ՝ ԿԵՐԱԿՐԻ	20
ԹԵՅ	1
ՏՈՄԱՏԻ ՄԱԾՈՒԿ	6
ԴԱՓՆԵՏԵՐԵ	0,2
ԿԱՐՏՈՖԻԼ	600
ԲԱՆՁԱՐԵՂԵՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝	260
ԿԱՂԱՄԲ	130
ԳԱԶԱՐ	50

ԳԼՈՒԽ ՍՈՒՅ	50
ԲԱԶՈՒԿ	30
ՄԱՆԱՆԵԽԻ ՓՈՇԻ	0,3
ՏԱՔԴԵՂ	0,3
ՔԱՑԱԽ	2
ՀՅՈՒԹ	200
ԼՈՒՑԿԻ՝ ՄԵԿ ԱՄՍՎԱ ՀԱՄԱՐ	6 ՏՈՒՓ
ԾԽԱԽՈՏ՝ ԱՌԱՆՑ ՖԻԼՏՐԻ, ՄԵԿ ՕՐՎԱ ՀԱՄԱՐ	20 ՀԱՏ